



# ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Մեծայարգ Պրն. Արայիկ Յարութիւնեան՝  
Նախագահ Արցախի Հանրապետութեան,

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան,  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ իր 26 Շրջաններու 111 մասնաճիւղերուն անունով կը շնորհաւորէ Արցախի նախագահ Ձեր ընտրութիւնը՝ մաղթելով որ այդ ընտրութիւնը կը ծառայէ Հանրապետութեան զարգացման եւ Արցախ-Հայաստան-Սփիւռք եռամիասնութեան ամրապնդման:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պաշտօնապէս մէկուկէս տարիէ կը գործէ Արցախի մէջ, սակայն Արցախն ու արցախահայութիւնը տեւական ներկայութիւն եղած են ու կը մնան միութեան համահայկական աշխատանքներուն մէջ: Միութիւնը ամէն տարի կը մասնակցի Արցախի համար կատարուած նուիրահաւաքներուն, ձեռնարկներուն եւ Արցախի հայութեան բարօրութեան եւ բարեկեցութեան նպաստող ծրագիրներուն:

Մեր յոյսն ու ակնկալութիւնն է, որ Ձեր նախագահ ընտրութեամբ առաւել թափ ու ծաւալ կը ըստանան նորահաս սերունդներու մարմնակրթու-



թեան աշխատանքները եւ ազգային առողջ դաստիարականութեամբ, արի եւ տիպար քաղաքացիներու պատրաստութեան ջանքերը, որոնց լծուած է մեր միութիւնը՝ ինչպէս ամբողջ հայաշխարհի, նաեւ Արցախի մէջ: Այս առիթով ընդունեցէք մեր շարունակական գործակցութեան պատրաստակամութիւնը, ի շահ Հանրապետութեան վերելքին եւ ի խնդիր պետականութեան յառաջընթացին:

Նորանոր յաջողութիւններու բարեմաղթութիւններով, Ձեզի կը ցանկանք քաջառողջութիւն, անըսպառ եռանդ եւ արգասաբեր գործունէութիւն:

Պէլյութ, 18 Ապրիլ 2020

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Իր պատմութեան երկրորդ հարիւրամեակը թեւակոխած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Հ.Մ.Ը.Մ.ը, սկաւորական եւ մարզական միութիւն մը ըլլալու կողքին, իր հարազատ ժողովուրդին փազնապնէրով ապրող միութիւն մըն է: Ժողովուրդէն ծնած ժողովուրդին համար գործող այս միութիւնը «Միշտ պատրաստ» սկզբունքով կը հասնի հո՛ն, ուր կարիքը կը զգացուի օժանդակութեան:

Այսօր համայն մարդկութեան հեպ փազնապահար է աշխարհասփիւռ հայութիւնը: Քորոնա ժահրին վրանգը ամէնուրեք սրեղծած է ահազանգային կացութիւն: Այդ կացութիւնը շար աւելի ծանրակշիռ փարոզութիւն ունի ամիսներէ ի վեր փնտրեալ ստոր փազնապ դիմագրարաւող Լիբանանի մէջ, ուր ընկերային անապահով պայմաններու մէջ ապրող մեծաթիւ հայ ընտանիքներ կը դիմագրարաւեն իրենց փարրական կարիքները հոգա-



# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

լու, իրենց զոյութիւնն ու զոյաբեւումը ապահովելու լուրջ դժուարութիւն:

Մեծ է լիբանանահայութեան ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառոյցի կազմաւորման, զարգացման եւ հզօրացման մէջ: Լիբանանահայութիւնը եղած է ու կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր գործունէութեան անվերապահ աջակիցը: Այսօր, երբ պայմաններու բերումով լիբանանահայութիւնը ի՛նք աջակցութեան կարիքը ունի, փոխադարձութեան կարգով եւ երախտապարտութեան մօտեցումով, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը անհրաժեշտ կը զգայ իր մասնակցութիւնը բերել լիբանանահայութեան ցուերը ամոքելու աշխատանքին:

Առ այդ, Հ.Մ.Ը.Մ.ի անվերապահ նուիրարտի մը ազնի բարերարութեամբ,

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Ս. Չարկուան փոսին նախօրեակին, սննդեղէնի 1000 փութի կը յարկացնէ Քորոնայի Լիբանանի ճգնաժամային Շրջապին, որպէսզի յարմարագոյն չեւով զանոնք բաժնէ կարիքատուր հայ ընտանիքներու առիթը ընծայելով, որ անոնք չզրկուին փոսական սեղաններ ունենալու բնական իրաւունքէն եւ բերկրանքէն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան այս նախաձեռնութեան գործնականացման կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանը, որուն կամաւոր անդամները իրենց մասնակցութիւնը կը բերեն նպաստաբաշխումի աշխատանքին:

Պէլյութ, 7 Ապրիլ 2020

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## ԱՅՍ ԹԻԹԸ

«Մարզիկ»ի այս հրատարակությունը կը մեկտեղէ երկու թիւ: Թիւ 416-ը, որ հրատարակութեան պատրաստ էր, սակայն Քորոնայի պատճառով օրին անկարելի դարձաւ անոր տպագրութիւնն ու ցրումը, եւ թիւ 417-ը, որ կը ներկայացնէ ընթացիկ տարուան երկրորդ եռամսեակի նիւթերը:

Թիւը առայժմ կը հրատարակուի առցանց, յուսալով որ շուտով առիթը կը ստեղծուի զայն տպագիր ձեւով եւ ունենալու:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԺՈՒԱՐ քննութիւնը	2-3
Հ.Մ.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ	4-22
«Մարզիկ»ի 40-ամեակ Պատմութեան համար	23 24-32
Անդրադարձ	33-41
Յուշեր	42-43
Դէմքերու հետ	44-45
ՄԱՍՆԱԾԻՒԴ ՄԱՍՆԱԾԻՂ	46-71
ՄԵՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ	72-80



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւակեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մեան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Միլսահեան, Միզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Անուշիկ Փանոսեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիլպէնկեան, Արօ Մոսիկեան, Միլվա Սաղրեան, Վարդուկ Ֆրոնզլեան, Վարդան Բասմիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլէնեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաճանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաճանորդներու: Տարեկան քաճանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հատարման սակն է 5000 Լ.Ն.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասխանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Մեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Ս. www.Homenetmen.org

# ԴԺՈՒԱՐ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

**Բ** որդին նման, Հ.Մ.Ը.Մ. եւս անցնող ամիսներուն անցաւ Քորոնայի համաճարակի դժուար քննութենէն: Քորոնան յեղաշրջեց մարդկային կեանքը, ընկերային յարաբերութիւններն ու ազգային-միութենական առօրեան: Քորոնայէն վերջ կեանքը չի նմանիր Քորոնայէն առաջուան կեանքին:



Սկսած ենք ապրիլ առցանց քաղաքակրթութեան օրերը, մեր ետին ձգելով համաշխարհայնացումի ժամանակաշրջանը, որ աշխարհը վերածած էր մեծ գիտի, իսկ ժողովուրդները՝ գիտի բնակիչներուն: Այժմ գիտ գրեթէ գոյութիւն չունի: Բնակիչներ չկան: Աշխարհագրութիւնը իր տեղը զիջած է ցանցային աներեւոյթ ոտայնին, ուր բնակիչները Zoom-ի, WhatsApp-ի, Google meet-ի եւ կամ Microsoft team-ի սփորական քիւեր են: Կեանքը առաւելաբար կ'ընթանայ անոնց ճամբով, ժամանակի եւ միջավայրի անցեալէն տարբեր մօտեցումներով:

Կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ, ուր դիմացողը խելացին չէ, գօրաւորը չէ, այլ՝ ան որ կրնայ արագ ընտելանալ օրուան փոփոխութիւններուն: Ան, որ քսակի հարստութենէն անելի մտքի հասունութիւն ունի: Յարմարող է, ճկուն եւ ստեղծագործ:

Հ.Մ.Ը.Մ. անցաւ համաճարակի քննութենէն եւ անգամ մը եւս փաստեց, որ ան կը մնայ բոլոր ժամանակներու եւ պայմաններու մէջ գործելու ատակ միութիւնը, որովհետեւ ամէն հանգրուանի ան գիտ ինչպէ՛ս իր առաջնահերթութիւնները վերադասաւորել, կացութիւններու պատշաճիլ եւ ըստ այնմ շարքերը կենսունակ պահել:

Համաճարակի օրերուն, առաջնահերթութիւնները փոխուեցան, կարիքները՝ նոյնպէս: Հարկ եղաւ հասնիլ կարիքաւորին, ծերին եւ հիւանդին: Անհրաժեշտ դարձաւ տունը «բանտարկուած» անգործ մարդուն աջակիցը ըլլալ, իր բախտին լքուած անտէր ծերունիին կողքին կանգնիլ եւ խնամքի կարօտ պատանիին հոգեմտաւոր սնունդ հայթայթել:

Հ.Մ.Ը.Մ.ի «կամաւոր բանակ»ը հասաւ բոլորի՛ն. տեղ մը օժանդակութեան ծրարներով սննդեղէն բաշխեց ըն-

կերային անապահով ընտանիքներու, այլուր հաց եւ դեղ հասցուց ծերունիներու, մէկ այլ շրջան օրհնուած մասս բաժնեց եկեղեցի յաճախելու կարելիութենէն զրկուած հաւատացեալներու, իսկ քիչ մը ամէն տեղ դաստիարակչական առցանց ծրագիրներով պատանիները իրեն կապեց եւ ազգային-միութենական առողջ մթնոլորտի մէջ պահեց:

Քորոնան անակնկալ էր, ինչպէս բոլորին, նաեւ Հ.Մ.Ը.Մ.ին համար, որ անելի քան մէկ դարէ ի վեր իր աշխատանքները յառաջ կը տանէր սկաւառակաւ հաւաքավայրերու եւ մարզադաշտերու մէջ: Ժողովները կը կատարէր ակումբներու, իսկ ընկերային հանդիպումները՝ սրահներու մէջ: Համաճարակը անկարելի դարձուց այդ բոլորը, հրամայական դարձնելով փոխընտրանքներու որոնումը:

Լուծումը չուշացաւ, որովհետեւ սկաւառակաւ եւ մարզական միութիւն մը ըլլալով հանդերձ, Հ.Մ.Ը.Մ. հարուստ էր արդի արհեստագիտութեան եւ հաղորդակցութեան միջոցներուն տիրապետող երիտասարդ տարրերով: Հ.Մ.Ը.Մ. ունէր համահայկական իր կառոյցին պատշաճող արհեստագիտական պատասխանատու մարմին, որ դեռ տասնամեակ մը առաջ, ռազմավարական իր ծրագիրին մէջ յատուկ բաժին նախատեսած էր առցանց աշխատանքներու եւ, այնուհետեւ, 2014-ին, գործակցութեան յուշագիր մը կնքած էր համաշխարհային «Կուկըլ» ընկերութեան հետ՝ արհեստագիտական անոր ծառայութիւններէն օգտուելու համար:

Այնպէս որ, արհեստագիտական «զէնքերը» պատրաստ էին: Պատրաստ էին նաեւ զանոնք օգտագործողները: Անակնկալի գործօն չէր մնացած: Ահա թէ ինչո՛ւ, համաճարակի առաջին օրէն Հ.Մ.Ը.Մ. շատ դիւրին եւ արագ կարողացաւ իր գործունէութիւնը փոխադրել առցանց հարթակ, պահելով ոգին՝ փոխելով ձեւն ու միջոցները:

Կը բաւէ արագ ակնարկ մը նետել միութեան անցնող ամիսներու առցանց գործունէութեան զանազան երեսներուն վրայ, հաստատելու համար, որ համաճարակի նախազգուշական աշխատանքներէն մինչեւ հետեւանքներու դէմ պայքարը, Ապրիլեան եւ Մայիսեան ոգեկոչում-



ներէն մինչեւ Շուշիի ազատագրման տօնախմբութիւնները, մայրերու եւ հայրերու օրուան նշումները, եւ դեռ՝ ընկերային տեսակաւոր առցանց ծրագիրները ինչքան ուշագրաւ եւ կարեւոր նորութիւններ բերին միութեան: Ինչքան խանդավառութիւն ստեղծեցին իրենց շուրջ:

Ու զարմանալի չէ, որ ընկերային հեռաւորութեան օրերուն, ժամանակի եւ տարածութեան բոլոր խոչընդոտները յաղթահարելով, Հ.Մ.Ը.Մ.ի առցանց աշխատանքները յաջողեցան իրարու մօտեցնել աշխարհի չորս ծագերուն ապրող քոյրերն ու եղբայրները, շնորհիւ անբացատրելի այն կապուածութեան, ջերմութեան եւ հարազատութեան, որոնցմով ամերիկահայն ու սուրիահայը, ֆրանսահայն ու լիբանանահայը, աստրալանահայն ու հայրենի հայը կը դառնան անբակտելի մէկ ամբողջութիւն:

Կը դառնան մէկ եւ միեւնոյն նպատակի նուիրեալներ, գիտակից՝ իրենց կոչումին եւ հաւատարիմ՝ նախորդներու առաքելութեան, մկրտուած Հ.Մ.Ը.Մ.ի զաղափարական նոյն աւագանին մէջ եւ կնքուած ազգին ու հայրենիքին ծառայութեան միեւնոյն դրոշմով:

Այս արդէն Հ.Մ.Ը.Մ.ի բովանդակ պատմութեան մեծագոյն դասն է. իրաքանչիւր քննութենէ դուրս զալ նոր փորձառութեամբ եւ նոր յաջողութեամբ, քիչ մը աւելի զօրացած եւ շատ աւելի հայացած:

Քորոնայի քննութեան արդիւնքն ալ տարբեր չէր կրնար ըլլալ:

Ու չեղա՛ւ:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՄԵԱՃԻՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արուսեան (Արուսեան), «Հ. Առուարամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Քրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վեպի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Դ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Սրեփիանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չաիլէ, Թրիփոլի, Պ. Համուր, Այնճար, Դիմի, Անթիլիաս, Ժրլէյրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաքաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղրապ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդա:** Ալմելօ, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Մյունխի. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթելիա. **Պուլիարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Էյմպրիս, Մէնք Գաքքիկ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Բրանսիսքօ, «Սասուն» (Ֆրեզնօ), Մոնթրէալլօ, «Ազատամարտ» (Փասադինա), «Արարատ» (Կրեմլէյ), Օրէնճ Բաունթի, «Սասիս» (Սան Ֆեռնանտօ), «Սեւան» (Սան Տիէթօ), «Արազ» (Ինլընդ Էմիլայո), «Անի» (Սանթա Գլարա), «Շանթ» (Քրեմլէթա Հոլիոյ), «Սիփան» (Պրոպէնք), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Բրիք) «Չալախ» (Նորթ Հոլիվուդ), «Լոռի» (Սաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Բլարիթա), «Հրաշք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթօ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ, Մերիմար Հոլիոյ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորդոնյա, Մոնթեւիդէօ. **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիդնի), «Արաքս» (Մելբուռն), «Կամք» (Սիդնի), «Նաւասարդ» (Սիդնի), «Արարատ» (Սիդնի).

ՔՈՐՈՆԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԸՆԴԱՌԱՋ՝

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐՁԱՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ

**Ք**որոնայի համաճարակը յեղաշրջեց մարդկության կեանքը: Փոխուեցաւ մարդկային յարաբերութիւններու ձեւը: Առցանց հաղորդակցութիւնը ինքզինք պարտադրեց բոլորին:

Հ.Մ.Ը.Մ. եւս անմասն չմնաց նոր իրականութեան նոր պարտադրանքներէն եւ ծաւալեց առցանց գործունէութիւն՝ տեսաժողովներու ճամբով եւ ընկերային հաղորդակցութեան միջոցներու առաւելագոյն օգտագործումով:

Այս իմաստով, շրջաններու հետ կապերը պահպանելու եւ միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերուն իրավիճակին մօտէն ծանօթանալու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ունեցաւ շարք մը տեսաժողովներ, որոնց ամփոփումը կը ներկայացնենք ստորեւ:

### ԵՒՐՈՊԱՅԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ուրբաթ, 10 Ապրիլ 2020-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հրաւերով տեղի ունեցաւ միութեան Եւ-




րոպայի շրջաններու ներկայացուցիչներու տեսաժողովը՝ քննարկելու համար Քորոնայի տագնապի օրերուն շրջաններուն իրավիճակը եւ ստեղծուած նոր պայմաններուն յարմարող առցանց գործունէութեան ծաւալման անհրաժեշտութիւնը:

Ժողովին արծարծուեցան Քորոնայի տագնապի օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ աշխարհասփիւռ հայութեան ցուցաբերուած զանազան ձեւի օժանդակութիւնները:

Տեսաժողովին մասնակցեցան Եւրոպայի 12 շրջաններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ղիւանի անդամներ եւ Կեդրոնական Վարչութեան կարգ մը անդամներ:

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՄԱՔԱՄԱՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Տեսաժողովներու շարքին երկրորդը՝ միութեան ամերիկեան ցամաքամասի ներկայացուցիչներուն հետ, տեղի ունեցաւ Շաբաթ, 18 Ապրիլ 2020-ի երեկոյեան, մասնակցութեամբ Կեդրոնական Վարչութեան ղիւանի անդամներու, Կեդրոնական Վարչութեան կարգ մը եղ-



# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը խոր մտահոգությամբ կը հեպելի Քորոնա ժահրին պարճառած լուրջ քազնապին:**

Տազնապը ունի համաշխարհային քարոդություն առողջապահական, քնկերական, ընկերային եւ հոգեքանական ծանրակշիռ հեպելանքներով: Պեպություններ, միջազգային եւ րեդական կազմակերպություններ ժահրին քարածման առաջքը առնելու համար, իրաքանչիւրը իր պարասխանապուրության սահմաններուն մէջ, անիրաժեշտ քայլերու կը դիմէ հանրությունը ապահով ու անվնաս պահելու համար:

Աշխարհապիտը իր կառոյցին քերումով, Հ.Մ.Ը.Մ. եւս կը կրէ քազնապին քոլոր հեպելանքները: Միութեան 111 մասնաճիւղերուն ընթացիկ աշխարանքները դադրած են արդէն եւ Շրջանային թէ Մեկուսի Վարչություններ, Կեդրոնական Վարչութեան ցուցմունքով, լծուած են արքակարգ իրավիճակի յարուկ գործունեութեան:

Արդարեւ, քազնապին սկզբնական օրերէն Կեդրոնական Վարչությունը

Ա.- Միութեան 26 շրջաններէն պահանջեց քոլոր հարները եւ սկաուրական-մարզական աշխարանքները փոխարինել դասարիարակչական առցանց ծրագիրներով՝ կարելիությունը սրեղծելով որ նորահաս սերունդը, սկուներներ եւ հաւաքավայրերէ հեռու մնալով հանդերձ, հեռու չմնայ ազգային-միութենական կեանքէ եւ մքնոլորքէ:

Բ.- Հ.Մ.Ը.Մ.ի մարմիններուն թելադրեց քարոզչական առցանց աշխարանքի ձեռնարկել իրենց շրջան-

ներու անդամները, համակիրներն ու ժողովուրդը րեդեակ պահելու համայ Քորոնա ժահրին վրանզներուն եւ նախազգուշական միջոցներուն մասին:

Գ.- Որոշեց ժողովական կեանքը ըստ կարելիութեան շարունակել արդի արհեստագիպության ընչեռած միջոցներով եւ հադորդակցութեան կարելի քոլոր միջոցներով՝ անխապիս պահելով մարմիններ-անդամներ եւ մարմիններ-Կեդրոնական Վարչություն կապերը:

Դ.- Միութեան շրջաններուն թելադրեց իրենց քովանդակ կարելիությունները դնել ազգային մարմիններու քրամադրութեան քակ, կամաւոր ծառայութեան սկզբունքով օժանդակելու համար քազնապահար հայրդիներու կարիքներուն

Արքակարգ իրավիճակի ներկայ պայմաններուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը կը յուսայ յիշեալ քայլերով իր մասնակցությունը քերել մեր օրերու համաշխարհային մեժագոյն քազնապին դիմագրաման, գործնական ու անմիջական փաստը քալով մարդկային մօրեցումի, քաղաքացիական գիպակցութեան եւ ազգային պարասխանապուրութեան այն արժէքներուն, որոնք հարագար արքայայարիչները կը հանդիսանան միութեան առաքելութեան եւ «Բարչրացի-քարչրացուր» նշանաքանին:

25 Մարք 2020

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

բայրներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներու:

Ժողովին արժարժուեցան Քորոնայի համաճարակի օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի ծաւալած աշխատանքները եւ Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակի առցանց ոգեկոչման նախապատրաստութիւնները:

**ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**  
Միութեան աշխարհապիտը շրջաններու պատասխանատու մարմիններու





ները եւ Ապրիլ 24-ին առցանց նախաձեռնութիւններով հանդէս գալու անհրաժեշտութիւնը:

**ԵՒՐԱՍԻՈՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Շաբաթ, 25 Ապրիլ 2020-ի երեկոյեան տեսաժողով մըն ալ գումարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Եւրասիոյ տարածաշրջանի վարչութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Տեսաժողովին մասնակցեցան Կեդրոնական Վարչութեան ղեկանի անդամները, Կեդրոնական Վարչութեան կարգ մը եղբայրներ, Համաշխարհային Սկաուտական Շարժման Եւրասիոյ տարածաշրջանի կոմիտէի նախագահ եղբարատ Եսայեան, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Արցախի եւ Մոսկուայի վարչութիւններուն ներկայացուցիչները:

ներկայացուցիչներուն հետ իր տեսաժողովները շարունակելով, Չորեքշաբթի, 22 Ապրիլ 2020-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը ժողով մըն ալ գումարեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի, Սուրիոյ, Ամմանի, Գահիրէի, Ադեքսանդրիոյ, Քուէյթի եւ Պաղտատի Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններուն ներկայացուցիչներուն հետ: Տեսաժողովին մասնակցեցան Կեդրոնական Վարչութեան ղեկանի անդամները եւ Սուրիոյ ներկայացուցիչը:

Ինչպէս նախորդ տեսաժողովներուն, այս ժողովին եւս արծարծուեցաւ Քորոնայի համաճարակի օրերուն միութեան աշխատանքները ամէն գնով շարունակելու կարելիութիւն-

ներկայացուցիչները:

Տեսաժողովին հիմնական նիւթը Քորոնա ժահրին պատճառով Ֆիզիքական հաւաքներու առկախումը եւ անոր փոխարէն առցանց աշխատանքներու փորձառութիւնն էր: Ժողովին արծարծուեցաւ ներկայ պայմաններուն մէջ Հ.Մ.Ը.Մ-ի օժանդակութիւնը հայ կարիքաւոր ընտանիքներու, մանաւանդ Հայաստանի սահմանամերձ գիւղերուն մէջ:

Կեդրոնական Վարչութիւնը իր գոհունակութիւնը փոխանցեց Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակին առիթով

**ՆՊԱՍՏԱԲԱՇԽՈՒՄ**

2020-ի Չատկուան տօնին նախօրեակին, 8, 9 եւ 10 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի նպաստաբաշխումի աշխատանք կատարեց Լիբանանի հայահոծ շրջաններուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ական ազնիւ բարերարի մը նուիրատուութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Լիբանանի Քորոնայի ձգնաժամային Շտապին հետ գործակցաբար, սննդեղէնի 1000 տուփեր բաժնուեցան ընկերային անապահով ընտանիքներու՝ Չատկուան տօնական սեղաններ ունենալու իրաւունքէն եւ ուրախութենէն չզրկելու համար զանոնք:

Այս աշխատանքին իրականացման հա-



մար, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանէն կամաւորներ հաւաքուեցան Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի սրահը, ղիմաւորեցին բեռնակառքերով ժամանած տուփերը, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Շտապի գրութիւնները փակցուցին անոնց վրայ, ապա առանձին ինքնաշարժներով զանոնք բաժնեցին Շտապին կողմէ ճշգրտած ընտանիքներու, որոնք նախորդող շաբաթներուն





յիշեալ շրջաններուն կատարած գնահատելի աշխատանքին համար, նշելով որ միութեան «Կամաւոր բանակը» իր պարտականութիւնը կատարեց արժանաւոր կերպով, հայ իրականութեան եւ միջազգային ընտանիքին ցոյց տալով, որ Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ մարզական եւ սկստական կազմակերպութիւն մը չէ, այլ՝ հայ ժողովուրդի տենչերով ապրող եւ անոր հաւաքական նպատակներուն ծառայող միութիւն մըն է:

**ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԻՖԼԻՍԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԷՆՏ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը շրջաններու ներկայացուցիչներուն հետ իր տեսաժողովները եզրափակելով, Շաբաթ, 2 Մայիս 2020-ին, երկու տեսաժողովներ գումարեց Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ Թիֆլիսի Մեկուսի Վարչութեան ներկայացուցիչին հետ:

Տեսաժողովին մասնակցեցան Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամները, Կեդրոնական Վարչութեան կարգ մը եղբայրներ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը եւ Թիֆլիսի Մեկուսի Վարչութեան ներկայացուցիչը:

Տեսաժողովին հիմնական նիւթը Քորոնա ժահրին պատճառով յառաջացած կացութիւնն էր եւ միութեան կողմէն առցանց աշխատանքներուն ընթացքը: Ժողովին արծարծուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ եւ Թիֆլիսի շրջաններու դիմագրաւած դժուարութիւնները եւ ապագայի ծրագիրները:



նման օժանդակութիւններ չէին ստացած:

Նպաստաբաշխումի աշխատանքները ընդգրկեցին նաեւ Այնճարի եւ Զահլէի շրջանները:



**ՔՈՐՈՆԱՅԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՆ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՉՈՒՅԵՐԸ**



Քորոնայի համաճարակը շինայեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը: Բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ Մարտէյի, Վեսերոսի (Շուէր), Նիւ Եորքի մէջ եւ այլուր վարակուեցան ժահրով, իսկ եղբայր մը եւ քոյր մը զոհը գացին անոր:

Արդարեւ, 1 Ապրիլ 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սքոքհոլմի մասնաճիւղը կորսնցուց իր երէց անդամներէն եղբ. Չոհրայ Չուլիանան:

Եղբոր յուղարկատրութիւնն ու քաղուճը կապարտուեցան առանց ժողովրդային ներկայութեան: Իսկ փոխան ժողկեպասի կապարտած նուիրարութիւնները փոխանցուեցան աղքատախնամ միութիւններու:

Երկու ամիս ետք, 31 Մայիսին, այս անգամ Երեւանի մէջ, Քորոնա ժահրէն մահացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հասարակի առաջին պարասխանատու մարմնի անդամ, երկար փարիներ սկսուի խմբապետ քոյր Ռուբինա Վազարեանը:

# ՔՈՐՈՆԱՆ ԵՒ ԱՌՑԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ...

Քորոնայի համաճարակը փոխեց Հ.Մ.Ը.Մ.ի առօրեան եւ միութեան շրջաններուն պարտաւորեցուց մէկ կողմէ հարազատ ժողովուրդի կարիքներուն ընդառաջել, իսկ միւս կողմէ միութենական գործունէութիւնը առցանց կատարել:

Ստորեւ տրուած նկարները զաղափար մը կուտան իրագործուած աշխատանքներուն մասին, իբրեւ փաստ ու վկայութիւն՝ արտակարգ պայմաններու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ունեցած աշխոյժ գործունէութեան:

## ՆՊԱՍՏԱԲԱՇԽՈՒՄ ԼԻՔԱՆԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՊՈՍԹԸՆԻ ՄԷՉ



# ՕՐՀՆՈՒԱԾ ՄԱՍԻ ԲԱՇԽՈՒՄ ԱԼՄԵԼՈՅԻ ԵՒ ԱՌՆՀԵՄԻ ՄԷՉ



# ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԻՆԻԽԻ ՄԷՉ



## ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐՈՒ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՏԱՅԻ, ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՉ



### HOMENETMEN OF NEW JERSEY

The Homenetmen of New Jersey Executive Committee would like to thank all health care workers for being on the frontlines 24/7 in our worldwide fight against COVID-19.

Our prayers are with you. Stay safe and healthy.



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ  
ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՒՆ



ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿՊՈՒՋՆԵՔ ՅԱՅՏՆԵԼ ՄԵՐ ԲՈՅՐԵՐՈՒՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ, ՈՐՈՒՔ ԿԸ ԳՏՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԳԾԻՆ ՎՐԱՅ



Հ.Մ.Բ.Մ. Գլենդեյլի Արարատ Մասնաժողով  
Homenetmen Glendale Ararat Chapter



THANK YOU DOCTORS, NURSES AND FIRST RESPONDERS

As the nation deals with the COVID-19 pandemic, Homenetmen Glendale Ararat Chapter is continuing to follow the "Safer at Home" guidelines put forth by the local, state and federal authorities. As announced earlier, we have suspended all of our activities, including athletics, scouting, cultural and fundraising events. Our members, supporters, volunteers and staffers continue to stay at home and tend to their and their families' health and wellbeing, even as a number of our committees have begun to meet remotely.

Being a service-oriented organization with a deep sense of duty towards the community that we call home, Homenetmen Glendale Ararat Chapter has reached out to the Glendale City Council and has made the use of our facilities available to local, state and federal authorities during these difficult times. We feel that it is the least that we can do in an attempt to perhaps lessen the burden on those who are battling this outbreak either as front-line responders, caregivers, victims or those whose lives have been disrupted.


Homenetmen Glendale Ararat Chapter  
Executive Board



## ՀԱԿԱՆԵԽՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՉ



# ՄՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՌԿԱԽՈՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ




**ԿԱՐԻՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆ**

Կը փափախիմք տեղեկացնել մեր անդամները եւ համակիրները, թէ COVID-19 Քորոնա ժահրի կապակցութեամբ վերջին զարգացումներու լուսին տակ, Վարչապիւրնը մայրազգուշացման եւ կամխարգիրման Բարձր կ'առնէ, որոնց կարգ ին՝ ցնոր տնօրինութիւն, բոլոր ձեռնարկներու յետաձգումը:

Քորոնա ժահրը սահմանափակելու ուղղմամբ կարգուրեւան իրրել միջոց, ինչպէս նաեւ՝ կ'իջրտի շամրայետութեան կառավարութեան որոշումով,  
**Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ն.Մ. ԱՄԻՍՄԱՐԸ ՓՈՆԻ ԳՐԻՏԻ ՄՂԱՅ**  
 յտաջիկայ 4 շաբթուան համար:

Ճնորհակալութիւն մեր հասկացողութեան եւ աջակցութեան համար:

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ն.Մ. Վարչութիւն  
 15/03/2020



**Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՍԱԼԵՄ**  
**HOMENETMEN JERUSALEM**  
 Գրաւ. EST. 1935

Ըրաբերական թիւ 5 - Circular letter 5  
 Երուսաղէմ, 20 Մարտ 2020 - Jerusalem, March 20<sup>th</sup> 2020


Միրելի քոյրեր և եղբայրներ,







Յիմտեով երկրի կառավարութեան յայտարարութեան մրայ ինչ կը վերաբերի Քորոնա ժահրի ստեղծած իսմաշխարային տագնապի մասին և նոյն ժահրի տարածումը ետխազգուշանալու անշուրջանք Վարչութիւնս որոշում կայացուցած է ճանճեղնելու բոլոր մարզական և սկաուտական աշխատանքները և գործունէութիւնը մինչեւ ցնոր տնօրինում:

Dear members,

Bearing in mind the latest developments as well as the Government's instructions concerning the Coronavirus and in order to take necessary precautions to stop its outbreak, we hereby suspend all sports and scout activities, programs and events till further notice.

## ՏՈՒՆԸ ՄՆԱԼՈՒ ԱՐՇԱՒ ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՑԱԽ ԵՒ ԹԻՖԼԻՍ





# ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԱՐՇԱՒ՝ ՍՈՒՐԻԱ, Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-ի Դասակարգի Մասնաճյուղ

Պսակաձեռն ժահրէն իտապափելու Համար Տուն Մտնել Ետք

Կանանչեղեններ լաւ լուայ

Ռիել տեղ մի՛ դակար

Բանալիներ եւ հեռափոստ հաճախե՛ստ՝ այցելով

Կօշիկ հան՛ն՝ դրան առջեւ

Չափուտները փոխ՛է

Ձեռքերդ օճառով լուայ

## ՀՄԸՄ Արցախի վարչության հորդորը

### Սոցիալական հեռավորություն

**Ի՛նչ է նշանակում և ինչու՞ է կարևոր**

Սոցիալական հեռավորություն պահպանելով նվազեցնում ենք մարդկանց միջև հնարավոր սերտ շփումը՝ դանդաղեցնելով վարակի տարածումը: Սոցիալական հեռավորության ապահովմանը նպաստում են հավաքույթների արգելումը, գիտական, մշակութային և ժամանցային միջոցառումների ասիմանափակումներն ու չեղարկումները:

**Խուսափե՛ք**

Հավաքույթներից  
Թատրոն, կինո այցելուց  
Սպորտային միջոցառումներից  
Մարդաշատ խանութներից  
Կուտորի կենտրոններից  
Բարերից և ռեստորաններից  
Ռշ կարևոր ճամփորդություններից

**Չգրն եղեք**

Մթերային խանութ գնալիս  
Դեղորայք ստանալիս  
Կարևոր ճամփորդության մեկնելիս  
Մուտն առաքելիս կամ ստանալիս  
Հանրային վայրեր այցելելիս

**Ապահով է**

Չքոսնել  
Բայադաշտի գնալ  
Այգուռ աշխատել, խաղալ  
Սենյակից հավաքել  
Կերակուր պատրաստել  
Ընտանեկան խաղեր խաղալ  
Գիրք կարդալ  
Երաժշտություն լսել  
Ընկերներին և տարեց հարևանին զանգահարել կամ գրել

**ՀՄԸՄ Արցախի վարչություն**

### Մտացույց նվիրատվություն

Դասակարգի է, թե՛ բն, նպաստներ է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել էլ կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

**1**

### Սննդի զանրույուններ

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

**2**

### Կիսվեք

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

**3**

## Պահպանել սոցիալական հեռավորությունը

ՄԱՍՆ ՏԵՍԻ  
«Ըստան Պսակ»  
Սահարան

Դու պատասխանատու ես քո առողջության համար:

## ԵՐԿԻՂ - 19

### Ինչպե՛ս է տարածվում կորոնավիրուսը

Երկուսն էլ պարզապես զանազակ են Ի սեփական: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

### Զեզ և ձեր սիրելիների պաշտպանելու եղանակները

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

### Օգույություն

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

### Սթրեսի հաղթահարումը համավարակի ժամանակ



Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

### Տանից դուրս գալիս պե՛տք է կրել դիմակ

**ԴՊՍԱԿՆԵՐ ԴԵ՛ՏԵ Ե ԿՐԵԼ**

Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները: Կարգադրել է Ի հասարակ առ անհատները:

## ԱՌՑԱՆՑ ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔՆԵՐ



**ZUCUի Պրոյեկտի Արձանագրություն**

**Վոյանց շաբաթ**

- 1- Մոկի՝ Պտուղի ազգան
- 2- Պզտիկ Մրծովի՝ Վոյանց հանդիպում՝ Մարմնի մաքրություն կարեւորութիւնը
- 3- Մեծ Մրծովի՝ Վոյանց հանդիպում՝ Ինֆանեկուսացումը եւ մենք
- 4- Գայլիկ՝ Վոյանց հանդիպումներ
- 5- Արեւոյ՝ Վերաշնչակում եւ կենսոլորտային կայունութիւն
- 6- Մրի՝ Ձարգայանան մրցում
- 7- Պարանոտի՝ Գուշակ՝ ֆիլմի անունը
- 8- Երեյ՝ Միասին ուժեղ ենք, ջանձուռան տկար



**La Posta de Ararat**  
**Actividades Scout Virtuales**  
 #NosQuedamosEncasa #NosCuidamosEntreTodos



# ԱՌՑԱՆՑ ԽԱՂԵՐ

**Խաչարա**  
Հետախուզական նշաններ

1- 2- 3- 4- 5- 6-

Քիւ 4

Scouts Of Homenetmen Antelias

**Let's Doodle Together!**

- Scouting doodle for every age
- Available for pickup and delivery

Order via Whatsapp: 71-769080 or 03-452519

Size: 84\*60 cm  
Price: 15 000 LBP

Homenetmen Western US Region presents E-Sports Tournament featuring: **FIFA20**

Monteh Shahverdian Ararat vs Arvin Zakarian Ararat  
Game 21 May 22, 2020 8:00 p.m. vs Game 22 May 22, 2020 8:30 p.m.

Sevag Berberian Massis vs Emanuel Shahmoradian Ararat  
Game 23 May 22, 2020 9:15 p.m.

**Champion**  
Semi-Finals and Final Tonight, May 22, 2020 from 8:00 p.m.

Homenetmen Western US Region presents E-Sports Tournament featuring: **FIFA20**

Shahe Thomas LA vs Alek Ghazanian Shant  
Game 58 May 22, 2020 8:00 p.m. vs Game 59 May 22, 2020 8:30 p.m.

Alex Aywazian Shant vs Sevag Stepanyan Ararat  
Game 60 May 22, 2020 9:15 p.m.

**Champion**  
Semi-Finals and Final Tonight, May 22, 2020 from 8:00 p.m.

Հ.Մ.Ը.Մ-ի Գինեղի Արարատ Մասնաճյուղ  
**Homenetmen Glendale Ararat Chapter**  
Programs Division presents

**VIRTUAL SEMINAR**

by Armineh Gourgian, M.S.  
Licensed Marriage and Family Therapist (MFC 51056)

Tuesday, May 12 and May 26, 2020  
From 7 pm to 9 pm

**How to Adjust to Recent Changes at Home!**

You are not alone!  
The world is dealing with this virus as we go.  
We are home worried about our health and our family's health.  
We are home interacting with our spouses and children 24/7. Not easy!  
We miss so many things in our lives.  
Let's talk about what is going on and learn how to adjust to many new changes.

Register online!  
find out more information on Homenetmen Glendale Ararat Facebook

Հ.Մ.Ը.Մ. Լուսոյ Մասնաճյուղի  
Մերեկի բարեկեցիկ և երջանակալի  
Այս շրջանին իրար հետ պիտի նախընտրուք  
Գլխավորումը: Ուր պիտի ներկայանանք

Հարց Գառառույթ  
Գլխավորներ  
Խաղեր  
Ներքին և Կրթիչ

Մեր  
Մասին

ՇԱՄԱՏԻ ՄՐՈՒՆԻՅՈՒ  
ШАХМАТНЫЙ ТУРНИР

Հայ արհմեր ենք զուարթ

Ամբողջացրե՛ք իրը

Կեցցե՛ք մարմնի՝ վաստե՛լալօ՛ւ  
Հ.Մ.Ը.Մ-ի՝ հաւիտեան՝ վազե՛լ  
Կեցցե՛ք ազունք՝ Գայիկներ  
հաւիտեան՝ խաղալ՝ կեցցե՛ք  
Արծուկներ՝ հաւիտեան:

Հայ արհմեր ենք զուարթ  
1 \_\_\_\_\_ Ու հայերն կը  
խօսիլը լեզուն 2 \_\_\_\_\_  
Հ.Մ.Ը.Մ. ապրի անսասան  
Ձո քարաւոր անցեալովը  
3 \_\_\_\_\_ 4 \_\_\_\_\_  
Հին կը գտնուի՛ նաեւ թե՛նիս  
5 \_\_\_\_\_ Լոյսով  
6 \_\_\_\_\_ ու 7 \_\_\_\_\_  
Նաեւ վիճակով Հ.Մ.Ը.Մ.  
ապրի անսասան Ձո  
քարաւոր անցեալովը  
8 \_\_\_\_\_ 9 \_\_\_\_\_  
10 \_\_\_\_\_ 11 \_\_\_\_\_  
խելացի եղե՛ք Հ.Մ.Ը.Մ-ի  
12 \_\_\_\_\_  
հաւախմբուցե՛ք Հ.Մ.Ը.Մ.  
ապրի անսասան Ձո  
քարաւոր անցեալովը  
13 \_\_\_\_\_ 14 \_\_\_\_\_ 5

# ԱՌՑԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ...

Հ.Մ.Բ.Մ.Ն Լիբանանի Շրջանային խմբապետություն

**ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՅ ԴԱՏԻ ՆԵՐԿԱՅ**  
**ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ**

Կը ներկայացնե՛  
**եղբ. Սեակ Պելեան**

Ռոբբար, 24 Ապրիլ 2020,  
երեկոյեան ժամը 9:00-ին

**LIVE**

@scoutsofhomenetmenlebanon

**ՇՈՒԵՆ**  
**ՍՆԽՈՒՄ ԻՆՉՈՒՄ**  
**ՏԵՍՏՆԵՐ ՈՒ ՍԿՐԻՆՅԱՆԵՐ**

Մրցութային Հարցազրույցներ  
Մրցութային Հարցազրույցներ  
Խմբագր. ՏՈՒՐՈՒՎԱԾՈՒՄ, ՇՈՒՎԱԾՈՒՄ  
ՍԵՆՏԵՐԻ ՉԳՐՈՒՄ ԶԵՆՈՒՄ

Երեքշաբթի 12 Մայիս  
ժամը 6:30

**LIVE**

@homenetmenbh

ԿԱՏԱՎԱԾՈՒԹՅԱՆ  
Հ.Մ.Բ.Մ.Ն ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԵՆՏԵՐԻ ԿԱՏԱՎԱԾՈՒԹՅԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՔԱՆՏԱՆՈՒԹՅԱՆ

**ԱՆԵՏԻՍ ԱՎԱՐՈՆԵԱՆ**

ԳԻՐԱԿԱՆ ԱՆՎՈՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ  
(1866-1948)

ՇԵՐՏԻՆ 27 ՅՈՒՆԻՍ 2020  
ՉԱՍԸ 16:00-ԻՆ

ՏԵՐԻՊՏԻՆ ԱՆՎՈՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ  
ՄԱՐԿ ԸՄԲԻՐՈՒՄ ԵՎ

**ԻՆՉ ԿՈ խորհրդանշե՛ Մայիս 1-ը:**

- Մայիս 1-ը կը նշուի նաեւ գարունը դիմադրելով: Մայիս բառը եկած է յոյն պտղաբերութեան չաստուածուհիի "Մայա" անունէն:
- Մայիս 1-ը իբրեւ աշխատանքներու տոն առաջին անգամ նշուած է 1890-ին, Պեյճիբայի, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ:
- Աշխատանքներու օրը Մայիս 1-ին կը յիշուի 142 երկիրներու մէջ:
- Մայիս 1-ը արդար աշխատանքի եւ աշխատանքներու իրաւունքներու արդարացիութեան տոնն է:
- Միջին աշխատանքի շաբաթը պէտք չէ 48 ժամը անցնի
- Բոլոր աշխատողները իրատեղի ունին հանգստաւտ պայմաններու եւ արդար աշխատակարծի
- Կիները պէտք է ունենան հաւասար աշխատանքի պայմաններ, ինչպէս՝ տղամարդիկ, եւ պէտք է վարձատրուին հաւասարապէս

Տեղի կ'ունենան նաեւ Մայիսեան գարնանային փառատօներ, որոնք մեզի հասած են հին ժամանակներէ:

Վերջապէս, կ'ունենա՞ն շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք նոյնիսկ Մայիս 1-ին կը շարունակեն աշխատել, ժողովուրդին օգտակար դառնալու համար:

www.yourwebsite.com Հ.Մ.Բ.Մ. Պելլուս

Հովանաւորութեամբ ՀԱՐԱՍԻ Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան

Կազմակերպութեամբ ՀԱՐԱՍԻ Անթիլիասի մասնաճիւղի սկաւտական խորհուրդին եւ խմբապետական կազմին

**ԱՆԵՏՈՐԵԱՑ ՀԱՅ ԴԱՏԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԿԻՃԱԿԸ**

Կը բանախօսե՛  
**Պետո Տեմիրճեան**

Զրոյցշաբթի, 15 Ապրիլ 2020-ին, երեկոյեան ժամը 7:00-ին,  
Facebook-ի ուղիղ ելեւերով (Live):

Scouts of Homenetmen Antelias\_ՀԱՐԱՍԻ Անթիլիասի Սկաւտներ

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՅՈՎ  
**Արդիւնքներ**

100% ճիշդ պատասխանողներ որոնց միակ տարբերութիւնը եղաւ ժամանակը

Կիրո Սերայտարեան  
Ճէսի Բոյլումճեան  
Յուլիան Բաբայան  
Մարման Նաճարեան  
Ատիա Արվազեան

33274 կէտ  
33469 կէտ  
32611 կէտ  
31134 կէտ

Ռուպինա փաղանգ Անթիլիասի մասնաճիւղ  
Վիգն Զարպետեան փաղանգ Պուրճ Նամուտի մասնաճիւղ  
Զարենեան փաղանգ Պելլուսի մասնաճիւղ  
Արի խումբ Պուրճ Նամուտի մասնաճիւղ

մրցումին մասնակցեցան 200 Արի, Արենուշ, Երկ Եւ Պարմանուհիներ

@scoutsofhomenetmenlebanon

**NAVASARTIAN GAMES**  
**VIRTUAL SKILLS CHALLENGE**

Take a video of you performing a skill and send to:  
prc.eusa@homenetmen.org or direct message to  
Homenetmen's Instagram account @homenetmen.east

**Rules:**

- 1) Must be a Homenetmen Eastern Region USA member
- 2) State your name, your chapter, and the skill you are going to perform
- 3) Must wear a Homenetmen t-shirt/jersey of your local chapter in the video
- 4) Videos must be less than 1 minute

Videos will be posted online and voted upon to declare a winner

Prizes for 1<sup>st</sup>, 2<sup>nd</sup>, and 3<sup>rd</sup> place finishers

Deadline for submissions: July 5th

# ...ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐ

**SEMANA DE ENCUENTROS EN VIVO EN HOMENETMEN**

AGENDALO

**MAYO**

DOM	LUN	MAR	MIÉ	JUE	VIÉ	SÁB
					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31						

**13/5** 19:00  
Cocina en VIVO desde Uruguay con **Nicole Barbarian** en el Instagram @homenetmen.bsas

**14/5** 19:00  
GYM en VIVO con la profe **Nancy Bessallan** en el Instagram @homenetmen.bsas

**16/5** 19:00  
Experiencia **ARARAT** en VIVO con **Betty Arslanian, Melu Seferian, Mica Nalbandian y Romi Hovhannesian** en el Instagram @homenetmensudamerica

VIERNES 1 DE MAYO 22:30

**HOMENETMEN SUDAMÉRICA**

# HAY KEFF

VIVO EN INSTAGRAM @HOMENETMENSUDAMERICA  
DJ ALAN KEDE

## ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ



# ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՐՋԱՆԷ ՇՐՋԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ «ՀԱՅ ՄԿԱՌՈՒՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ԵՇՈՒՄ


**LIVE** Հայ Սկաուտի Օր Q&A

**Բագրատ Եսայան**  
Համաշխարհային Սկաուտական շարժման եվրասիա տարածաշրջանի կոմիտեի նախագահ


**Սանդրա Վարդանյան**  
Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպության (ՀԱՍԸ - ՀԱՍԿ)-ի ատենակազմ

Հարցերը ուղարկե՛ք հարցափոխի խոսակցության մեջ





# ՄԱՅԻՍ 28-Ի ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



# ՄԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՐԵՐՈՒ ՕՐԵՐՈՒ ՆՇՈՒՄՆԵՐ



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

**Շ**աբաթ, 18 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ Վաչէ Նաճարեանի, անդամներ Վիգէն Աւագեանի, Թալին Օրտողլեանի եւ Մանուկ Քէօշկերեանի, այցելեց Հայ Կաթողիկէ Գրիգոր-Պետրոս Ի. Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ: Այցելութեան ներկայ գտնուեցաւ Գէորգ Արք. Խազում:

Այցելութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը Հոգեւոր Տիրոջ ներկայացուց միութեան ԺԲ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին ընդհանուր տրամադրութիւնները եւ յառաջիկայ քառամեակի գլխաւոր ծրագիրներն ու ձեռնարկները:

Ամենապատիւ Տէրը իր գոհունակութիւնն ու գնահատանքը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած գործունէութեան համար, մօտէն հետաքրքրուեցաւ նորակազմ գաղութներու մէջ միութեան կատարած աշխատանքներով եւ յաջողութիւն մաղթեց նորընտիր Կեդրոնական Վարչութեան ծրագիրներուն:

## ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանատուն եւ հանդիպում մը ունեցաւ դեսպան Վահագն Աթաբէկեանի եւ դեսպանատան քարտուղար Դաւիթ Ալլաւերտեանի հետ: Հանդիպումը առիթ մը եղաւ դեսպան Աթաբէկեանի հետ խորհրդակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մէջ ծաւալած աշխատանքներուն եւ այս ամառ միութեան Հայաստան մուտքը նշող 100-ամեակի ձեռնարկին, բանակումին եւ անոնց ընկերացող համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 8-րդ համագումարին մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն քաջածանօթ մը ըլլալով,



դեսպան Աթաբէկեան մեծապէս դրուատեց միութեան դերը՝ նորահաս սերունդներու կազմաւորման եւ հայեցի դաստիարակութեան ջամբումին մէջ: Ան իր պատրաստակամութիւնը յայտնեց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ամրապնդման նպաստող Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր նախաձեռնութիւններուն աջակցութեան, մաղթելով որ միութիւնը անխափան շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը՝ հակառակ հայ կեանքի դիմադրաւած դժուարութիւններուն:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՉԵՏԵՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՅՈՒՇԱՐՉԱՆ ՍՄՏՐԱՆ

Ուրբաթ, 24 Ապրիլ 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին անունով ծաղկեպը-

սակ մը գետեղուեցաւ Անթիլիասի Մայրավանքի Հայոց Ցեղասպանութեան յուշարձան-մատրան առջեւ, յաւարտ Ս. Պատարագի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի՝ Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակին առիթով արտասանած պատգամին:

Ծաղկեպսակը գետեղուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի ձեռամբ:



ԹԵՐԹԻՆ 40-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

# «ՄԱՐԶԻԿ»Ի 415 ԹԻԲԵՐՈՒ ԹՈՒԱՅՆԱՅՄԱՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԵՆՅ ԼՐՈՒՄԻՆ ՀԱՄԱԾ

2020-ը կը նշէ «Մարզիկ»ի հիմնադրութեան 40-ամեակը: Փետրուար 1980-ին ճամբայ ելած Հ.Մ.Լ.Մ.ի պաշտօնաթերթը անցնող 40 տարիներուն լոյս ընծայեց 415 թիւեր, մեծ մասը ամսաթերթի, իսկ մէկ մասն ալ միացեալ թիւերու եւ բացառիկներու ձեւով:

Բնականոն պայմաններու մէջ, «Մարզիկ» արժանավայել կերպով պիտի նշէր իր 40-ամեակը, սակայն Քորոնայի համաճարակին պարտադրած սահմանափակումներուն պատճառով, թերթին 40-ամեակի հանդիսութիւնները յետաձգուեցան առժամաբար:

40-ամեակի առիթով ծրագրուած էին նաեւ երկու նախաձեռնութիւններ, որոնք անցնող ամիսներուն իրականացան, կարեւոր իրադարձումներ դառնալով ո՛չ միայն թերթին, այլեւ՝ միութեան արդի պատմութեան համար:

Նախաձեռնութիւններէն առաջինը թերթին բոլոր թիւերուն թուայնացումն է «Ազգակ»ի «Ժիրայր Պուտազեան Ուսումնասիրական կեդրոն»ին կողմէ: Աշխատանք մը, որ առիթը կ'ընձեռէ թերթին ամբողջական հաւաքածոն ներկայացըներու երկու ՏԻՎԻՏԻ-ով:

Միութեան եւ թերթին պատմութեամբ հետաքրքրուողներ այսուհետեւ կրնան դիւրութեամբ օգտագործել թերթին թուայնացած օրինակները եւ փնտռութիւն յատուկ դրութեամբ որեւէ թիւի մէջ որոնել իրենց փափաքած շրջանը, անունը կամ յաջողութիւնը:

«Մարզիկ»ի 415 թիւերէն վերջին 115 թիւերուն թուայնացած օրինակները արդէն տեղ գտած են միութեան կայքէջին մէջ: Իսկ թերթին ամբողջական հաւաքածոյին թուայնացած տարբերակները պիտի հրատարակուին 40-ամեակի հանդիսութիւններուն ընթացքին:

Երկրորդ կարեւոր նախաձեռնութիւնը «Մարզիկ»ի խմբագրութեան կողմէ թերթին 415 թիւերու մատենագիտութեան պատրաստութիւնն է՝ ըստ նիւթի եւ շրջաններու: Հետեւաբար, մատենագէտներ, հայ մարզական թէ՛ սկստական կեանքով հետաքրքրուողներ եւ ընդհանրապէս Հ.Մ.Լ.Մ.ի պատմութեամբ զբաղողներ այսուհետեւ կրնան դիւ-



րութեամբ գիտնալ, թէ «Մարզիկ»ի 415 թիւերէն ո՞ր թիւին, ո՞ր էջին մէջ կրնան գտնել զիրենք հետաքրքրող տուեալ նիւթ մը: Նիւթերու բաժանման գլուխները նկատի ունին հետեւեալները: Խմբագրական, Հ.Մ.Լ.Մ.ի պատմութիւն, յուշեր, դէմքեր, տեսակցութիւններ, կորուստներ, հրատարակութիւններ, համա-Հ.Մ.Լ.Մ.ական ձեռնարկներ, հրատարակութիւններ, օրհնութեան եւ ողջոյնի խօսքեր, ազգային-պատմական նիւթեր, հայագրի աստղեր, համահայկական խաղեր, միջազգային մարզական կեանք եւ շրջաններ (միութեան 26 շրջաններէն իւրաքանչիւրը առանձնաբար): Իւրաքանչիւր նիւթ ներկայացուած է իր խորագիրով, հեղինակի անուն-մականունով, թերթին մէջ հրատարակուած թիւով (տարի, ամիս) եւ էջաթիւով:

«Մարզիկ»ի 415 թիւերու թուայնացումն ու մատենագիտութեան պատրաստութիւնը երկար տարիներու պահանջ մըն էր, որ իրագործուեցաւ 40-ամեակի առիթով, մնայուն եւ պատմական արժէք ներկայացնող եզակի նուէր մը ընծայելով Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին եւ թերթի ընթերցողներու լայն շրջանակին:

«ՄԱՐԶԻԿ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ. 1918-1927 (Ա. ՄԱՍ)



Հ.Մ.Ը.Մ.Ի պատմության նշանակալից ու անձանօք մեկ հանգրուանին վրայ կարելու լոյս սփռող աշխատասիրութիւն մըն է ստորեւ տրուած պատմական ակնարկը, գրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Չէքիճեանի կողմէ:

Ակնարկը առաջին մասն է երկար ուսումնասիրութեան մը, որուն մնացեալ բաժինները եւս պիտի հրատարակուին «Մարզիկ»ի յաջորդական թիւերով:

Նիւթը կ'անդրադառնայ Ա. Հանրապետութեան եւ անոր յաջորդող շրջանին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ծաւալած գործունէութեան: Այս մասին միութենական պատմագիտութիւնը գրեթէ բան չէ հաղորդած մեզի:

Չէքիճեան նիւթը ուսումնասիրած է ներկայացուցած է Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի գիտաժողովին, ապա զայն վերամշակելով եւ յաւելեալ նորութիւններով հարստացնելով, զայն պատրաստած է հրատարակութեան:

Հայաստանի խորհրդայնացումով, ինչ որ կարելիութիւնը չընձեռեց միութենական, հաստատութենական, կառուցային աշխատանք տանելու, Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղեր, վարչութիւններ եւ ակումբներ հիմնելու հայրենիքի մէջ:

## Յարութ Չէքիճեան ՊԵՅՐՈՒԹ

Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութիւնը հայրենիքի մէջ, 28 Մայիս 1918-էն 25 Դեկտեմբեր 1927, հիմնականին մէջ եղած է մարմնակրթանքի եւ սկստութեան միջոցով, նորանկախ Հայաստանի կրթութեան նախարարութեան հովանաւորութեամբ, Հայոց Յեղասպանութենէն փրկուած տասնեակ հազարաւոր խլիւղներու, կենդանական բնագոյով ապրող, սոված ու ախտաւոր որբերէն եւ պատանիներէն պատրաստել կայտառ եւ առողջ, կարգապահ եւ չարքաչ, ինքնավստահ, հայրենասէր ու բարոյական բարձր արժանիքի տէր, վեհանձն ու անձնուէր քաղաքացիներ:

Հագիւ ինը տարուան այս գործունէութիւնը, որ խորքին մէջ միայն երկուքուկէս ամսուան աշխատանքի շրջան մը եղաւ (15 Օգոստոս - 5 Նոյեմբեր 1920), իր աւարտին հասաւ

Պէտք է նշել, որ այդ ժամանակաշրջանին վերաբերող միութենական արխիւներ, ժողովական ատենագրութիւններ, տեղեկագիրներ մեր տրամադրութեան տակ չեն գտնուիր (չատ հաւանական է, որ անոնք կը գտնուին Պոլսոյ Պատրիարքութեան արխիւներուն մէջ): Նաեւ, Հայաստանի Հանրապետութեան արխիւէն եւ ժամանակաշրջանի հայաստանեան մամուլէն կարելի եղած չէ օգտուել: Կցկտուր այս տեղեկութիւններուն կարելու բաժինը քաղուած է Հ.Մ.Ը.Մ.Ի «Հայ Սկստութեան» պաշտօնաթերթէն (25 Հոկտեմբեր 1919-էն 27 Օգոստոս 1922), Հայաստան գործուողուած Հ.Մ.Ը.Մ.Ի եռանդամ պատուիրակութեան անդամներու նամակներէն, յուշագրութիւններէն, նաեւ՝ Հ.Յ.Դ. Հայաստանի պաշտօնաթերթեր՝ «Աշխատանք»էն, «Հայաստանի Աշխատաւոր»էն, «Շիրակի Աշխատաւոր»էն եւ յատկապէս՝ «Յառաջ»էն (20 Սեպտեմբեր 1919-էն 1 Դեկտեմբեր 1920):

Հ.Յ.Դ. Հայաստանի Հանրապետութեան պաշտօնաթերթ «Զանգ»ին յաջորդող «Յառաջ»ի առաջին թիւը լոյս կը տեսնէ 1 Սեպտեմբեր 1919-ին, Երեւան. վերջինը՝ 1 Դեկտեմբեր 1920-ին: Թերթին պատճենահանուած (ո՛չ թուայնացած) 1919-ի



Թիւերը ամբողջական են (1-80), սակայն 1920-ի 264 թիւերէն կը պակսին հետեւեալ 14 թիւերը.- 1, 47, 53, 97, 105, 106, 111, 112, 113, 114, 115, 171, 195 եւ 197, ուր հաւանական է, որ գտնուին Հ.Մ.Ը.Մ-ի եւ, առհասարակ, հայ մարզական եւ սկաուտական կեանքին վերաբերող գրուածքներ:

Հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը դժուար է շողկապուած պատմութեան ձեւով ներկայացնել, սակայն

կարելի է գայն բաժնել երեք ժամանակաշրջանի, ժամանակագրական հետեւեալ կարգով.-

**Ա. ՇՐՋԱՆ՝ 1914-1919**

Հ.Մ.Ը.Մ-ի եւ անոր բաղադրիչ՝ նախորդող պոլսահայ եւ արեւմտահայ ակումբներու անդամներ՝ մարզիկ, մարզիչ եւ սկաուտ վահան Չերազ, Եզնիկ Քաջունի եւ եղբայրը՝ Եղիշէ, որ զօրավար Անդրանիկի քարտուղարը եղած է, Գրիգոր Մերձանոֆ, Ճորճ Մարտիկեան, Բենիամին Սապունճեան եւ ուրիշներ, իբրեւ կամաւորական գունդերու (գլխաւորաբար զօրավար Անդրանիկի) մարտիկներ, կամ՝ որբերու-գաղթականներու խնամատարներ, 1914-էն սկսեալ, տարբեր ժամանակներ ծառայած են Հայաստանի մէջ, ինչ որ կարելի է նկատել Հ.Մ.Ը.Մ-ի ոչ-պաշտօնական գործունէութեան սկիզբը Հայաստանի մէջ:

Վազգէն Անդրէասեան կը գրէ. «Եզնիկ Քաջունին երկու տարի առաջ [1918-ին] արդէն Հայաստան մեկնած էր սկաուտական խումբեր կազմելու համար<sup>2</sup>: Բախտիկեան կը գրէ. «Սկիւտարի առաջին սկաուտներէն Ճորճ Մարտիկեան, պատանի տարիքին, իբրեւ կամաւոր մարտիկ կ'ուղղուի Կարս, ուր կը կազմակերպէ սկաուտական խումբեր՝ մինչեւ Կարսի անկումը», սակայն Տիգրան Խոյեան եւ Վահան Չերազ բնաւ չեն նշեր գայն եւ փոխարէնը կը նշեն Կարսի մէջ Աղասի անունով Պոլիսէն եկած սկաուտի մը մասին, որ ինքնագլուխ կերպով սկաուտական խումբեր կազմակերպած է եւ նոյնիսկ «Հայ Արի» անունով թերթիկ մը հրատարակած է: Խոյեան



Հայաստանի Հանրապետութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ական ուսուցիչներ Եզնիկ Քաջունի (աջին) եւ Բենիամին Սապունճեան:



Յոթիսիսմեան օրիորդաց վարժարանը միաժամանակ Հայաստանի խնամատարութեան եւ աշխատանքի նախարարութեան նստավայրը (1918-1920): Ան գլխաւոր հոգատարն էր օրէ օր բազմացող տասնեակ հազարաւոր որբերուն եւ գաղթականներուն: Յարդ կանգուն՝ Ամիրեան փողոց թիւ 28/6:

մտադիր էր Կարս երթալ եւ կարգաւորել այդ գործունէութիւնը, սակայն ան առիթը չ' ունենար, որովհետեւ թուրք-քեմալական եւ ռուս-պոլշեիկ դաւադիր համաձայնութեամբ, թրքական բանակը Կարսը կը գրաւէ 30 Հոկտեմբեր 1920-ին:

**Բ. ՇՐՋԱՆ՝ 1919-1920**

- 1919-1920 կրթական տարեշրջանին, Հայաստանի Հանրապետութեան լուսաւորութեան (կրթութեան) նախարարութիւնը, նախարար Նիկոլ Աղբալեանի մղումով, երկրին ուսումնական ծրագիրին մէջ կարեւոր բաժին յատկացուցած էր մարմնակրթութեան եւ կարիքը ունէր մասնագէտներու:

«Երբ Նիկոլ Աղբալեան կը ստանձնէ կրթական նախարարութիւնը (Օգոստոս 1919-էն Մայիս 1920), Հայաստանի Հանրապետութեան մէջ կար միայն 133 (տարրական) դպրոց, 383 ուսուցիչ եւ 11 հազար 136 աշակերտ: Աղբալեանի օրոք, առանց հաշուելու Զանգեզուրի եւ Լոռիի շրջանները, տարրական դպրոցներուն թիւը հասաւ 456-ի, ուսուցիչներուն՝ 1047-ի եւ աշակերտներուն՝ 41 հազար 188-ի: 1918-1919-ին կային 6 միջնակարգ դպրոց, 177 ուսուցիչ, 3 հազար 137 աշակերտ: 1919-1920-ին՝ 20 միջնակարգ, 305 ուսուցիչ, 5 հազար 102 աշակերտ, մէկ համալսարան, 8 դասարան եւ 200 ուսանող: 272 տոկոս աշակերտներու թիւի աճ, 244 տոկոս՝ դպրոցներու եւ 190 տոկոս՝ ուսուցիչներու: ...Իսկ սկաւտները հովանաւորուում եւ մեծ ծաւալ են ստանում» կը գրէ Ռուբէն Տէր Մինասեան:

- 1919-ին, Հայաստանի մէջ մարզական կեանքը սկսած է ամերիկեան որբա-

նոցի մը տնօրէն՝ Նշան Յովհաննէսեանի նախաձեռնութեամբ: Այս շարժումը կը տարածուի 15 որբանոցներու մէջ, եւ ընդհանուր տեսուչ կը նշանակուի մանկավարժ-հոգեբան Տիգրան Մարգարեան, իսկ մարմնամարզի ընդհանուր դաստիարակ՝ մարզիչ Մարգիս Սամուէլեան:

- Սկաւտական շարժումը Հանրապետութեան մէջ պաշտօնապէս կը սկսի ամենայն հաւանականութեամբ՝ Հոկտեմբեր 1919-ի սկիզբը, տեղական Զանգեբլով, Հ. Նազարեանի (ըստ կարգ մը աղբիւրներու՝ Հ. Նարպէյի) խմբապետութեամբ եւ հունգարացի մարզիչ եւ ըսկաւտապետ՝ Ալպէրթ Սետմայի (ըստ կարգ մը աղբիւրներու՝ Սիրմայի) օժանդակութեամբ: Վերջինը յատուկ այս նպատակով հրաւիրուած էր Հայաստան: Հ.Մ.Ը.Մ-ական Եզնիկ Քաջունին, որ իր պաշտօնավարած դպրոցներուն մէջ կազմած էր տղոց եւ աղջկանց սկաւտական խումբեր, կրթութեան նախարարութեան յանձնարարութեամբ, 30 Սեպտեմբեր 1919-ին կը պատրաստէ եւ կը ներկայացնէ մարմնակրթական դաստիարակչական ծրագիր մը:

- «Հայկոպ»-ի կրթամշակութային բաժինի եւ «Վահագն» ակումբի նախաձեռնութեամբ Երեւանի մէջ կը կազմակերպուին Նաւասարդեան առաջին խաղերը:

- 9 Յուլիս 1919-ին, «Հայաստանի Աշխատաւոր»ը «Հայաստանի առաջին Նաւասարդեան խաղեր» խորագիրով կը գրէ: «Յառաջիկայ 10 Յուլիսին Երեւանի մէջ տեղի պիտի ունենան Հայաստանի Ա. Նաւասարդեան խաղերը, որոնց մասնակցութեան իրաւունք ունին Հայաստանի բոլոր քաղաքներն ու գաւառները, դպրոցներու աշակերտութիւնը եւ որբանոցներու սաները:



Որբեր կը սորվին սկաւտական բարերը:

«Հետեւեալ մրցումները պիտի կիրարկուին՝ ա. Վազքեր՝ արագութեան եւ երկարատեւութեան, բ. Վազքեր՝ դրօշարշաւ ակումբներու, դպրոցներու եւ քաղաքներու միջեւ, գ. Վազքեր՝ պարկերով եւ արգելքներու վրայով, դ. Ոստումներ՝ երկարութեան, ե. Ոստումներ՝ բարձրութեան (ձողով եւ առանց ձողի), զ. Նետել՝ Սկաւառակ, նիզակ, գունդ եւ այլն, ի. Վերցնել՝ ծանրութիւն (մէկ եւ երկու ձեռքով), լ. Չուան քաշել (ակումբներ, դպրոցներ, քաղաքներ), թ. Հեծանիւ, ժ. Ֆուլթայլ՝ քաղաքներ, ագ. գեր, ժա. Աղաւնորսութիւն (եթէ կարելի ըլլայ):

«Մրցումներէն առաջ տեղի պիտի ունենայ տողանցք, ակումբներու, մրցողներու եւ սկաուտներու մասնակցութեամբ: Նաեւ տեղի պիտի ունենայ շուէտական մարզանք՝ շուրջ 100 մասնակիցներու: Մրցումներէն ետք տեղի պիտի ունենայ մրցանակաբաշխութիւն»: Այս բոլորը կ'ենթադրեն, որ օրին տեսնուած է հսկայական պատրաստութիւն:

- «Հայաստանի Աշխատաւոր»ի 12 Յուլիսի թիւին մէջ սակայն կը յայտարարուի. «Հայաստանի Ա. Նաւասարդեան խաղերը անորոշ ժամանակով յետաձգուած են»: Կարելի չեղաւ մամուլէն կամ այլապէս ստուգել, թէ հետագային այդ խաղերը տեղի ունեցած են կամ ոչ:


- 14 Յուլիս 1919-ին, «Հայկոպ»ի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ մարմնամարզով հետաքրքրուողներուն առաջին ժողովը, որ կ'որոշէ շաբաթ մը ետք հիմնադիր ընդհանուր ժողովի հրաւիրել՝ ստեղծելու համապատասխան ընկերութիւն, ընտրելու վարչութիւն, որուն կը հրահանգուի պետականացնել մարմնամարզի գործը եւ նպաստել յառաջիկայ առաջին Նաւասարդեան խաղերուն («Հայաստանի Աշխատաւոր», 18 Յուլիս 1919):

- 17 Յուլիս 1919, «Աշխատանք»ի Յուլիսի սկիզբը տեղի կ'ունենայ Հայաստանի մարմնամարզական միութեան ժողովը, ուր կը հիմնուի «Վահագն» ակումբը: Սկաուտական շարժումը կ'անուանուի «Վահագն»:

- 18 Յուլիս 1919, «Հայաստանի Աշխատաւոր»․ «Այսօր, Ուրբաթ ժամը 19:00-ին, քաղաքապետարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ Հայաստանի Մարմնամարզ ընկերութեան հիմնադիր ժողովը: Հրակէր բոլորին»:

- 19 Յուլիս 1919, «Աշխատանք»ի մէջ «Վահագն» ակումբին ծանուցումը՝ 25 Յուլիս 1919-ին կայանալիք «Հայաստանի Մարմնամարզական Միութեան» հիմնադիր ժողովին:

- 8 Հոկտեմբեր 1919-ին, Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Յառաջ» օրաթերթին մէջ սկաուտութեան մասին առաջին պաշտօնական յիշատակութիւնը այսպէս նշուած է. «Երեւանի մէջ կազմակերպ-




Նաւասարդեան առաջին խաղերուն յայտագիր-յայտարարութիւնը, «Հայաստանի Աշխատաւոր», 9 Յուլիս 1919:

ուած է Հայաստանի առաջին պոյ-սկաուտներու խումբը. այդ մասին տեղեկութիւններ ստանալ եւ անդամակցել կարելի է Աստաֆեան փողոց, թիւ 14 [այժմ պանդոկ, Աբովեան փողոցի «Մոսկոնա» շարժապատկերի սրահին կից շէնքը], երեկոյեան ժամը 4-6»:

- 17 Հոկտեմբեր 1919, «Յառաջ»․ «Հայաստանի ներքին գործոց նախարարը հրամանագիրով մը հրահանգած է բոլոր գործադիր իշխանութիւններուն հարկ եղած օրինական ավակցութիւնը ցոյց տալ Հայաստանի առաջին պոյ-սկաուտներու խումբին»:

- 21 Հոկտեմբեր 1919, «Յառաջ»․ «Հայաստանի առաջին պոյ-սկաուտական խումբը վարչապետ Ալեքսանտր Խատիսեանը ընտրած է պատուոյ նախագահ: Վարչապետը իր հովանաւորութեան տակ առած է խումբը, ցանկութիւն յայտնելով ներկայ գտնուել խմբական ընդհանուր ժողովին եւ խոստացած է իր ավակցութիւնը:

Այս շրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի անդամ Եզնիկ Քաջունին որբանոցներու մէջ մարզանքի ուսուցիչ էր, նաեւ՝ Երեւանի մէջ Արեւմտահայոց առաջին համազումարին պատգամաւոր: Ան կը զբաղէր հայ գաղթականներու հարցերով: Քաջունի կ'ընտրուի վերստուգիչ յանձնախումբի անդամ: Զօրավար Անդրանիկ այս համազումարին հանդիսաւոր բացումը կը



«Վահագն» ակումբին կողմէ հիմնադիր ժողովի 25-7-1919-ի ծանուցում-հրաւերը, «Աշխատանք»ի մէջ:



**Բոկոտն որբերու սկառուտական գաւազանով մարզանք Ծաղկածորի մէջ:**

կատարէ, իսկ Արամ Մանուկեան՝ բացման խօսքը, ինչ որ խոր ազդեցութիւն կ'ունենայ բոլորին վրայ:

- 15 Նոյեմբեր 1919. ահա՛ Եգնիկ Քաջունիի Երեւանէն առաջին նամակ-կապը՝ Հ.Մ.Ը.Մ-ին հետ (յապաւուած):

«Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան - Կոստանդնուպոլիս,

«Բոլորովին անակնկալ մը, Պոլիսէն, ընկերներէն մէկը, իմ հասցէիս դրկած էր «Հայ Սկառուտ»ի առաջին թիւը:

«...Երեւանի մէջ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի միւս բոլոր կեդրոնները, պիտի աշխատինք տարածելու այդ (սկառուտական) նոր գաղափարը գործով, եւ վստահ ենք, իրապէս պիտի ունենայ մեր հոգիներուն վրայ մոգական գաւազանի ազդեցութիւնը:

«Կրթական նախարարութիւնը անսահման խոստումներ ունի, եւ կարելի է ըսել, որ արդէն գործի սկսած ենք:

«Անպայման կը թղթակցիմ ձեր թերթին՝ ջանալով ձեզ հաղորդել, օրը օրին, ամէն մանրամասնութիւն եւ նոյնիսկ լուսանկարներ:

«Սիրով՝

«Եգնիկ Քաջունի, Երեւան, 15 Նոյեմբեր 1919» :

- 1 Դեկտեմբեր 1919-ի թիւով, Հայաստանի Հանրապետութեան սկառուտական շարժումին սատարելու առաջադրանքով, Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնաթերթ «Հայ Սկառուտ»ը իմբազարական եւ լրատուական հետեւեալ նիւթերը կը ներկայացնէ. -

Ա. Ստորեւ՝ իմբազարկանը, «Գործը ինքնին պարտաւորիչ է» վերնագիրով :

Բ. Լուրը. «Անկեղծ հրճուանքով կը տեղեկանանք, որ Երեւանի մէջ արդէն կազմուել է հայ արիներու [սկառուտ] առաջին խումբը, եւ վարչապետ [Ալեքսանտր] Խատիսեանին առաջարկուած է

գլուխը կանգնել անոր: Նոյնպէս, սկառուտապետ Հ. Նազարեան կոչ կ'ուղղէ ամբողջ Հայաստանի պատանեկութեան՝ գլուխ հաւաքուելի դրօշին տակ, կազմուելու սկառուտական խումբերը: Այս առթիւ փափաք կը յայտնուի Հ.Մ.Ը.Մ-ի հետ յարաբերութեան մէջ մտնելը» :

- Դեկտեմբեր 1919-ին, Քաջունիի նամակէն ետք, Երեւանէն Կոստանդնուպոլիս կը վերադառնայ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Գրիգոր Մերճանոֆ (հայկական Նեմեսիսի՝ Շահան Նաթալիի գործակիցը), որ Հայաստանի սկառուտական եւ մարզական կեանքին մասին լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանին հետ Թիֆլիսի մէջ տեսակցելէ ետք, անոր պահանջներուն շուրջ կը զեկուցէ հետեւեալը (կը ներկայացնենք լեզուական սրբագրութեամբ եւ կարգ մը մանրամասնութիւններ կրճատելով).-

«Հայաստանի լուսաւորութեան նախարարութիւնը ուշադրութեան առարկայ դարձուցած է նաեւ մարմնակրթական եւ սկառուտական շարժումը: Ներկայիս Հայաստանի մէջ կան 20 հազար որբեր [աւելի ստոյգ աղբիւրներու համաձայն՝ աւելի քան 40 հազար որբեր]: Յուլիս 1922-ին, միայն Ալեքսանդրապոլի մէջ՝ 22 հազար՝ երկսեռ որբեր, իսկ 6 հազար որբեր՝ 4 հազարը աղջիկ, 2 հազարը մանչ՝ Երեւանի մէջ են: Անոնք մարզանքի կը հետեւին՝ ուսուցիչ ունենալով Հ.Մ.Ը.Մ-ական, Գում-Գաբուի «Տորք» սկուլմբէն Եգնիկ Քաջունին եւ չեխ լրատ Սիմոն Վրացեանի: Սակայն աւելի ստոյգ,



**Սկառուտներ (երկու պատանիներ սկառուտական գլխարկով) բոկոտն՝ բարձրութիւն ցատկել կը մարզուին, իսկ օդին մէջ, գրեթէ իր հասակին բարձրութեամբ կը ցատկէ հաւանաբար լաւագոյն մարզիկը, 1920, Ալեքսանդրապոլ:**

ըստ Եզնիկ Քաջունիի եւ «Յառաջ»-ի հունգարացի] մը, որուն այս նպատակով հրաւիրած է կառավարութիւնը... Հսկայական աշխատանք կայ, որ պէտք ունի ՄԱՐԴՈՒ եւ անձնուէր մարդու:

«Սկառտներ կան, սակայն, մերիններուն նման ամէն դիւրութիւն չունին, բոլորի ոտքով մարզանք եւ պտոյտներ կ'ընեն, նոյնիսկ՝ աղջիկները: Նախարարութիւնը ընդարձակ մարզարաններ յատկացուցած է անոնց: Ամերիկեան որբախնամն ալ իր որբանոցներուն մէջ բաւական ոյժ կու տայ մարզանքին:

«Սակայն կառավարութիւնը կ'ուզէ հաստատուն եւ կանոնաւոր հիմքերու վրայ դնել շարժումը, որուն համար մէկ միլիոն

ուրբի պիւտոն մը կը պահանջէ խորհրդարանէն եւ յոյս ունի, որ խորհրդարանը պիտի վաւերացնէ այս գումարը: Թիֆլիսի մէջ տեսակցութիւն ունեցայ կրթական նախարար պարոն Նիկոլ Աղբալեանին հետ, որ Կոստանդնուպոլսոյ Հ.Մ.Ը.Մ-ին աջակցութիւնը կ'ուզէ՝ Հայաստանի մէջ նաեւ տարածելու մեր նոյն շարժումը: Երեւան վերադարձին նամակով պիտի խնդրէ Կեդրոնական Վարչութեանէն, որ շուէտական մարզանքի մասնագէտ ուսուցիչ մը դրկենք Հայաստան՝ տեղոյն վրայ գտնուող մի քանի ուսուցիչներուն հետ կազմակերպելու համար այս կենսական գործը:

«... Պէտք է պատրաստ ըլլանք նախարարական կոչին եւ կարելին, նոյնիսկ քիչ մըն ալ անկարելին կատարենք, պէտք եղած մարդու վրայ պատրաստենք՝ դրկելու համար հոն, ուր գործ կայ եւ գործիչի կարիք կայ»:

- 9 Դեկտեմբեր 1919. «Երեւանի քաղաքապետական խորհուրդը 3 Դեկտեմբեր 1919-ի նիստին կը վաւերացնէ պոյ սկառտներու ընկերակցութեան 3 դեսեատին [հին ուսական հողի չափ = 1.09 հեկտար] կամ՝ 32 հազար 700 քառ. մետր բանջարանոցային հողամաս յատկացնելու առաջարկը»։ Ուրեմն, սկառտները կը կատարէին նաեւ հողագործութիւն՝ իբրեւ զբաղում, ապագայ ասպարէզի վարժութիւն եւ իրենց գործունէութեան ու բարեսիրական նպատակներու համար եկամուտի աղբիւր:

- 27 Դեկտեմբեր 1919, «Յառաջ».  
«Երեւանի սկառտները ծրագրած են



Ալեքսանդրապոլի ուրախ եւ չարքաշ որբ սկառտներ տարագով՝ փողկապ, նշանակ եւ սուլիչակապ: Մէկը սեւ գառնուկ շալկած, միւսը՝ հայկական ողջ քարածիւ, 1922:

այս տօներուն [Ամանորի եւ Ծննդեան] խմբովին երթալ Ալեքսանդրապոլ՝ ծանօթանալու այնտեղի մարմնակրթական դպրոցի պատանիներուն եւ անոնց հետ կազմակերպելու հանդէս: Արական վարժարանի վարչութիւնը հաւանութիւն տուած է: Պատանիներուն պիտի ուղեկցին մարզանքի ուսուցիչը, վարժարանի վարչութեանէն մէկը եւ [կրթութեան նախարարութեանէն] բժիշկ Վ. Արծրունին: Վերջինս այդ նպատակով դիմած է Հայաստանի կրթութեան նախարարին [Նիկոլ Աղբալեանին] խնդրելով փոքր օժանդակութիւն մը, միջնորդելու առ որ անկ է՝ յատուկ [չոգեկառքի] վակոն մը յատկացնելու անոնց, ճրիօրէն տանիլ-բերելու համար: Հանրային կրթութեան նախարարը համաձայն գտնուած է»:

- Շուտով, 2 Յունուար 1920-ին կը յաջորդէ Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական առաջին նամակը Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնաթերթ «Հայ Սկառտ»ին.  
«Հ.Հ. Մինիստրութիւն Հանրային կրթութեան եւ Արուեստի

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

**ԳՈՐԾԸ ԻՆՔՆԻՆ ՊԱՐՏԱԴՐԻՉ Է**

Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքէն եկած լուրերը մեզ համար ոգեւորիչ և միանգամայն քաջայերիչ են:

Ոգեւորիչ են, որովհետեւ կը տեսնուի որ սկառտական շարժումը հոն՝ Մայր երկրի մէջ ևս կարեւորութիւն կ'ստանայ:

Քաջայերիչ է, անով որ, անոր զէկը և պաշտպանութիւնը կ'ստանան են Աղզային պետական և ղեկավար անձերը:

Եւրոպայի մէջ շարժումը, որուն մէկ փոքր համարաւորութիւնը կը ներկայացնենք մեր ներկայ թիւով, այնքան կարեւորութիւն ստացած է, որ զայն միակ դարմանը կը նկատեն, համաշխարհային աղէտին առաջ բերած բարոյական և ֆիզիքական աւերին ու, միջազգային եղբայրակցութեան կարեւորագոյն կապերէն մին է այն:


Մենք Հայերս, որ նոր հայրենիքի մը հիմնարկութեան պատմական և նուիրական դարագլու մը կ'սկսինք, իբր հանդիսատես չը պիտի մնայինք համաշխարհային այս շարժումին հանդէպ, շալ փում մը որ ուղղակի կապ ունի ցեղին տեւականութեան և բարգաւաճումին հետ:

Յուսադրիչ լուրեր կուզան մեզ կիրիկիայէն, իզմիրէն և միւս գաւառներէն ևս, և մենք բոպէ առ բոպէ աւելի լուրջ կ'զգանք պարտականութեան ծանրութիւնը: Գործին կարեւորութեանը բմբոնումը մեզ կը պարտադրէ կրկնապատկել մեր ուժերը և արհամարհելով արգելքները և դժուարութիւնները, շարունակել մեր ճամբան:

Եւ արդէն գործը, իբր բնութեան օրէնք, ինքզինք կը պարտադրէ,

«Հայ Սկառտ»ի 1 Դեկտեմբեր 1919-ի խմբագրականը:

Յրեւանի սկաուտներին մէջ միաց  
է ծագել այս տներին խմբովն զնա-  
Ալեքսանդրապոլ ծանօթանալու այն-  
տեղի մարմնակերթական զգրոցի ե-  
րեխաների հետ և նրանց կետ միա-  
ին հանդէս կազմել: Արական գիմ-  
նագիտոյ վարչութիւնը գրտե չաա-  
նութիւն է տակ: Երեխաներին ուղեկ-  
ցելու են մարզանքներէ ուսուցիչը,  
գիմնագիտոյ վարչութիւնից ակը և  
բժիշկ Վ. Արծրունին: Վերջինս այդ  
նպատակով գիմել է Հայաստանի կըր-  
թութեան նախարարին, խնդրելով  
մի փոքրիկ օժանդակութիւն տնել այդ  
օգտուէտ ձեռնարկութեան և միջնոր-  
դել ուր ու հարկն է՝ յատուկ վագոն  
յատկացնելու նրանց: Արիարար տա-  
նելու և քերելու համար: Հանրային  
կրթութեան նախարարը ընդատաջ է  
զնացել այս գիմումին:



Բժիշկ Վահան Արծրունի

Երեւանի սկաուտներուն տօնական օրերը Ալեքսանդրապոլի սկաուտ-  
ներուն հետ տօնելու լուրը, «Յառաջ», 27 Դեկտեմբեր 1919:



Բժիշկ Վահան Արծրունի վարժարանը, «Ամիրեան», թիւ 2, 2017-ին:

Թիւ 38

2 Յունուար 1920  
Երեւան

«Հայ Սկաուտ» թերթի պատուարժան խմբագրութեան,  
«Հանրային կրթութեան եւ արուեստի պ. մինիստրը [նախարար Նիկոլ Աղբալեան], որի սրտին շատ մօտ է մարմնակերթութեան գործը, յանձնարարել է ինձ յայտնել Հ.Մ.Լ. Միութեան իր մեծ գոհունակութիւնը Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցող սկաուտական շարժման առիթով: Յաջողութիւն ցանկանալով ձեր ազգօգուտ ձեռնարկութեանը՝ պ. կրթութեան մինիստրը խնդրում է ձեր պատուական թերթից տասը օրինակ ուղարկել Հ. կրթութեան մինիստրութեան անունով, բաժանորդագրելը կ' ուղարկուի:

«Երեւանի մատաղահաս սկաուտներն եւս յղում են իրենց եղբայրական սիրոյ ողջոյնը իրենց պոլսեցի եղբայրակիցներին, եւ յոյս են յայտնում, որ մօտ է ապագան, երբ Մայր Մի-

ացեալ Հայաստանի գրկում ձեռք կը տան իրենց եղբայրակիցներին:

«Եթէ նեղութիւն չէք համարի, խնդրում եմ բարեհաճեցէք ուղարկելու ինձ «Հայ Սկաուտին Օրինագիրը», նաեւ հաղորդեցէք ինձ սկաուտի զգեստի արժէքը:

«Հանրային կրթութեան եւ Արուեստի Մինիստրութեան  
«Բժշկա-առողջապահական բաժինի  
վարիչ

«Բժիշկ Վ. [Վահան] Արծրունի»:

- «Հայ Սկաուտ»ի 1 Ապրիլ 1920-ի խմբագրականը կը շեշտէ ներգաղթի անհրաժեշտութիւնը. «ՆԵՐԳԱՂԹՆ է այս: Ոչ մէկ առթիւ, մենք՝ սկաուտական կազմակերպութիւններս, այնքան օգտակար պիտի կարենանք ըլլալ, որքան մեր ժողովուրդին մնացած բեկորները ԴէՊի ԵՐԿԻՐ առաջնորդելու պարագային: Իսկ յատկանշական է վերջին պարբերութիւնը. «Դուրս գանք առայժմ

միջազգային սկաուտութեան եւ առժամանակեայ կերպով Ա.ՁԳ.Ա.ՅՆ.Ա.ՅՆ.ԵՆ.Բ գայն, յարմարեցնելով մեր ներկայ պահանջներին եւ մշակենք ծրագիր մը, զուտ ներգաղթի համար»:

- «18 Ապրիլ 1920-ին, պոյ-սկաուտներու օր էր Երեւանի մէջ: Քաղաքը ստացած էր տօնական տեսք: Փողոցներուն մէջ տուփերով հանգանակութիւն կը կատարուէր: Պոյ-սկաուտները երաժշտութեամբ կենդանութիւն կը մտցնէին ամէն կողմ: Ամառնային ակումբին մէջ տեղի ունեցաւ հրապարակային մարզանք: Պոյ-սկաուտները, իրենց վարիչ հունգարացի Ալպէրթ Սետմայրի (Միրմա՞) առաջնորդութեամբ, գեղեցիկ խաղեր խաղացին՝ արժանանալով խոնուած հասարակութեան խանդավառ ծափերուն: Սկաուտական շարժումը հանրային կրթութեան նախարարութեան գուրգուրանքին առարկան էր եւ շուտով լայն ծաւալ ստացաւ Հայաստանի մէջ, մանաւանդ երբ արտասահմանէն հասան փորձուած դե-



կալար մարզիկներ՝ Վահան Զերազ, Տիգրան խոյեան եւ այլն [Օննիկ Եազմաճեան]»<sup>26</sup> :


«Զերազի ու միւս սկառտներուն աշխատանքը, մարզահանդէսները մեծ տպաւորութիւն գործած են հասարակութեան վրայ ու «Նորագատ Հայաստանի մէջ հիմքը դրած՝ մարզական շարժումին», կը գրէ Սիմոն Վրացեան :

«Յառաջ» այս առիթով կը ներկայացնէ հետեւեալ յայտարարութիւնը.- «Այսօր «Սկառտի Օր» է. քաղաքիս մէջ ընդարձակ ծաւայով ու լայն ծրագրերով պիտի կատարուի պոյսկառտներու հանդիսութիւնը, կը վաճառուին յատուկ յուշանուէրներ, տուփերով հանգանակութիւն կը կատարուի սկառտական կազմակերպութեան համար: Որոշ վայրերու մէջ գանազան ազգերու տաղաւարներ պիտի տեղադրուին: Քաղաքի ամառնային ակումբին մէջ տեղի պիտի ունենայ սկառտական մարզանք (հանդիսութիւն)» :

- 23 Ապրիլ 1920-ին, «Յառաջ»-ի մէջ կը կարդանք «Պոյսկառտի Տօնը» խորագրով թղթակցութիւնը.- «Ապրիլի 18-ին, պոյսկառտի օր էր: Տօն մը, որ առաջին անգամ կը տօնակատարուի Հայաստանի հանրապետութեան մայրաքաղաք Երեւանի մէջ: Փոքրիկ սկառտները՝ աշակերտութիւնը, ցնծութեամբ ու հպարտութեամբ կը տօնէր իր յաղթանակը, որ այսպիսի աննպաստ պայմաններու մէջ ինքնուրոյն կերպով իրենց մշակած ու կերտած ծրագրերով պոյսկառտի վեմ ու ազատ գաղափարով հիմնեցին ազատ Հայաստանի դպրոցական աշխարհին մէջ:

Հայաստանի քաղաքացիները գնահատելով նոր սերունդին գաղափարական ձգտումները, այս անգամ նաեւ ընդառաջեցին աջակցելու եւ նպաստելու մանուկներու այս բացառիկ տօնին: Գնահատելի է այս գործին մէջ եւ ամէն խրախուսանքի արժանի օտարերկրացի մը, օտար՝ Հայաստանին, սակայն սրտով՝ սերտօրէն կապուած այս ազնիւ գործին՝ Երեւանի պոյսկառտներու հիմնադիր՝ հունգարացի Ալպէրթ Սետմայի (Սիրմա՞, հունգարացիները Sirmai մականունը ցարդ ունին) աշխատանքները:

Քաղաքը տօնական կերպարանք ունէր, սկառտները



Հայաստանի Հանրապետութեան կրթութեան նախարարութեան Գամակը Բ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթին:




Սարիղամիշի որբերը կը դիմաւորեն վարչապետը եւ «Սկառտապետ» դարձած Ալեքսանդր Խատիսեանը, 1919:

խումբ-խումբ նուազախումբի ընկերակցութեամբ փողոցներուն մէջ կը տողանցէին: Ապա քաղաքային ակումբի ամառնային շէնքին մէջ ցուցադրուեցան սկառտներուն խաղերն ու մարզանքները, որոնք հանդիսականներուն վրայ արտակարգ գոհացուցիչ տպաւորութիւն ստեղծեցին: Այդ օր շուրջ 300 հազար ռուբլի հանգանակուեցաւ: Ստեփան Մ.» :

- Հայաստանի Հանրապետութեան կոստանդնուպոլսոյ դեսպանատունը կը ստանայ 28 Ապրիլ 1920 թուակիր հետեւեալ նամակը.-

«Հ. Հ. Մինիստրութիւն Հանրային կրթութեան եւ Արուեստի  
Թիւ 145/1789



«Հայ սկաուտի օր» ունի տօնակատարութեան թղթակցութիւնը, «Յառաջ, 23 Ապրիլ 1920:

28 Ապրիլ 1920  
Երեւան

Կոստանդնուպոլսոյ Հայաստանի Հանրապետութեան Դիւանագիտական Միասնախումբի,  
Ի լրումն մինիստր Աղբալեանի հեռագրի [այս հեռագիրը կարելի չէր գտնել], որով խնդրում է երկու մասնագէտ սկաուտ պետեր յղել Երեւան, պատիւ ունիմ տեղեկացնելու, որ մինիստրութեան ծրագիրն է Հայաստանի մէջ ամենալայն չափով տարածել սկաուտութիւնը, բայց դրան արգելք է հանդիսանում հմուտ մասնագէտների բացակայութիւնը: Ուստի, եթէ տակաւին չէք զրկած մարզիչներ, խնդրում եմ բարեհաճէք առանց յապաղելու կատարել պ. մինիստրի խնդրոքը, որովհետեւ ժամանակն անցում է եւ կարիքը ահագին է:  
Հանրախնի Կրթութեան եւ Արուեստի մինիստրութեան Բժշկա-առողջապահական բաժնի Վարիչ

Բժիշկ Վ. [Վահան] Արծրունի<sup>30</sup> :

**Շար. (1)**

- ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**
1. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», Կոստանդնուպոլիս, Ա. տարի, թիւ 6, 16 Յունուար 1920, էջ 85:
  2. «Վահան Չերազ եւ իր Երգն Հայաստանի», Վազգէն Անդրեասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան»:
  3. «Յուշամատեն Հ.Մ.Ը.Մ.ի 1918-1958», Ներսէս Արեղայ Բախտիկեան, Պէյրութ, 1958, տպարան «Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», էջ 73-85:
  4. «Նահատակ Յեղի Ամմահներ», Տիգրան Քահանայ Խոյեան, տպարան «Ալթափրէս», Պէյրութ:
  5. «Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Ռուբէն Տէր Մինասեան, 7-րդ հատոր, Բ. Հրատարակութիւն, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 1979, Պէյրութ, էջ 283-288:
  6. «Վահան Չերազ եւ իր Երգն Հայաստանի», Վազգէն

Անդրեասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան»:

7. «Հայաստանի Աշխատարար», Երեւան, Գ. տարի, թիւ 91, 9 Յուլիս 1919, էջ 2:
8. Նոյնը, թիւ 93, 12 Յուլիս 1919, էջ 2:
9. Նոյնը, թիւ 98, 18 Յուլիս 1919, էջ 2:
10. «Աշխատանք», Երեւան, Գ. տարի, թիւ 45, 17 Յուլիս 1919:
11. «Հայաստանի Աշխատարար», Երեւան, Գ. տարի, թիւ 98, 18 Յուլիս 1919, էջ 2:
12. «Աշխատանք», Երեւան, Գ. տարի, թիւ 46, 19 Յուլիս 1919:
13. «Յառաջ», Երեւան, Ա. տարի, թիւ 15, 8 Հոկտեմբեր 1919, էջ 2:
14. Նոյնը, թիւ 22, 17 Հոկտեմբեր 1919, էջ 3:
15. Նոյնը, թիւ 25, 21 Հոկտեմբեր 1919, էջ 4:
16. «Հայաստանի Հանրապետութիւն», Սիմոն Վրացեան, Բ. տպ. Պէյրութ, 1958, տպարան «Մշակ», «Արեւմտահայոց գործերը» գլուխ, էջ 30:
17. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», թիւ 5, Կոստանդնուպոլիս, 1 Յունուար 1920, էջ 72:
18. Նոյնը, թիւ 3, Կոստանդնուպոլիս, 1 Գեկտեմբեր 1919, էջ 33:
19. Նոյնը, էջ 41:
20. <https://neareastmuseum.com/2015/07/10/alexandropol-making-the-orphan-city/>
21. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», թիւ 5, Կոստանդնուպոլիս, 1 Յունուար 1920, էջ 75:
22. «Յառաջ», Երեւան, Ա. տարի, թիւ 64, 9 Գեկտեմբեր 1919, էջ 4:
23. Նոյնը, թիւ 77, 27 Գեկտեմբեր 1919, էջ 3:
24. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», թիւ 9, 1 Մարտ 1920, էջ 137 կողքի էջ:
25. Նոյնը, թիւ 11, 1 Ապրիլ 1920, էջ 169:
26. «Վահան Չերազ եւ իր Երգն Հայաստանի», Վազգէն Անդրեասեան, Պէյրութ, 1977, տպարան «Սեւան»:
27. «Հայաստանի Հանրապետութիւն», Սիմոն Վրացեան, Բ. տպ. Պէյրութ, 1958, տպարան «Մշակ», «Շինարարական վերքը» գլուխ, էջ 367:
28. «Յառաջ», Երեւան, Բ. տարի, թիւ 79, 18 Ապրիլ 1920, էջ 4:
29. Նոյնը, թիւ 82, 23 Ապրիլ 1920, էջ 3:
30. Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ», թիւ 16, 16 Յունիս 1920, էջ 249՝ կողքի էջ:

# Հ.Մ.Ը.Մ. ԵՂԱԾ Է ՈՒ ԿԸ ՄՆԱՅ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

(ՄԱՅԻՍ 28-Ի ԱՌԻԹՈՎ Հ.Մ.Ը.Մ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՏԷՆԻ ՄԱՐԿՈՐԵԱՆԻ ԱՌՑԱՆՑ ԽՕՍՔԸ)

**Մ**այիս 28. այս յատուկ օրը մեր բոլորին կը վերախոսեցնեն մեր յարատեւ պայքարներու փայլուն արդիւնքները, մեր միասնական եւ շարունակական նեղութիւններէն միշտ դուրս գալու յաղթական պատկերը, իբրեւ անկախ ժողովուրդ եւ հայրենիք: Մայիս 28-ը անգամ մը եւս մեզի կը յիշեցնէ, որ պէտք է շարունակենք պայքարիլ ու մեր ձեռքը երկարած՝ միշտ օգնենք անկախ Հայաստանին ու Արցախին:

Հ.Մ.Ը.Մ-ի դերը մեծ եղած է հայ ժողովուրդի յաղթանակներու կերտումին մէջ: Տարիներ շարունակ, մենք միշտ նեցուկ կանգնած ենք Հայ Դատի բոլոր աշխատանքներուն եւ Սփիւռքի հզօրացման նախաձեռնութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ-ը եղած է ու կը շարունակէ մնալ հայեցի դաստիարակութեան դպրոց, մեր երիտասարդութեան, սկսողներուն եւ մարզիկներուն համար երկրորդ հայ ընտանիք: Կը դիտակցինք, որ Քորոնա համաճարակը մեզմէ խլեց մեր յա-



ճախակի հանդիպումները, մեր մարզական փորձերը, մեր սկսողական հաւաքները, մեր մարզական խաղերը, ու Մայիսեան մեր սկսողներու փառահեղ տողանցքները Գանատայի փողոցներուն մէջ: Տողանցքներ, որոնց ընդմէջէն շեփորախումբը պիտի հնչեցնէր մեր ազգային երգերը ու ցոյց պիտի տար, թէ հայ ժողովուրդը այս օտար ափերուն ինչպէ՛ս կը տօնէ իր յաղ-

թանակի օրը:

Այս տարի, հակառակ ստեղծուած նոր պայմաններուն, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի մեծ ընտանիքը դարձեալ պիտի նշէ այս յատուկ օրը, բայց առցանց դրութեամբ:

Կը վստահինք ու կը վստահեցնենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր աշխատանքները շուտով պիտի վերագտնեն իրենց բնականոն ընթացքը, սկսողները դարձեալ ամբողջական տարագով պիտի վերադառնան Հայ Կեդրոններ ու մարզիկները Հ.Մ.Ը.Մ-ի վահանով դարձեալ պիտի վազեն մարզադաշտերու վրայ: Վստահ ենք, այս դժուար կացութիւնը պիտի ունենայ իր աւարտը ու, առ այդ, մենք պէտք է աւելիով զօրանանք ու ամրապնդուինք, շարունակենք կարելի եղածին չափ առցանց միջոցներով կատարել մեր ժողովներն ու աշխատանքները:

Հպարտ ենք մեր երիտասարդութեամբ, մեր առաջնորդներով ու մարզիկներով, որոնք արդէն իսկ իրենց կարելիութեան սահմաններուն մէջ ջանք չեն խնայեր իրենց կարելին մատուցելու մեր սկսողներուն ու մարզիկներուն:

Մայիս 28-ի այս ուրախ օրը անգամ մը եւս մեզի առիթ կ'ընծայէ, որ հաւաքական ու միասնական աշխատանքով կարենանք յաղթահարել բոլոր դժուարութիւնները, ու միշտ մեր յոյսերը բարձր պահած եւ Հ.Մ.Ը.Մ-ի ջանք բարձր բռնած, շարունակենք բարձրանալ եւ մեզի հետ բարձր պահել Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի անունը:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ-ը, կեցցէ՛ ազատ ու անկախ Հայաստանը:

Շնորհակալ Մայիս 28, համայն հայութիւն:




# ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ ՄԸ՝ **Homenetmen.org**

**Տ**եղեկատուական արհեստագիտութեան այս դարուն, երբ աշխարհը մարդոց ափին մէջ է՝ բջիջային հեռաձայներու շնորհիւ: Երբ հաղորդակցութեան եւ ընդհանուր զարգացման միջոցները փոխադրուած են ելեկտրոնային աշխարհ, բնական է, որ Հ.Մ.Ը.Մ. եւս քայլ պահէ օրւան պահանջներուն հետ: Հոսկէ՝ գաղափարը ունենալու ելեկտրոնային, դաստիարակչական կայքէջ մը, որ ժամանակի եւ հեռավորութեան սահմանները չըջանցելով՝ կոճակի մէկ հպումով հասանելի ըլլայ երկրագունդի չորս ծագերուն ապրող հայերուն ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ականներուն յատկապէս:

Կայքէջի գաղափարը նորութիւն չէ: Համացանցի ստեղծման առաջին օրէն ստեղծուած են ու կը ստեղծուին տեղեկատուական, քարոզչական, վաճառականական, գիտական եւ մասնագիտական բազմամիլիոն կայքէջեր, սակայն համայնագիտարանային բնոյթի կայքէջերուն թիւը քիչ է, իսկ հայ իրականութեան մէջ՝ հազուադէպ:

Հ.Մ.Ը.Մ. ինքզինք կրնայ նկատել բախտաւոր միութիւն մը, որովհետեւ ան երկու տարիէ ունի նման կայքէջ մը, որ տեւաբար կատարելագործուելով եւ թարմացուելով, այսօր, ընթացիկ լուրերու կողքին, հարուստ շտեմարան մըն է միութենական գիտելիքներու եւ պատմական, արխիւային նիւթերու:

Կը բաւէ «պտոյտ մը» կատարել կայքէջի զանազան բաժիններուն մէջ, տեսնելու համար, որ ինչքան բան կայ այնտեղ, սկսեալ առցանց գործունէութեան բաժինէն, առցանց զրադարանէն, հասնելու համար առցանց թանգարանին, անցնելով առցանց ձայնադարանէն եւ տեսադարանէն: Անշուշտ, առանց մոռնալու բովանդակութեան այլազան եւ հարուստ բաժինները:



Արդարեւ, Homenetmen.org անունով կայքէջը այցելուն կը դիմաւորէ լուրերով, նիւթերով, դէմքերով եւ միութեան խորհրդանշանները՝ վահանը, շուշանածաղիկը, դրօշակն ու նշանակը ծանօթացնող բաժիններով: Յուշագրքերը կը արդէն գաղափար մը կու տայ ներսի պարունակութեան մասին, որ ամփոփուած է վեց վերնագիրներու տակ՝ «Միութիւն», «Պատմական», «Լրատու», «Սկաւտական», «Մարզական» եւ «Մարզիկ»:

### «ՄԻՈՒԹԻՒՆ»

«Միութիւն» բաժինը կը բացուի «Ծանօթացում» ենթաբաժինով, այցելուին բացատրելու համար, թէ «Ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.», «Ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ», «Ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալ», «Հիմնադիրներուն պատգամը» եւ «Մեր թանգարանը»:

Կը յաջորդէ «Խորհրդանիշներ» բաժինը, ուր կը ներկայացուին Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը, նպատակը, նշանաբանը, քայլերգը, վահանը, նշանակը, շուշանածա-

ղիկը եւ կանոնագիրը: Այցելուին կը հրամցուի նաեւ կանոնագիրին PDF օրինակը, ընթերցելու եւ ի հարկին ներբեռնելու համար:

«Միութիւն» բաժինին երկրորդ ենթաբաժինը կը կոչուի «Մեր կառույցը» եւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական բուրգին մասին գաղափար մը ունենալ փափաքողներուն կը բացատրէ, որ ի՞նչ կը նշանակէ Կեդրոնական Վարչութիւն, ի՞նչ կը նշանակէ Շրջանային Վարչութիւն, Մեկուսի Վարչութիւն, մասնաճիւղ եւ միաւոր: «Մեր կառույցը» ենթաբաժինին մէջ կը ներկայացուին նաեւ միութեան աշխարհասփիւռ 111 մասնաճիւղերը՝ իրենց հիմնադրութեան թուականներով եւ անդամական թուային պատկերներով (սկաւտ, մարզիկ, պարզ անդամ):

### «ՊԱՏՄԱԿԱՆ»

Կայէջին երկրորդ բաժինը կը կրէ «Պատմական» խորագիրը եւ հարուստ է սպառիչ տեղեկութիւններով: Այցելուն հոս կրնայ միութեան մասին գտնել

ամէն ինչ - հիմնադրութիւն, պատմութիւն, վկայութիւններ, դէմքեր, գրականութիւն, պատասխանատու ժողովներ եւ մարմիններ: Սկսելու համար, «102 տարին» կը ներկայացնէ միութեան պատմութիւնը՝ 1918-2020, տասնամեակ առ տասնամեակ: Կը հետեւին՝ «Առաջին տարին», «Ընդհանուր ժողովներ», «Դիւանական ժողովներ», «Կեդրոնական վարչութիւններ» եւ «Շրջանային վարչութիւններ»:

«Վկայութիւններ» ենթաբաժինին մէջ այցելուն պիտի տեսնէ հայ եկեղեցւոյ Հայրապետներու, Առաջնորդներու, մտաւորականներու եւ հասարակական գործիչներու կարծիքները Հ.Մ.Ը.Մ-ի մասին՝ «Մեծերը կը վկայեն» գլխուն տակ, նաեւ անձնական, ապրուած փորձառութիւններ՝ «Հ.Մ.Ը.Մ-ականներ կը հաստատեն» վերնագիրին տակ:

«Դէմքեր» ենթաբաժինը կ'ընդգրկէ միութեան փառաւոր պատմութիւնը կերտած Հ.Մ.Ը.Մ-ականներու կենսագրութիւններ, անոնք ըլլան «Հիմնադիրներ», «Առաջին սերունդ», «Վաստակաւորներ» թէ «Նահատակներ»: Առանձին ներկայացուած են միութեան «Արժանեաց» եւ «Արտակարգ» շքանշանին արժանացած դէմքեր՝ շքանշաններու արժանացման թուականներով եւ վայրերով:

**«ԼՐԱՏՈՒ»**

Homenetmen.org կայքէջը լայն բա-




ժին մը կը յատկացնէ միութեան ներկային: «Այսօր» ենթաբաժինին տակ կը տրբւին «Լուրեր», «Նիւթեր», «Կորուստներ», «Նկարներ» եւ «Հաղորդագրութիւններ»: Տեղեկատուական բնոյթի ենթաբաժին մը, որ հարազատօրէն կը ցոլացնէ միութեան առօրեան՝ իր այլազան երեսներով:



Կը յաջորդէ «Շրջանային Հրատարակութիւններ» ենթաբաժինը, ուր PDF տարբերակով կը ներկայացուին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկառտներուն «Տեղեկատու», Սուրիոյ Շրջանային Սկառտ. Խորհուրդի հրատարակչա-

կան յանձնախումբին ել-թերթիկը, Ալմելոյի Մեկուսի մասնաճիւղին «Նոր ճրագ»ը, Հարաւային Ամերիկայի «Կամաւոր»ը, Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի «The youth Newsletter»ը եւ «Կամաւորի ձայն»ը:

«Առցանց գրադարան»ը ընթերցասէրներուն կ'առաջարկէ Հ.Մ.Ը.Մ-ական գրականութեան արժէքաւոր ընտրանի մը. «Գիրքեր» գլխուն տակ՝ «Ծրագրականոնագիրներ», «Դաստիարակչական գիրքեր», «Պատմական գիրքեր», «Սկառտական գիրքեր» եւ «Սպաներէն գիրքեր»: Գիրքերէն ետք կը ներկայացուին թերթերը՝ «Մարմնամարզ»ի 44 թիւեր (1911-1914), «Հայ Սկառտ»ի երեք շրջանի հրատարակութիւններ (1919-1935), «Ռահվիրայ» (1926), «Հ.Մ.Ը.Մ.» (1926), «Նոր սերունդ» (1926-1929), «Հ.Մ.Ը.Մ. Հայ սկառտ» (1926-1956), «Հայ արի» (1929-1934), «Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմ» (1938), «Նաւասարդ» (1955-1958) եւ «Սկառտին ձայն» (1965), բոլորն ալ PDF տարբերակով ընթերցելու եւ ներբեռնելու կարելիութեամբ:

«Լրատու» բաժինին նախավերջին ենթաբաժինը՝ «Լատեսողական» վերնագիրով կ'ընդգրկէ «Առցանց տեսագրան», «Առցանց ձայնագրան» եւ «Առցանց թանգարան»: Տեսագրանը





տեւաբար կը հարստանայ յոր տեսանիւթերով, մինչ ձայնադարանը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ-ի նուիրուած երգեր եւ սկառտական երգչախմբային կատարումներ:

«Առցանց թանգարան»ը կը ծանօթացնէ Հ.Մ.Ը.Մ-ի «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանին մէջ ցուցադրուող աւելի քան հազար իրերը: Թանգարանը ունի նաեւ իր ալպովը, որուն PDF օրինակը կարելի է գտնել «Առցանց գրադարան»ի բաժինին մէջ:

**«ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ»**

Սկառտութիւնը հիմնական տեղ ունի Homenetmen.org կայքէջին մէջ: Երկու ենթաբաժիններ՝ «Ծանօթացում» եւ «Համա-Հ.Մ.Ը.Մ.ական» կը ներկայացը-

նեն սկառտութեան անցեալն ու ներկան հայկական, Հ.Մ.Ը.Մ.ական եւ միջազգային ասպարէզներուն մէջ:

«Ծանօթացում»ին առաջին գլուխը նուիրուած է հայ սկառտական շարժումի սաղմնաւորման պատմութեան՝ 1680-էն մինչեւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւն: Ապա կը խօսուի Հ.Մ.Ը.Մ-ի սկառտութեան մասին: Կը բացատրուի «Հայ սկառտի օր»ը, կը ներկայացուի սկառտական կանոնագիրը՝ իր զարգացման հոլովոյթով եւ PDF օրինակով: Այցելուներ «Սկառտական երգեր» գլխուն տակ կրնան առցանց երգեր գտնել, ունկնդրել եւ ներբեռնել, իսկ նախալերջին գլխուն՝ «Սկառտական գիրքեր-գիտելիքներ» բաժինին մէջ անոնք կրնան ծանօթանալ սկառտա-

կան եօթը գիրքի՝ «Կակուղ թաթիկ», «Միասող», «Երկասող», «Նորագիր», «Նորընծայ», «Բ. կարգ» եւ «Ա. կարգ»:

Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի իր կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ճամբով մաս կը կազմէ միջազգային սկառտութեան մեծ ընտանիքին: Այդ մասին կարելի է կարդալ «Ծանօթացում» գլխուն վերջին բաժինին մէջ՝ իրագեկ դառնալու համար Հ.Մ.Ը.Մ-ի Համաշխարհային Սկառտական Շարժումի անդամակցութեան պատմական հոլովոյթին:

«Համա-Հ.Մ.Ը.Մ.ական» ենթաբաժինին տակ պատմականը կը կատարուի միջ-մասնաճիւղային բանակումներու, խմբապետական համագումարներու, միջ-ցամաքամասային սեմինարներու եւ սկառտական «Արարատեան կարգ»ի: Առանձին բաժինով մըն ալ կը ներկայացուին Հ.Մ.Ը.Մ-ի Բիւրականի եւ Երեւանի «Հայկ Յովսէփեան» բանակավայրերը:

**«ՄԱՐԶԱԿԱՆ»**

Մարզականը իր կարգին առանձին տեղ ունի Homenetmen.org կայքէջին մէջ: Այստեղ երեք ենթաբաժիններ կայքէջի այցելուին գաղափար մը կու տան հայ մարզական շարժումին մասին ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ-ի մարզական կեանքին մասին յատկապէս: Ենթաբաժինները կը կոչուին «Ծանօթացում», «Համա-Հ.Մ.Ը.Մ.ական» եւ «Համահայկական»:

Հինգ գլուխներով «Ծանօթացում»ը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին տասնաբանեան, Հ.Մ.Ը.Մ.ական մրցանիշներ եւ մարզական մեծ յաջողութիւններ: «Մարզական շարժումը» եւ «Հ.Մ.Ը.Մ-ի մարզական կեանքը», պատմական նիւթերու յատկացուած գլուխներ են, որոնք պատրաստութեան մէջ են տակաւին:

«Համա-Հ.Մ.Ը.Մ.ական» ենթաբաժինը ընդհանուր ակնարկ մը կը նետէ հայ մարզական շարժումի վերջին մէկ դարու պատմութեան վրայ եւ յաջորդաբար կը ներկայացնէ «Արդի ողիմպիականներ»ը (1911-1921), «Միջ-մասնաճիւղային խաղեր»ը (1927-1972) եւ «Արդի

մարզախաղեր»ը (1981-2017)՝ իրենց պատմութեամբ, կանոնադրութեամբ եւ արդիւնքներով:

Առանձին ենթաբաժին մըն ալ յատկացուած է հայ մարզական շարժումի գլխաւոր իրադարձութեան՝ համահայկական խաղերուն: Նախատեսուած է ներկայացնել ամառնային թէ ձմեռնային խաղերուն Հ.Մ.Ը.Մ.ականներու արձանագրած մրցանիշներն ու յաջողութիւնները:

### «ՄԱՐԶԻԿ»

Homenetmen.org կայքէջին մէջ ներկայ է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ»ը 40 տարուան իր պատմութեամբ եւ 415 թիւերու հրատարակութեամբ: «Մարզիկ» գլխուն տակ կը ներկայացուին չորս ենթաբաժիններ՝ «Մարզիկ», «Բովանդակութիւն», «Մարզիկ»ի հետ կապ» եւ PDF թիւեր:



Առաջին ենթաբաժինին մէջ կայքէջի այցելուն նախ ամփոփ գիծերով կը ծանօթանայ պաշտօնաթերթին: Շարունակելով, կրնայ անցնիլ «Պատմութիւն» գլխուն եւ հոն տեսնել թերթին 40 տարուան զարգացման հոլովոյթը: Կը յաջորդէ «Անձնակազմեր»ու գլուխը, ուր կը ներկայացուին պաշտօնաթերթին վարչական եւ խմբագրական կազմերը՝ 1980-էն մինչեւ մեր օրերը:

«Բովանդակութիւն» ենթաբաժինին առաջին գլուխը մատենագիտական ակնարկ մըն է («Մարզիկ»ի թիւեր» վերնագրով), որ կը լուսաբանէ թերթին 415 թիւերու հրատարակութեան հերթականութիւնը, ըստ իւրաքանչիւր տարուան եւ ամսուան:

Այնուհետեւ, թերթին ու թերթին ճամբով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական ուղղութեան եւ ազգային տեսլականներուն ծանօթանալ փափաքողները կրնան այցելել «Խմբագրականներ» գլուխը, ուր իրենց կը սպասէ թերթին աւելի քան 100 խմբագրականներուն հաճելի ընթերցումը:

«Մարզիկ»ի հետ կապ»ը կը յատկացնէ, թէ «Ի՞նչպէս բաժանորդագրուելի» եւ «Ի՞նչպէս նիւթ դրկել» թերթին:


Վերջապէս, PDF ենթաբաժինով այցելուներ կրնան գտնել թերթին թիւ 300-էն մինչեւ օրս հրատարակուած թիւերուն PDF օրինակները: Թիւերը կարելի



է ընթերցել, ներբեռնել եւ տպել անվճար:

Homenetmen.org-ի լեզուն միայն հայերէնը չէ: Հիմնական կարգ մը բաժինները ներկայացուած են նաեւ անգլերէն: Իսկ «Առցանց գրադարան»ի բաժինին մէջ կարելի է հանդիպել սպաներէն հրատարակութիւններու PDF օրինակներուն, ինչպէս՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագիրին, «Հ.Մ.Ը.Մ.ական կենցաղագիտութեան եւ փրոթոքոլային հասկացողութեան ուղեցոյց»ին, «Մարզիկ»ի խմբագրականներու Ա. եւ Բ. հատորներուն, Կարօ Թիւթիւնճեանի «Հ.Մ.Ը.Մ. եւ ազգային դէմքեր» հատորին եւ այլ գիրքերու, բոլորն ալ թարգմանուած Արժանթիւնէն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեանի կողմէ:

Լսատեսողական նորագոյն յարմարութիւններով կայքէջ մըն է Homenetmen.org, որ արժանի է բազմակողմանի օգտագործման: Անոր հանրագիտարանային տեղեկութիւններէն կրնան օգտուել թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ին բոլորովին անծանօթները, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ականներու դաստիարակութեամբ զբաղողները եւ թէ՛ նոյնիւն Հ.Մ.Ը.Մ.ականները: Կը բաւէ որ անոնք անգամ մը ծանօթանան կայքէջին, որպէսզի ծանօթութիւնը վերածուի... ընկերութեան եւ ընկերակցութեան, համակարգիչի թէ՛ բջիջային հեռաձայնի պաստառներէն չհեռացող հասցէով:



www.panorama.am/am/news  
ԵՐԵՒԱՆ

**Լ**րացաւ Հայոց Եղեռնի 105-րդ տարելիցը: Զոհերի թվում եղել են նաեւ բազմաթիւ մարզիկներ, այդ թվում Շաւարշ Քրիսեանը: Նա համահայկական խաղերի նախագործի, Հ.Մ.Ը.Մ. մարզական միութեան եւ Ֆուլթոնի լիգայի ստեղծման հեղինակներից մէկն է եղել: Նրա եւ մարզիկներ Մկրտիչ Մկրեանի ու Վահրամ Փափագեանի մասին կարդում ենք ՀԱՕԿ-ի (Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի- «Մ.») պաշտօնական կայքում:

Քրիսեանը, յիրաւի, հայկական ըսպորտի ականաւոր գործիչ է, մարզիչ, մարզիկ, հայկական Ֆուլթոնի «Պալթալիման» առաջին ակումբի հիմնադիրը: Նա եղել է մեծ մանկավարժ, գրող, հրապարակախօս, լրագրող, Օսմանեան կայսրութիւնում մարզական առաջին «Մարմնամարզ» հանդէսի հիմնադիրը:

Հէնց մեծ հայորդու Ջանքերով, պատմութեան մէջ առաջին անգամ, Թուրքիան պատուիրակութիւն է գործուղել ողիմպիական խաղեր: Դա 1912


## 1912-Ի ՍԹՈՔՀՈՒՄԻ ԽԱՂԵՐՈՒՄ ՎԱԶՈՐԴ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԸ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ՊԱՐՏՈՒԵԼ Է, ՈՐՊԷՍՁԻ ՉԾԱԾԱՆՈՒԻ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԴՐՕՇԸ

Թ. Սթոքհոլմում տեղի ունեցած 5-րդ համաշխարհային մարզահանդէան էր: Օսմանեան պետութիւնը գումար չի յատկացրել եւ գործուղման հետ կապւած ամբողջ ծախսը իր վրայ է վերցրել հայկական համայնքը:

Շ. Քրիսեանն այն ժամանակ ասել է, որ «դեռ եւս Թուրքիայի ոչ մի ներկայացուցիչ չի մասնակցել մարզական որեւէ միջոցառման: Թող մերոնք Շուէտիայում վերջինը լինեն: Կարելորն

այն է, որ մեծ ազգերի հետ ասպարէզ մտնեն հայերը, ովքեր շուրջ 30 տարի Եւրոպայում յայտնի են որպէս հալածւած ազգ: Ժամանակն է, որ արդէն հակառակն ասեն, եւ որ քաղաքակիրթ աշխարհն իմանայ, ճանաչի մեզ եւ մեր նուաճումները»:

Սթոքհոլմի խաղերին մասնակցած 28 երկրների 2541 մարզիկների թվում եղել են Թուրքիան ներկայացնող երկու մարզիկներ՝ Մկրտիչ Մկրեանը եւ Վահ-







րամ Փափագեանը: Հետաքրքիր մի փաստ է արձանագրուել: 1909 թ. Կիլիկիայում թուրքերի կազմակերպած հայերի ջարդի պատճառով շուէտները մաս-

նակից երկրների դրօշների շարքում դիտաւորեալ չեն կախել օսմանցիներին: Այս մասին չեն իմացել հայ մարզիկները, որոնք բողոքել են ու կազմակերպիչնե-

րը տեղադրել են թուրքիայի դրօշը: Մեր հայրենակիցներն այնուհետեւ զղջացել են իրենց արածի համար:

1500 մ. վազքում, 50 մարզիկների պայքարում Մկրեանը ճանաչուել է 5-րդը: Իսկ Փափագեանի մասին ճիշդ կը լինի ներկայացնել հէնց նրա թոռան պատմածը: Պապիկը բազմիցս պատմել է, որ վերջնագծի մատուցներում ինքը (պոլսահայ Փափագեանը) գրեթէ 20 մեթր առաջ է պոկուած եղել մրցակիցներից ու կարող էր հեշտութեամբ առաջինը հատել եզրագիծը եւ նուաճել չեմպիոնի կոչումը: Բայց գնահատելով այն հանգամանքը, որ իր յաղթանակի առթիւ պէտք է ծածանուի թուրքիայի դրօշը, ուստի Փափագեանը միանգամից դանդաղեցրել է վազքը ու գիտակցաբար յայտնուել ետնապահների թւում:

Ինչ վերաբերում է Օսմանեան կայսրութիւնում սպորտի մեծ ջատագով Շաւարշ Քրիսեանին, 1915-ի Օգոստոսի 15-ին թուրքերը նրան հանել են բերդից, տարել Անգարայից դուրս ու գնդակահարել: Այսպէս են երախտամոռ օսմանցիները վարձահատուց եղել 29-ամեայ հայ ականաւոր գործչին:



# ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶ ԵՒ ԲԾԱԲՈՐ ՏԻՓԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

## Յարուք Չեքծեան ՊԵՅՐՈՒԹ

**1** 918-ի Հայաստանի Ա. Հանրապետությունը դիմագրաւեց ապրուստի դաժան պայմաններ՝ մնայուն պատերազմական վիճակ, ներսէն եւ դուրսէն դաւադրութիւններ, սով, աղքատութիւն, համաճարակներ՝ բժաւոր տիֆ, ճահճատենդ (մալարիա), ժանտախտ (քոլերա) եւ այլն, որոնց պատճառով 1918-ի աշունէն մինչեւ 1919-ի գարուն մահացաւ աւելի քան 150 հազար մարդ:

Հայ կամաւորական գունդերու մարտիկ, զօրավար Անդրանիկի ընկերակից եւ թարգման, Հայաստանի Հանրապետութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Վահան Չերազի մասին հետեւեալ վկայութիւնը տուած է Վազգէն Անդրէասեան (որուն Վարդանոյշ քրոջը ամուսինն էր Չերազ) «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի» գիրքին մէջ:

Ստորեւ կը ներկայացնենք այդ հատուածը (տեսնել գիրքը, էջ 80-81):

«...Եթէ Վահան Չերազ եղած է անվեհեր զինուորը հայրենիքի պաշտպանութեան, եղած է նոյնքան գորովագութ եղբայր մը, իր անցած ճամբաներուն, տեղերուն մէջ գտնուող հալածական, անիրաւուած, լքուած, թշուառ ամէն մարդ էակի հանդէպ, որոնք անշուշտ գրեթէ միմիայն հայեր էին:

«Անգուգական հայ, իբրեւ մարդ՝ եղած է այլասէր եւ վեհոգի:

«Ինչպէ մը միայն, այնքա՛ն շատերէն, ցոյց տալու համար անոր ազնիւ հոգին, մարդկային սիրտը:

«Անդրանիկի հետ, որուն թարգմանն էր, զօրամասը ցրուելու համար վերադարձի ճանապարհին [1919-ի գարնան, երբ Անդրանիկ յուսախաբ դաշնակիցներէն՝ Անգլիայէն, դժգոհութեամբ հեռացաւ հայրենիքէն, գէնքերը յանձնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին- Յ.Զ.], Զանգեզուրէն էջմիածին ճամբուն ամալի մէկ վայրին մէջ, անոնք կը հանդիպին գետին փռուած մարդկային էակի մը:

- «Շատեր տեսած ու անցած էին:
- «Ինչե՞ր չէին տեսած ու անցած:
- «Վահան Չերազ չ'անցնիր:
- «Կը մօտենայ, աղջնակի նմանող բան մը, որ դեռ կը շնչէ,



Վահան Չերազ կամաւոր...

կը դողդոջայ:

«Վահան կը փաթթէ գայն իր զինուորական վերարկուն մէջ, կը հեծնէ իր ձին, եւ ընկերներէն մէկը կը զետեղէ պզտիկը անոր գրկին մէջ: Մինչեւ Երեւան հասնիլը կը խնամէ ու ապա կը յանձնէ հիւանդանոցի բժշկապետի խնամքին: Քանի մը այցելութիւններէ ետք, Տոքթ. Եարօ կը ստիպուի պահել նաեւ այցելուն՝ ծանրապէս վարակուած աղջնակի բժաւոր տենդէն՝ այդ օրերու հոգէառէն:

«Անդրանիկ եւ Վահանի ընկերները կը հեռանան երկրէն, որոնց համար համաձայն բժիշկին հաւաստումներուն, հիւանդը արդէն դատապարտուած էր:

«Կ'անցնին շաբաթներ, երկու հիւանդները կ'առողջանան եւ կ'ապրին:

«Հիւանդանոցը հազու թողած, Վահան Չերազ կը բռնուի «բացակայութեան» ախտէն, ու կը վազէ միանալու պաշտուած Զօրավարին՝ մասնակցելու անոր հետ Կիլիկիոյ պաշտպանութեան գործին:

«Սակայն ազգային հերոսը կը ստիպուի անցնիլ Ամերիկա: Վահան ինք կը վերադառնայ երկիր [13 Օգոստոս 1920-ին, Պոլսէն- Յ.Զ.], գայն անգամ մըն ալ չչքելու հաստատ որոշումով»:

Չերազ մարդկային ազնիւ զգացումով տոգորուած՝ իր կեանքը վտանգեց, փրկելու համար հոգեվարքի մէջ գտնուող, փողոցը լքուած որբ աղջնակը: Այսինքն, այստեղ իր արարքին մղումը՝ դրդապատճառը կեանք մը փրկել էր:

Ամիսներէ ի վեր աշխարհի բնակչութեան սպառնացող պսակաճեւ ժահրի համաճարակին տարածումը կանխարգիւելու, սանձելու համար, իւրաքանչիւր երկիր՝ խստագոյնէն մինչեւ անտարբերութիւն եւ խարխափում, զանազան աստիճանի միջոցներ որդեգրեց, ոմանք շատ ուշ, պատճառ դառնալով հարիւր հազարաւոր անտեղի զոհերու:

Այս համաճարակը յաղթահարելու տրամաբանական եւ գուգահեռ միջոցը երկուք է՝ առաջինը՝ մեկուսացնել վարակածները, որպէսզի ուրիշին չփոխանցեն, եւ ինքնամեկուսացման ենթարկել մնացեալ ժողովուրդը, փակելով երկրին սահմանները, մինչեւ որ գտնուին եւ մեկուսացուին եւ, եթէ կարելի է, դարմանուին բոլոր վարակուածները:

Երկրորդը՝ գիտական, բժշկական դարման մը գտնել, ոչնչացնելու, կամ դիմադրելու համար ժահրը: Յոյսով ենք, որ գիտութիւնը ուշ կամ կանուխ պիտի յաջողի: Սակայն առաջինը կ'ենթադրէ կառավարութիւններու յստակ ու խիստ պարտադիր կարգադրութիւններ ու հրահանգներ եւ ամբողջ ժողովուրդին կարգապահ ու գիտակից հնազանդութիւնը՝ գործակցութիւնը:

Իտէալական պարագային, շուրջ չորս շաբաթ բաւարար է գտնելու համար բոլոր վարակուածները, սրուած ըլլալով, որ երկու օրէն երկու շաբթուան կը կարօտի վարակուած անձին մօտ ախտանշաններու յայտնուիլը: Երկիրներ, որոնց կառավարութիւնները կանուխէն ծրագրեցին եւ պարտադրեցին այս մարտավարութիւնը՝ մարդկային նուազագոյն վնասները կրեցին, ինչպիսին է պարագան շուրջ հինգ միլիոն բնակչութեամբ Լիբանանի: Արդարեւ, 28 Փետրուարին կառավարութիւնը որոշեց կրթական բոլոր հաստատութիւնները փակել, երբ երկրին մէջ յայտնուեցաւ վարակման չորրորդ պարագան՝:

Հայաստանի մէջ, 1 Մարտին յայտնուեցաւ վարակման առաջին պարագան, որուն հետ շփում ունեցած 32 անձեր մեկուսացուեցան: Դպրոցները շաբաթ մը փակ պահելէ ետք, Երկուշաբթի, 9 Մարտին վերաբացուեցան, ինչո՞ւ...: 11 Մարտին 3 վարակուածներ Իտալիայէն ժամանելէ ետք, վերջապէս արտակարգ դրութիւն յայտարարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքին՝ 16 Մարտէն սկսեալ, սակայն թէ որքանո՞վ կիրարկուեցաւ այդ դրութիւնը... մնաց հարցական:

Անհոգ ու անփոյթ կառավարութիւններուն եւ կամ ժողովուրդներուն անխոհեմ արարքը, վարուելակերպը նման է, համազօր է պատերազմի ընթացքին զինուորները առանց զէնքի դէպի թշնամին զբօսանքի դրկելուն:

Գանգատող եւ անհրճանազանդ անհատներ, անգիտակից կամ ոչ, իրենց եւ շրջապատին կեանքը կը վտանգեն, որպէսզի չզրկուին իրենց հաճոյքներէն եւ այս պարագային «ազատ քաղաքացիի» անտեղի իրաւունքներէն...

Ամէն տեսակի ճգնաժամերէն անմնաս դուրս գալու համար՝ անհատը հետեւեալ կարգախօսերով եւ ապրելակերպով պէտք է աւաջնորդուի-



...Սկաուտապետ



... Եւ Սիպերիա արքայութիւն, աջին՝ ոտքի:

ազգասիրութիւն, կարգապահութիւն, կարգասիրութիւն, օրինապահութիւն, ճշդապահութիւն, կարգ ու կանոնի խստապահանջութիւն, քաղաքացիական կրթութիւն, ընկերային իմաստութիւն, շրջապատացուցութիւն, զգուշութիւն, աչալրջութիւն, խոհեմութիւն, հնազանդութիւն, անձնագոհութիւն, անձնուրացութիւն, պարտաճանաչութիւն, բարեփրութիւն, չարքաշութիւն, իննյասիրութիւն, նուիրապետական կարգերու յարգանք, ժուժկալութիւն, ինքնազստութիւն, չափաւորութիւն, համբերութիւն, տոկալու եւ դիմանալու կամքի դրսեւորում, սովորութիւններէ զրկանք, զրկանք եւ այլն:

Այն ազգերը, որոնք վերոնշեալ արժանիքներով դիմագրուեցին եւ կը դիմագրուեն համաճարակը՝ նուազագոյն վնասով դուրս պիտի գան:

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. «Վահան Չերազ եւ իր երգն Հայաստանի», Վազգէն Անդրեասեան, տպարան Սեւան, 544 էջ, Պէյրութ, 1977, էջեր 80-82:
2. <http://www.aztagdaily.com/archives/466571>
3. <http://www.aztagdaily.com/archives/466570>
4. <https://armenpress.am/arm/news/1006849.html>
5. <https://armenpress.am/arm/news/1007634.html>
6. <https://armenpress.am/arm/news/1009466.html>

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԻ ՖՈՒԹՊՈՒԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

## Վիզեն Գեորգեան ԳԱՆԱՏԱ

«**Չ**է՛... երբեք դիւրին մի՛ կարծեր պատուհանէն նետուելը, եթէ հարկ ըլլայ ես կը նետեմ քեզի: Թող ըսեն Հ.Մ.Ը.Մ.Ի պատասխանատուն վար նետեց ի՛ր մարզիկը»:

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Ֆուլթոյի խումբը, օրինակելի խումբերու շարքին դասուելով, առաւել մէկ կէտ ստացաւ ընդհանուր աղիւսակին վրայ, Գ. դասակարգի աւարտական մրցաշարքի վերջին փուլին դեղին եւ կարմիր նուագագոյն քարտեր ստացած ըլլալուն պատճառով, եւ բարձրացաւ Սուրբոյ Ֆուլթոյի Բ. դասակարգ, ուրկէ նահանջած էր տարի մը առաջ:

Ափսո՛ս, որ միասնականութեան բացակայութեան պատճառով Հ.Մ.Ը.Մ.Ի խումբին Հայաստան պատմական այցելութեան յաջորդող մրցաշարքին խումբը նահանջած էր Գ. դասակարգ:

1991-1992 մարզական տարեշրջանն էր, Հ.Մ.Ը.Մ.ը հասած էր Գ. դասակարգի ախոյեանութեան եւ երեք խումբով պիտի մասնակցէր Դամասկոսի մրցաշարքի վերջին փուլին:

Պատուիրակութիւնը կը բաղկանար եօթանասունեօթը անդամներէ՝ վարչականներ, յանձնախումբի անդամներ, մարզիչներ եւ մարզիկներ, բաղկացած Ա., Բ., Գ. խումբերէ, որոնց արձանագրելիք արդիւնքները իրարու հետ գումարուելով պիտի ապահովէին խումբին ախոյեանութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ը բաւական լաւ խումբերով հասած էր աւարտա-

կան փուլ, բայց պէտք էր պատրաստ ըլլալ պատահական որեւէ դէպքի՝ լաւագոյնս օգտուելու իւրաքանչիւր առիթէ, որ կրնար յայտնուիլ այլ խումբերու հետ մրցումի ընթացքին, չօշափելով ընդհանուր տրամադրութիւններու բազմակերպ: Այլ խօսքով, բաւական դժուար գործ էր եօթանասունեօթը անդամներով դէպի յաղթանակ ուղղուելը:

Մրցաշարքի առաջին օրն էր, մեր կրտսերներու եւ երիտասարդականի կազմերը փայլուն յաղթանակով աւարտած էին առաջին մրցումները: Երբ լարուած ջիղերով կը հետեւէինք ներկայացուցչական խումբի մրցումին, մեր յառաջապահ գիծի մարզիկներէն մէկը ծանր հարուած մը ստացաւ հակառակորդ խումբի յետսապահ գիծի խաղացողէն: Դէպքը արժանացաւ իրաւարարի սուլիչով խաղի ընդհատումին: Երբ մեր մարզիկը գետնէն բարձրացաւ, դէմքին վրայ արեան հետքեր երեւացին: Մեր մարզիկը հնարամտութիւն մը խորհելով՝ ծոնկին արիւնը քսած էր դէմքին, սակայն այս ճարպիկութիւնը չէր վրիպած իրաւարարին աչքէն ու ան մօտենալով մեր մարզիկին՝ գայն եւս ազդարարեց դեղին քարտով մը:

Դէպքը սկիզբը անհասկնալի թուեցաւ մեզի: Մեր պահեստի մարզիկներէն մէկը գայրոյթով հայտնեց՝ օրուան իրաւարարին ուշադրութիւնը գրաւելով:

Վրայ հասաւ մեր հանգուցեալ հաւատալու պատասխանատուներէն եղբ. Յարութ Քահքէճեանի ուժգին հարուածը հայտնող մեր մարզիկին: Իրաւարարը տեսնելով հարուածին ուժգնութիւնը, որուն ձայնը լեցուցած էր ամբողջ դաշտը, կարծես բաւարարուելով ձեռքի դրօշը վար առաւ: Այս միջոցին, իբրեւ օժանդակ անդամ, յայտնուեցայ դէպքին վայրը եւ խնդրայարոյց մարզիկին փաթթուելով բարձրացայ թրիւկիւնին անվերջանալի աստիճանները, դուրս գալու դաշտէն՝ տաքարիւն, ըմբոստ մարզիկին հետ միասին:

Ան հանդարտած էր արդէն:

- Եղբայր, գիտե՛ս, այդ ապտակը քեզի փրկեց ստոյգ կարմիր քարտ մը ստանալէ, պէտք է առայժմ մոռնանք ամէն ինչ եւ ուղղուինք պանդոկ, ըսի եւ ուղեկցեցայ անոր:

Երեկոյեան, յանձնախումբի ժողովին որոշուած էր յիշեալ մարզիկը զրկել խումբին հետ դաշտ ներկայանալէ: Յաջորդ օրը, երբ խումբը դաշտ մեկնեցաւ, ան պայուսակը ձեռքին, գայրացած ներկայացաւ պատուիրակութեան պատասխանատու եղբոր սենեակը, ուր այդ միջոցին կը պատրաստէի մարզիկներուն հրամցուելիք կերակուրը: Մարզիկը գայրացած տրուած



որոշումն էն հարց տուաւ, թէ ինչո՞ւ դաշտ պիտի չներկայանայ: Պատասխանատու եղբայրը ամենայն պաղարիւնութեամբ յայտնեց, թէ այսօր իր պարտականութիւնն է եղբոր հետ միասին ճաշ պատրաստել խումբի եղբայրներուն: Այս պատասխանը խելակորոյս դարձուց մարզիկը: Ան իր նայածքը ուղղեց սենեակի դրան, նկատելով որ արդէն դրան մուտքին եմ: Ապա նայուածքը ուղղեց դէպի պատուհան ու պայտասակը վար նետելով փորձեց նետուիլ, սակայն յայտնուեցաւ պատասխանատու եղբոր հոժկու բազուկներուն մէջ: Ան քանի մը անգամ գինք ցնցելով խեղդուկ ձայնով մը ըսաւ. «Չէ... երբեք դուրին մի՛ կարծեր պատուհանէն նետուիլը, եթէ հարկ ըլլայ ես կը նետեմ քեզի: Թող ըսեն, որ Հ.Մ.Ը.Մ-ի պատասխանատուն վար նետեց իր մարզիկը»:



Տիրող քար լուծեան մէջ, ան հօր նման գիրկընդխառնուեցաւ իր զակիրն ու համբուրեց ճակատը: Մարզիկը զգացած լալ սկսաւ, յուզելով նաեւ մեզ: Ապա ան սկսաւ պատմել, թէ ինչպէ՛ս գինուորական ծառայութեան ընթացքին տեսած տառապանքներուն եւ երկարատեւ բանտարկութեան հետե-


ւանքով դարձած էր ըմբոստ եւ անհանդուրժող:

Վերջապէս սենեակին մէջ ամէն ինչ փոխուած էր, վայրկեաններ անց մարզիկը լուացւելէ ետք՝ մօտենալով ինծի մասնակից դարձաւ հայկեան ակրատներու պատրաստութեան:

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ-ականներ, Այս վիճակուեցաւ մեզի այդ տարին: Ոչ թէ կէս կէտ, դեղին քարտ մը նուազ ստացած ըլլալով բարձրացանք Բ. դասակարգ: Այդ տարեշրջանին մի-

ասնական ճիգերով հսկայական գործ տարուեցաւ, եզակի եւ առանձնայատուկ դեր ունեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի վարչութեան եղբայրները, սակայն իրապէս խղճի պարտք կը նկատեմ արձանագրել, որ այդ յաջողութեան մէջ առիւծի բաժին ունէր հեղինակաւոր անհատականութեան տէր եղբ. Անդրանիկ Լախոյեանը, որ կարողացաւ նաւարկել այդ եօթանասունեօթը Հ.Մ.Ը.Մ-ականներէն բաղկացած նաւը եւ խումբը հասցնել Բ. դասակարգի ափ:

Փառք ու պարծանք մեր դարամեայ երթը շարունակող բոլոր նուիրեալներուն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Reservations** **Yerevan**  
 32-38, Hanrabedoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europohotel.am

[www.europohotel.am](http://www.europohotel.am)

# ՓԱՌՒՒՄ 3ԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ԿԵՐՏԻՉԸ՝ ԵՂԲ. ԺՈՂԷՓ ՆԱՊԱՆՏԵԱՆ (ՄԱՀՈՒՄՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

## Վ. Աւագեան ՊՈՒՐՑ ՅԱՍՈՒՏ

**Հ**ՄԼՄ-ի ֆուտբոլի պատմութեան բոլոր ժամանակներու ամէնէն նշանաւոր ու վաստակաւոր դէմքն է եղբ. Ժողէֆ Նալպանտեան: Իբրեւ մարզիկ, մարզիչ եւ վարչական պատասխանատու յաղթանակի փառաւոր տասնամեակներ կերտած անկրկնելի տիպար մը, որուն անունը անջնջելիօրէն կապուած է ՀՄԼՄ-ական եւ լիբանանեան ֆուտբոլի վերելքին:

Եղբ. Ժողէֆ Նալպանտեան կը ծնի 1919-ին եւ կանուխէն կը ճաշակէ որբութեան դառնութիւնները: «Բախտը կը ժպտի» եւ ան կը փրկուի ստոյգ մահէ, ամէնէն սարսափելի չարահանքները ճանչնալէ: Կը վերապրի հայրենի հողէն հեռու. հեռու այն երկրէն, ուր հիմը դրուեցաւ ՀՄԼՄ-ին:

Ռեմէյլի համեստ թաղերուն մէջ հասակ առած պատանի Ժողէֆը աչքերը կը բանայ ՀՄԼՄ-ական ֆուտբոլի առաջին քայլերով: Ան կը հմայուի ՀՄԼՄ-ի Դամասկոսի ֆուտբոլի խումբին յաջողութիւններով: 1930-ական տարիներու սկիզբը, Դամասկոսի խումբը շաբաթական Պէյրութ կու գար մրցելու լիբանանեան խումբերու դէմ: Խումբին աստղերը կը կոչուէին Երուանդ (բերդապահ), Զաւէն, Եղիշ, Օղլաքեան, Սաաթճի (յետսապահներ), Օննիկ (միջնապահ), Կարապետ (ձախ ծայր), Արմէն (ձախ մէջտեղ), Մելիքոֆ (կեդրոն), Ֆերտինան (աջ ծայր) եւ այլն: Ֆուտբոլը կ'ըլլայ իր աշխարհը, իսկ բերդապահի դիրքը՝ նախընտրութիւնը:

1934-ին եղբ. Ժողէֆին կը վստահուի դպրոցին՝ Սաթէսի ֆուտբոլի խումբին բերդապահի պարտականութիւնը: 17 տարեկանին լիբանանեան մամուլը արդէն կը խօսի խոստումնալից մարզիկի մը մասին, որ նոյն տարին կը հրաւիրուի Լիբանանի ազգային հաւաքական եւ կը մրցի Վիեննայի նշանաւոր Ատմիրա խումբին դէմ: Մրցումին ընթացքին ան հրաշքներ կը գործէ եւ ֆրանսական «Օթօ տը Ֆրանս»ը (ապագայի «Լեքիփ»ը) մեծապէս կը դրուատէ զայն:

Քանի մը ամիս ետք, եղբ. Ժողէֆ դարձեալ կը հրաւիրուի ֆուտբոլի հաւաքական, այս անգամ ռումանական երկու խումբի եւ յունական խումբի մը դէմ խաղալու համար: Այդ օրերուն, Լիբանանի հաւաքականին մաս կազմող միակ հայն էր ան:



Արաբական դպրոց յաճախած եւ ամբողջութեամբ արաբական շրջանակի մէջ հասակ առած երիտասարդ Ժողէֆին համար ՀՄԼՄ-ը գրաւիչ շատ բան ունէր իր մէջ, սակայն կեանքի պարտադրանքները ճակատագիրը կը տնօրինեն այլ ձեւով: 1938-ին, հազիւ ուսումը աւարտած, ան մաս կը կազմէ Տէ-Աշ-Փէ- խումբին, որ գործ կ'ապահովէ իրեն, Եղիշին եւ Սաաթճիին: Տէ-Աշ-Փէ-ն Դամասկոս-Համա երկաթուղագիծի ընկերութեան խումբն էր, որուն հետ Ժողէֆ Լիբանանի ախոյեանութիւնը կը շահի յաջողաբար երեք տարի, 1937-1940:

Ժողէֆ Նալպանտեան Տէ-Աշ-Փէ-ին մաս կը կազմէ մինչեւ 1944: Այդ տարին ՀՄԼՄ- կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան, սակայն կը դիմազրուէ ներքին դժուարութիւն մը, իր եօթը ֆուտբոլիստներուն «Բաղրամեան» խումբին միացումով: Ներգաղթի եւ ներագգային տագնապի տարիներ էին: ՀՄԼՄ-ի տկարացումը նպատակ էր համայնաւար շրջանակներու համար, իսկ ֆուտբոլը միջոց էր այդ նպատակին հասնելու համար: Նալպանտեան կը զգայ վտանգը, սակայն կու տայ ներքին ձայնին եւ կ'ուզէ անպայման ըլլալ իր սիրելի խումբին կողքին: «Բախտը կը ժպտի» դարձեալ եւ այդ օրերուն Տէ-Աշ-Փէ- խումբը կը լուծուի, իսկ Սաթէս խումբն ալ դուրս կը դրուի ֆետերասիոնէն: Նալպանտեան անվարան կը դիմէ ՀՄԼՄ-ին եւ 1944-1945 տարեշրջանէն սկսեալ կը սկսի կրել «դեղին սատանաներ»ուն շապիկը:

ՀՄԼՄ-ի մէջ, Ժողէֆ Նալպանտեան խմբակիցներ կ'ուսնեայ Սաաթճիին, Եղիշը (յետսապահներ), Վարդանը (աջ յետ-

սպաս), Կիրակոսը (ձախ յետսպաս), Յովհաննէսը (միջնապաս), Սարգիս Ազնաւուրեանը, Վարդիվառ Յովհաննէսեանը, Մանուէլ Ալթունեանը, Ստեփան Մելիքսէթեանը եւ ուրիշներ: Յաջողութիւնները կը յաջորդեն իրարու: Այս միջոցին, Նալպանտեան հայերէնի անձնական դասեր կը ստանայ խմբակից Ստեփան Մելիքսէթեանէն եւ 25 տարեկանին ետք հայերէն գրել-կարդալ կը սորվի շնորհիւ Հ.Մ.Լ.Մ-ին, որ Փութպոլի ժողովներուն կը պարտադրէր միայն հայերէն խօսիլ:

Իբրեւ Հ.Մ.Լ.Մ-ի մարզիկ, Ժողէֆ Նալպանտեանի առաջին յաջողութիւնը կ'ըլլայ 1945-1946 տարեշրջանին Լիբանանի Փութպոլի ախոյեանութեան նուաճումը: Երկու տարի ետք նուաճումը կը կրկնուի եւ խումբը կը տիրանայ նաեւ Լիբանանի բաժակին եւ միջ-մասնաճիւղային խաղերու ախոյեանութեան:

Երեք տարի Հ.Մ.Լ.Մ-ի Փութպոլի խումբին մաս կազմելէ եւ ախոյեանական երկու տիտղոսի տիրանալէ ետք, 1948-ին, Ժողէֆ Նալպանտեան կը հրաւիրուի ստանձնելու խումբին մարզիչի պատասխանատուութիւնը: Սկզբնական հանգրուանին իրեն կ'օժանդակեն Փութպոլի իր կուռքերը՝ Սաաթճին, Եղիշը եւ երիտասարդ Վարդիվառ Յովհաննէսեանը: 1950-ին, ան մարզումի դասընթացքի մը կը հետեւի Ֆրանսայի մէջ: Կը կատարելագործէ իր գիտելիքները եւ կը հարստացնէ Տէ-Աշ-Փէ-ի հունգարացի մարզիչ Հերզընկըրէն իր սորվածները: 1952-ին, ան Ֆրանսա կը մեկնի մարզումի երկրորդ դասընթացքի մը համար եւ վերադարձին կատարելապէս կը տիրապետէ Փութպոլի բոլոր գաղտնիքներուն:

Մարզիչ Ժողէֆ Նալպանտեանի հետ Հ.Մ.Լ.Մ-ի Փութպոլի խումբը կը նուաճէ նոր որակ եւ մակարդակ: Նալպանտեան խումբը կը գլխաւորէ 25 տարի շարունակ, աննման խումբ մը խաղացողներով միութեան ապահովելով ախոյեանական չորս տիտղոս (1951, 1955, 1963, 1969), Լիբանանի բաժակ (1962), «Ապի Շահլա» մրցաշարքի ինը առաջնութիւն եւ



«Էտմոն Ռըպէյզ» մրցաշարքի երկու ախոյեանութիւն: 1970-ին, իր գլխաւորութեամբ, Հ.Մ.Լ.Մ-ի Փութպոլի խումբը կը գրաւէ Ասիոյ ակումբներու ախոյեանութեան երրորդ դիրքը:

Հ.Մ.Լ.Մ-ի յաջողութիւնները աննկատ չեն անցնիր Լիբանանի Փութպոլի պատասխանատուներէն, որոնք Ժողէֆ Նալպանտեանը կը հրաւիրեն մարզելու Լիբանանի Փութպոլի ազգային հաւաքականը: Նալպանտեան հաւաքականը կը մարզէ 1960-1970:

Մարզական իր գործունէութեան առընթեր, Ժողէֆ Նալպանտեան կ'ունենայ վարչական բեղուն կեանք: 1946-ին ան մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրուէի մասնաճիւղի Փութպոլի յանձնախումբին: 1951-1964 ան մասնաճիւղի վարչական է, 1962-ին եւ 1963-ին ատենապետի պաշտօնով: 1965-1971, երեք շրջան, ան անդամ է Հ.Մ.Լ.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը, 1975-1990, պատճառ կը դառնայ որ Փութպոլին ու մարզական կեանքը ծանր հարուած ստանան երկրին մէջ: Խումբերու գործունէութիւնը կը դադրի: Կը շարունակէ գործել Լիբանանի Փութպոլի ֆետերասիոնը, որուն՝ Նալպանտեան երկար տարիներ մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի ներկայացուցիչի հանգամանքով: Իբրեւ ֆետերասիոնի անդամ, ան Լիբանանը կը ներկայացընէ բազմաթիւ մրցաշարքերու: Կը հաստատէ ծանօթութիւններու լայն շրջանակ եւ Լիբանանի Փութպոլի ֆետերասիոնը կը ներկայացնէ Ասիոյ Փութպոլի ֆետերասիոնին մօտ, արժանանալով օտարներու տեւական գնահատանքին:

Ժողէֆ Նալպանտեան կեանքին հրաժեշտ կու տայ 1 Յունուար 1990-ին, 71 տարեկանին, իր ետին ձգելով փայլուն Փութպոլիստի, հեղինակաւոր մարզիչի եւ հմուտ վարչագէտի անուն եւ հռչակ:





ՄԻՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԲԱՆԻՆ ՀԱԻԱՏԱՐԻՄ՝


# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԿՈՂՄԷ ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՏՈՒՓԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ՝ 400 ԿԱՐԻՔԱԲՈՐ ԸՆՏԱՆԻՔԻ

Հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբան «Բարձրացիր՝ բարձրացուր»ին եւ սկառուտական դաւանանքին, անցնող Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը ճեռնարկեց բարեսիրական օրինակելի աշխատանքի մը՝ նպատակ ունենալով օժանդակել Քորոնայի համաճարակին պատճառով ընկերային անապահով կացութեան մատնուած հայրենի 400 ընտանիքներու:

Վարչութիւնը նախ կազմակերպեց նուիրահաւաք, ապա



հաւաքուած գումարով գնեց իւրաքանչիւր ընտանիքի մէկ ամսուան անմիջական անհրաժեշտ ուտելիքներ, զանոնք երեք հանգրուանով դասաւորեց-կոկեց յատուկ տուփերու մէջ եւ այնուհետեւ մաս առ մաս բաժնեց Երեւանի, Վարդենիսի, Սեւանի, Վայոց Ձորի, Կիւմրիի, Վանաձորի եւ Հայաստանի այլ շրջաններու մէջ, իւրաքանչիւր ընտանիքի նկատի ունենալով երկու տուփ:



Կ'արժէ նշել, որ նուիրահաւաքի աշխատանքին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մասնաճիւղերու անդամներ (նուիրատուներուն ցանկը տեսնել առանձին):

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄՆՆԴԱԲԱՇԽՈՒՄԻ ՆՈՒԻՐԱՀԱՒԱՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ	
Օշին Փիրումեան	500 \$
Պոյաճեաններ	150 \$
Ա. Եաղմուրեան	50 \$
Վաչէ-Արսէն	100.000 դրամ
Մի ոմն	50.000 դրամ
Վ.Ս.	10.000 դրամ
Ռ.Տ.	10.000 դրամ
Ե.Ա.	10.000 դրամ
«Շաւարշ Քրիսեան» մսնճ.	30.000 դրամ
Սանտրա Վարդանեան	100 \$
Շուշան Սելիքեան	50 \$
Յարութ Գաբրիէլեան	200 \$
Անաշէ Նազարեան	100 \$
Շանթ Ղազարեան	100 \$
Կենադի Ղազարեան	30.000 դրամ
Դաւիթ Յակոբեան	50.000 դրամ
Մի ոմն	15.000 դրամ
Պէթի Ասլանեան	10.000 դրամ
Յովիկ Սրապիոնեան	10.000 դրամ
Արի Չէօրէքճեան	20.000 դրամ
Ռաֆֆի Սելիքսէթեան	10.000 դրամ
Արմէն Փօլատեան	20.000 դրամ
Յովիկ Կեօզիւպէտյիքեան	50.000 դրամ
Ալին Ասատուրեան	100 \$
Մարօ Քէշիշեան	50.000 դրամ
Գեորգ Օհանեան	15.000 դրամ
Սիրեկան Այվազեան	5000 դրամ
Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջ. Վարչութիւն	3100 \$
Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջ. Վարչութիւն	500 \$





## Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ Կ'ՕԺՏՈՒԻ ՆՈՐ ԿԵԴՐՈՆՈՎ

Մարո Քեչիշեան  
ԵՐԵՒԱՆ

**16** -17 Մայիս 2020-ի շաբաթավերջը յատկանշական եղաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի մեծ ընտանիքին համար: Բեղուն գործունէութեան երկօրեակ մը, որ անկասկած լաւ յիշողութիւններ ձգեց մասնակից միութենականներուն մօտ:

Շաբաթ, 16 Մայիսի կէսօրէ ետք ժամը 3-ին, Արմաւիր քաղաքին մէջ օրհնութիւնը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Արմաւիրի մարզային կեդրոնին, որուն ներքնայարկի կմախքը արդէն իսկ պատուած է եւ շինարարութիւնը պիտի շարունակուի անոր վրայ բարձրացող երկու յարկերուն:

Շրջանի հայ երիտասարդութեան համախմբման խիստ էական նկատուող այս կեդրոնը շօշափելի իրականութիւն դարձաւ Արեւմտեան Մ. Նահանգներէն նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական էմիլ Մաղաքեանի եւ անոր ընտանիքին նուիրատուութեամբ: Կեդրոնը պիտի կոչուի «Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Վարդան Բախչեան» կեդրոն, անմահացնելով Արմաւիրի մասնաճիւղի հիմնադիր, նահատակ ազատամարտիկ Վարդան Բախչեանի յիշատակը:

Այս ուրախ առիթով օրհնութեան վայր ժամանած էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Դաւիթ Յակոբեան, Համաշխարհային Սկստուական Շարժման Եւրասիոյ Կոմիտէի նախագահ Բագրատ Եսայեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան անդամներ՝ ատենապետ Սանտրա Վարդանեան, Շուշան Մելիքեան, Անաչէ Նազարեան եւ Խորէն Նազարեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի

Երեւանի մարզային վարչութեան անդամ Ալէն Ասատուրեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ընդհանուր խմբապետ Գէորգ Օհանեան, Բախչեան ընտանիքը, Արմաւիրի մասնաճիւղի վարչութեան կազմը, անցեալի խմբապետներ, արի-արեւոյշներ, գայլիկ-արծուիկներ եւ այլ հիւրեր:

Ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Արմաւիրի մասնաճիւղի վարչութեան ատենապետ Նարէ Խլղաթեան, որ ներկայացնելէ ետք օրուան պաշտօնական հիւրերը, բացատրեց իրագործելի յայտագիրը եւ անդրադարձաւ 1992-ին հիմնուած մասնաճիւղին պատմականին, անցած ուղիին եւ սեփական կեդրոն ունենալու երազանքի իրականացման: Քոյրը մասնաճիւղին անունով շնորհակալութիւն յայտնեց Մաղաքեան ընտանիքին, որուն նուիրատուութեան շնորհիւ իրականութիւն դարձած է ակնարկուած կեդրոնին շինարարութիւնը: Ան նաեւ երախտագիտութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Կեդրոնական Վարչութեան, մասնաճիւղի խմբապետական կազմին եւ բոլոր անոնց, որոնք իրենց օգտակար ներդրումը ունեցան մասնաճիւղի հզօրացման եւ կեդրոնի իրականացման:

Ապա հրաւիրեց շրջանի Ս. Նարեկ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տաճատ Քահանայ Ինջիկուլեանը, որ օրհնեց կեդրոնին շինարարութիւնը եւ մաղթեց, որ նորակառոյց կեդրոնը շրջանի նորահաս սերունդներու դաստիարակութեան իսկական կեդրոնը կը հանդիսանայ:

Կեդրոնական Վարչութեան անունով Հ.Մ.Ը.Մ.ի գեղեցիկ օճախին կառուցումը շնորհաւորեց Դաւիթ Յակոբեան: Ան ցաւ յայտնեց, որ անձնապէս չէ ճանչցած Վարդան Բախչեանը, սակայն անոր մտերիներուն միջո-





ցով ճանչցած է անոր էությունը եւ համոզում յայտնեց, որ «Եղբ. Վարդան Բախչեանը բացի սկառուտական, համամարդկային ու Հ.Մ.Ը.Մ.ական մեր երազանքներից, առաջնահերթ մի մեծ երազանք ունէր, տեսնելու ազգային սերունդը, երկրին նուիրուած, մեր պետութեան, մեր ազգային արժէքների, գաղափարների նուիրուած սերունդ: Այս կազմակերպական աշխատանքը, այս կեդրոնը ոչինչ կը լինի, եթէ կրելով Վարդան Բախչեանի անունը, մենք չկարողանանք Արմաւիրում դաստիարակել Վարդան Բախչեանի արժանի սերունդը, որոնք իրանց գործունէութեամբ, իրանց կեանքով, իրանց ուժով մասնակից կը լինեն մեր երկրի պետութեան, մեր երկրի շինարարութեան գործին»:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կեդրոնական Վարչութեան շնորհաւորանքները փոխանցեց Սանտրա Վարդանեան, որ անդրադառնալով կեդրոնի անուանման, ընդգծեց, թէ կեդրոնը կրելով Վարդան Բախչեանի անունը մեզի համար կը դառնայ պարտաւորեցնող, յուզիչ եւ մանաւանդ յուսադրող: Քոյրը վստահութիւն յայտնեց, որ մասնաճիւղի գայլիկներու ծնող բարեխիղճ շինարարները, մեծ թափով կը շարունակեն իրենց աշխատանքը եւ կարճ ժամանակուան ընթացքին կ'ամբողջացնեն այնքան սպասուած կեդրոնին շինարարութիւնը, որ պէսզի անոր բացումը պատշաճօրէն կատարուի եւ անցնի հայրենանուէր իր աշխատանքին:

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ նահատակ Վարդան Բախչեանի մայրը՝ Այտա Բախչեան: Ան երախտագիտութիւն յայտնեց նորակառոյց կեդրոնը իր զաւկին անունով կոչելու որոշումին համար եւ յաջողութիւն մաղթեց մասնաճիւղին ապագայ աշխատանքներուն:

Ապա մասնաճիւղէն գայլիկ մը եւ արծուիկ մը, քահանայ հօր օրհնութեամբ, երկու

ճերմակ աղաւնիներ բաց ձգեցին դէպի երկինք, իբրեւ խորհրդանիշ՝ խաղաղութեան եւ յաջողութեան:

Այնուհետեւ, ներկաները իրենց բարեմաղթանքները արձանագրեցին գայլիկ-արծուիկները յատկանշող դեղին փողկապի մը վրայ, որ ապակեայ շիշի մը մէջ զետեղելէ ետք, Այտա Բախչեանի եւ մասնաճիւղի առաջին խմբապետուհի Ռուզան Թամրազեանի կողմէ տեղադրուեցաւ կեդրոնին հիմքը, իբրեւ աշխատանքային մաղթանքներ, կեդրոնէն ներս դաստիարակուող յաջորդող սերունդներուն:

Յուսադրող այս արարողութիւնը վերջ գտաւ միասնական «Տէրունական» աղօթքով: Մեծապէս տպաւորուած ներկաները, Սարգարապատի յաղթանակը խորհրդանշող յուշարձանը սկառուտական փողկապով զարդարուած գեղեցիկ կրծքագարդ մը ստանալէ ետք, հիւրընկալուեցան մասնաճիւղին գործունեայ անդամներէն Սիրակ եւ Յասմիկ Այվազեաններու բնակարանը: Հրամցուած համադամ ճաշերուն առընթեր, ներկաները խրախճանքի ուրախ մթնոլորտին մէջ իրենց բարեմաղթանքները փոխանցեցին կեդրոնին մէջ տարուելիք աշխատանքներուն համար եւ յոյս յայտնեցին, որ ան Արմաւիրի մարզի Հ.Մ.Ը.Մ.ականներուն դաստիարակութեան դարբնոցը կը հանդիսանայ:



ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՏ Կ՝ՕԳՆԷ ՈՒՐԻՇԻՆ

Կիրակի, 17 Մայիս 2020-ին, մեղուի փեթակի վերածուած էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կեդրոնը, ուր բարեգործական աշխատանք կազմակերպելու համոզումով, համախմբուած էին միութեան կեդրոնական Վարչութեան անդամներն ու սկառուտական իրենց դաւանանքին հաւատարիմ շրջանի արիւարենոյշներու եւ խմբապետ-խմբապետուհիներու խումբ

մը: Անոնք եկած էին ազգային իրենց պարտականությունը կատարելու հայրենի ժողովուրդի այն հատուածին նկատմամբ, որ Քորոնա ժահրի տարածման այս դժուարին օրերուն, իր տուններուն մէջ բանտարկուած, օգնութեան կարիքը ունի:

Անձնագոհ այս երիտասարդները, իրենց ղեկավարներուն հետ միասին, ուսեստեղէնի 400 տուփեր պատրաստեցին, այն նախատեսութեամբ, որ զանազան մարզերու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մասնաճիւղերու անդամներու միջոցով պիտի տրամադրուին կարիքաւոր ընտանիքներու, ձերբազատելով զանոնք գէթ քանի մը օրուան ուսելիքի մտահոգութենէն: Անոնք նոյնանման աշխատանք կատարած էին նաեւ նախորդ շաբթուան ընթացքին: Այսպիսով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Հայաստանի մեծ ընտանիքը ցարդ 400 կարիքաւոր ընտանիքներու համար պատրաստած է ուսեստեղէնի 800 տուփեր, իւրաքանչիւր ընտանիքի նկատի ունենալով երկու տուփ:

«Բնական է, այսքանով չենք աւարտում մեր աշխատանքը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը պիտի շարունակի իր բարեգործ աշխատանքը, օգնելով մեր ժողովրդի կարիքաւոր հատուածին: Վերջապէս Հ.Մ.Ը.Մ-ը ծնունդ է առել, դաստիարակելու համար առողջ սերունդներ, որպէսզի նրանք օգտակար հանդիսանան իրենց ազգին ու հայրենիքին: Ահա էս աշխատանքը ակնարկուած նպատակներից մին է», ըսաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան, որ



ընդգծելով Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդի ազգանուէր գործունէութիւնը, նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն նուիրատուներուն, որոնք սատար կը կանգնին հայրենանըպաստ այս աշխատանքին:

Քոյրը համոզում յայտեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը հաւատարիմ մնալով «Բարձրացի՛ր-բարձրացուր» իր նշանաբանին, պատրաստակամութեամբ պիտի շարունակէ իր առաքելութիւնը «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» կարգախօսով եւ պիտի շարունակէ ծառայել իր ազգին, հայրենիքին ու եկեղեցիին:



## ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿ ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Ուրբաթ, 24 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկաուտներու պատուիրակութիւն մը, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեանի, Կեղրոնական Վարչութեան նախկին անդամ եւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոասիական տարածաշրջանի նախագահ եղբ. Բագրատ Եսայեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեանի, այցելեց Հայաստանի Ֆիզիքական կուլտուրայի եւ մարմնամարզի պետական հիմնարկի մուտքին կանգնեցուած Շաւարշ Քրիսեանի կիսանդրին եւ ծաղիկներ մատուցեց անոր յիշատակին:

Շաւարշ Քրիսեան 24 Ապրիլ 1915-ին ձերբակալուած եւ ապա սպաննուած Հ.Մ.Ը.Մ-ի ռահվիրայ հիմնադիրն է, որ Հայաստանի մէջ առաջին անգամ ըլլալով կ'արժանանայ նման յարգանքի: Կիսանդրին Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ կանգնեցուած է 14 Հոկտեմբեր 2019-ին, Հ.Մ.Ը.Մ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին նախօրեակին:





# ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՂԿԱՊԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ

## Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

**Շ**աբաթ, 8 Մարտը յիշատակելի օր մը եղաւ Հ.Մ.-Ը.Մ.ի Արցախի Մեկուսի մասնաճիւղին համար, որուն սկաուտներու երկրորդ խումբը պատուով

կատարեց Նորագլուխի իր քննութիւնը եւ նուիրական խոստումով արժանացաւ փողկապ կրելու իրաւունքին:



Խոստման արարողութիւնը տեղի ունեցաւ Արցախի նահատակ ազատամարտիկ Բեկորի (Աշոտ Ղուկասի)

Ստեփանակերտի յուշարձանին մօտ, ներկայութեամբ Արցախի Ազգային Ժողովի Դաշնակցութեան խմբակցութեան ղեկավար Արմէն Սարգսեանի, Հ.Յ.Դ.ի անդամներու, սկաուտներու, ծնողներու եւ հիւրերու:

Այս առիթով մամուլին իր կատարած յայտարարութեան մէջ, մասնաճիւղի ատենապետ եղբ. Վրէժ Էսմերեան յայտնեց, որ արցախցի պատանիները ոգեւորուած են սկաուտական գաղափարներով: Մասնաճիւղը լծուած է իր հիմնական նպատակին՝ կարգապահ, կազմակերպուած երիտասարդներու պատրաստութեան:

Յայտնենք, որ 28 Փետրուարին, Արցախի սկաուտները այցելեցին Սումկայիթի զոհերու յուշարձան եւ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին 32 տարի առաջ նոյն օրը Ազրպէյճանի Սումկայիթ քաղաքին մէջ դաժանաբար սպանուած բազմահարիւր հայերու յիշատակին:

Նախօրոք, 16 Փետրուարին, սկաուտները յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի առաջին նախագահ, Արցախեան շարժումի մասնակից, հայրենիքի նուիրեալ Արթիւր Մկրտչեանի յիշատակին:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԲՂԻՆ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

## Թղթակից ՄՈՍԿՈՒԱ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի մասնաճիւղը վերջին ամիսներուն ունի բաւական աշխոյժ գործունէութիւն: Հոկտեմբեր 2019-Փետրուար 2020, մասնաճիւղը գործեց նշանակովի իննանդամ վարչութեամբ մը, որուն մաս կազմեցին եղբ. Անդրանիկ Առուստամեան (ատենապետ), քոյրեր Լարիսա Յակոբեան (ատենադպիր), Տիանա Թաւադաւեան (գանձապահ), Աշխէն Պատալեան, Ժաննա Յարութիւնեան, Թեհմինէ Կարապետեան, Նելլի Մելքոնեան, եղբայրներ Դրօ Գնտոյեան եւ Արթիւր Գրոզեան:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԶՐԱՍ ԱՐՔ. ՆԵՐՍԻՍԵԱՆԻ...

Իր աշխատանքներուն սկիզբը, վարչութիւնը ներկայացընող պատուիրակութիւն մը այցելեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի Թեմի Առաջնորդ Եզրաս Արք. Ներսիսեանի եւ անոր ներկայացուց մասնաճիւղին աշխատանքները:

### ... ԵՒ ԿԻՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այնուհետեւ, վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Առուստամեան Հայ Դատի Մոսկուայի գրասենեակին մէջ հանդիպում մը ունեցաւ Ռուսիոյ Տվերի մարզի Կիմրի քաղաքի նորաստեղծ հայ համայնքի կազմակերպութեան ներկայացուցիչներուն հետ:

Հանդիպումին ընթացքին արծարծուեցան Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ սփիւռքեան դերակատարութեան վերաբերող հարցեր: Քննարկուեցաւ նաեւ Կիմրի քաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խումբ ստեղծելու եւ շաբաթական գործունէութիւն կազմակերպելու կարելիութիւնները:

Կողմերը պայմանաւորուեցան հետագային կրկին հանդիպել:

## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Մասնաճիւղը կազմակերպեց հայագիտական եւ սկստական նիւթերով զարգացման մրցում մը, որուն մասնակցեցան Մոսկուայի եւ մերձակայ Բալաշիխայի, Մոժայսկի, Եարոսլաւլի եւ Պերեսլաւլի Հ.Մ.Ը.Մ.ական սկստները: Մրցու-





մը յաղթեցին Եարոսլավ- լի սկաուտները: Այս առիթով, բոլոր սկաուտ- ները ստացան զարգաց- ման մրցումին մասնակ- ցութեան վկայագիրներ:

**ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐՇԱԻ**

1-2 Փետրուարին, մասնաճիւղին վարչու- թիւնը կազմակերպեց եր- կօրեայ արշաւ, որուն մասնակցեցան Մոսկուա- յի, Բալաշիխայի, Իստ- րայի, Եարոսլավի եւ Պե- րեսլավի սկաուտները:

Արշաւին մասնակցեցան չորս խումբեր.- «Հպարտ ար- ծիւններ», «Արարատ», «Անի» եւ «Արագած»:

Նախատեսուած ճանապարհը բաղկացած էր ինը կէտե- րէ, որոնցմէ իւրաքանչիւրին տեղը գիտնալու համար անհը- րաժեշտ էր պատասխանել հալածարարական, սկաուտական եւ ընդհանուր զարգացման նիւթերով շարք մը հարցումնե- րու եւ այնուհետեւ կատարել յաւելեալ առաջադրանքներ:

Բոլոր խումբերէն առանձնակի յաջողութեամբ հանդէս եկան «Հպարտ արծիւններ»ը եւ «Անի»ն: Յաղթեց «Անի» խումբը:

Արշաւին յաջորդ փուլը կատարուեցաւ գրասենեակի մէջ:

Սկաուտներուն հայկական բանակի կազմութեան մա- սին հետքըրական դասախօսութիւն մը ներկայացուց Հ.Յ.Դ. Մոսկուայի Հայ Դատի յանձնախումբի անդամ, քա- ղաքազէտ Սէյրան Պաղտասարեան:

Այնուհետեւ, ընթրիքէն ետք սկսաւ ժամանցի բաժինը՝ այլազան խաղերով, ազգային երգերով ու պարերով:

Յաջորդ օրը, առաւօտեան, մասնակիցները իրենց տու- ները մեկնեցան դարձեալ հանդիպելու ակնկալութեամբ:

**ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

23 Փետրուարին, մասնաճիւղը կատարեց անդամական իր ընդհանուր ժողովը եւ ընտրեց մէկ տարուան համար նոր վարչութիւնը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Բագրատ Եսայեանի:

Նորընտիր վարչութիւնը դիւանի կազմութեանէն ետք պարզեց հետեւեալ պատկերը.-

- Եղբ. Անդրանիկ Առուստամեան- ատենապետ
- Եղբ. Դրօ Գնտոյեան- փոխ ատենապետ
- Քոյր Լարիսա Յակոբեան- ատենադպիր
- Քոյր Ժաննա Յարութիւնեան- գանձապահ
- Քոյրեր Աշխէն Պատալեան, Տիանա Թաւազալեան եւ եղբ. Արթիւր Ռաւոյեան- խորհրդականներ:



**Թղթակից ԵՐՈՒՍԱՐԵՍ**

Շաբաթ, 25 Յունուար 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսա- ղէմի մասնաճիւղի վարչութեան անդամները մա- նակցեցան Հայաստանի նախագահ Արմէն Սարգս- եանի եւ տիկնոջ ի պատիւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Նուրհան Արք. Մանուկեանի կազմակերպած ընդունելու- թեան:

Կ'արժէ նշել, որ նախագահ Սարգսեան եւ տիկինը Պատր- իարքարան հասնելով նախ շրջայց մը կատարեցին վանքին շրջափակին մէջ գտնուող սրբատեղիներ եւ հաստատութիւն- ներ, ապա Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ անոնց ցուցադրուեցաւ գանձատունէն յատկապէս դուրս բերուած բացառիկ գանձեր, որոնց մէջ էին Կեռան թագուհիի Աւետա- րանը, Կորոտ Պատրիարքի Աւետարանը, ինչպէս նաեւ՝ Հե- թում թագաւորի հուշակաւոր գաւազանը:

Ապա, նախագահ Արմէն Սարգսեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Ս. Հրեշտակապետաց Վանքը,





## **Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԱՄՆԱԾԻՂԻՆ ԱՇԽՈՅԺ ԱՌՕՐԵԱՅԷՆ**

Սուրբ Ծառ եւ Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարան, ուր յիշատակի տետրակին մէջ նախագահ Սարգսեան արձանագրեց երկտող մը: Յաջորդեց նախագահին ի պատիւ կազմակերպուած ընդունելութիւնը, որուն ներկայ գտնուեցան Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներ, Երուսաղէմի հայեր, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւններու անդամներ:

### **ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԸ**

Շաբաթ մը առաջ, 18 Յունուար 2020-ին, Բեթղեհէմ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Ս. Ծննդեան սօնի (Պաղեստինի հայրութիւնը հին տոմարով 13 Յունուարին կը նշէ նոր տարին, իսկ 18 Յունուարին՝ Ս. Ծննդեան սօնը՝ «Մ.») աւանդական տողանցքը, ուր մասնաճիւղին սկառուական շեփորախումբը

դիմաւորեց եւ առաջնորդեց Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանը՝ Բեթղեհէմ քաղաքի մուտքէն դէպի Ս. Ծննդեան տաճար:

### **ՄԱՄՆԱԾԻՂԻՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ**

Յայտնենք, որ տարեշրջանին սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը յատուկ ժամադրութեամբ մը այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում մը ունեցաւ Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանի հետ: Հանդիպումին ընթացքին, մասնաճիւղի նորընտիր ատենապետ եղբ. Յարութ Պաղամեան Պատրիարք Հօր ներկայացուց միութեան վարչական կազմի անդամները: Պատրիարքը շնորհակտրեց վարչականները եւ յաջողութիւն մաղթեց մասնաճիւղի աշխատանքներուն:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան միութիւնը եւ գաղութը յուզող կարգ մը հարցեր, ապա Պատրիարք Հօր ներկայացուեցաւ քրիստոնեայ համայնքներու երիտասարդական Ֆուլթայլի 5-րդ մրցաշարքին Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմի նըւաճած ախոյեանութեան բաժակը:

Հանդիպումէն ետք, մասնաճիւղին վարչական կազմի անդամները, ընկերակցութեամբ Պատրիարք Հօր գաւազանակիր եւ անձնական քարտուղար Ներսէս Արք. Ալոյեանի շրջայց մը կատարեցին Պատրիարքարանի կամարներուն տակ՝ ծանօթանալով անոր դարաւոր պատմութեան եւ այժմու գործունէութեան:





# ԳԱՅԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի Ա. ԿԱՐԳԻ ԵՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

**Գ**ահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» մասնաճիւղի սկսողական Ա. կարգի եռօրեայ սեմինարը տեղի ունեցաւ 27-29 Յունւար 2020-ին, «Յուսաբեր» կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ մասնաճիւղի խմբապետական կազմին եւ Սկսողական խորհուրդին, մասնակցութեամբ եօթը թեկնածուներու՝ Արի խմբակէն եղբայրներ Կարէն Թորոսեանի եւ Աշոտ Քէօճիւլեանի, Արենոյ խմբակէն քոյրեր Կարին Կրպոյեանի, Սանտրա Մունիրի եւ Նաթալի Սրայպեանի:

Մասնաճիւղի վարչութեան առաջարկով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան տնօրինումով, սեմինարին դասախօսական նիւթերուն ներկայացման իրենց մասնակցութիւնը բերին յատկապէս Լիբանանէն հրաւիրուած քոյրեր Նարոտ Քէչէպաշեան, Արզնի Արսլանեան եւ Հայաստանէն եղբ. Արթիւր Մկրտչեան: Նիւթ մըն ալ՝ Եգիպտոսի հայ գաղութին մասին, ներկայացուց մասնաճիւղի ատենապետ եղբ. Լեւոն Գեղիքեան:

Սեմինարին տեսական բաժինին բաժինին յաջորդեց գործնական բաժինը՝ մասնաճիւղին տարեկան բանակումին ընթացքին, որ տեղի ունեցաւ 30 Յունւարէն 2 Փետրուար 2020, Գահիրէի արուարձաններէն էլ Օպուր շրջանին մէջ (Այս մասին տեսնել առանձին, էջ 55-56):

Բանակումին կատարուեցաւ թեկնածու եօթը քոյր-եղբայրներուն Ա. կարգի աստիճաններու տուչութիւնը:

Սեմինարը ընդգրկեց հետեւեալ նիւթերը-

- Առաջին Օր**
  - Գիտնալ դրօշակին իմաստը, բարեւելու եւ գործածելու ձեւերը, արարողութիւնները:
  - Գիտնալ եւ հաղորդակցիլ մորսով, օգտագործելով լատինատառ եւ հայկական այբուբենը, ինչպէս նաեւ կարենալ կազմել եւ օգտագործել մորսի մեքենայ մը:
  - Գիտնալ ի՞նչ ըսել է հետազօտական արշաւ-բանակում:
  - Գաղափար ունենալ Եգիպտոսի հայ գաղութին կազմութեան եւ ընդհանուր կառոյցին մասին, ծանօթանալ երկրի վարչական բաժանումներուն եւ վարչամեքենային:
- Երկրորդ Օր**
  - Գիտնալ եւ բացատրել ազգ եւ հայրենիք բառերուն իմաստը: Գիտնալ նաեւ Հայաստանի աշխարհագրութիւնը:
  - Գաղափար ունենալ Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներուն մասին: Ծանօթանալ Հայ Եկեղեցւոյ Պատարագին եւ հայ յարանուանութիւններուն:
  - Գիտնալ խարուկահանդէսին նպատակը:







տակը, յայտագիրը եւ մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ՝ խարուկահանդէսներու տեսակները:

- Գիտնալ աստիճանաւորական ժողովին հանգամանքը, կարեւորութիւնն ու պարտականութիւնը:
- Արցախեան պահանջատիրութիւնը:

Երրորդ Օր

- Սկառուտ. արարողութիւններ (Ա.):
- Հայաստանի նորանկախ Հանրապետութիւնը:
- Սկառուտ. արարողութիւններ (Բ.):
- Գիտնալ խումբ վարել եւ գործունէութեան մը յայտագիրը պատրաստել:

- Գիտնալ մեկնաբանել Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտութեան նպատակը:
- Գիտնալ արշաւ-բանակումի եւ այլ ձեռնարկներու տեղեկագիրները պատրաստելու ձեւերը:
- Գիտնալ դիւանական աշխատանքի եղանակը:

## ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

### Թղթակից ԳԱՀԻՐԷ

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ» մասնաճիւղի Ա. կարգի եռօրեայ սեմինարէն ետք, Հինգշաբթի, 30 Յունուար 2020-ին, Գահիրէի արուարձաններէն Ալ Օպուրի մէջ ընթացք առաւ մասնաճիւղին եռօրեայ բանակումը, մասնակցութեամբ 45 սկառուտներու, Ա. կարգի դասընթացքի մասնակից քոյր-եղբայրներու եւ դասախօսական յատուկ կազմի՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն եղբ. Արթիւր Մկրտչեանի, Հ.Մ.Ը.Մ. Լիբանանէն քոյրեր Նարօտ Քէչէպաշեանի եւ Արզնի Արսլանեանի:

Բանակումը անցաւ միութենական խանդավառ մթնոլորտի մէջ: Ամէնօրեայ յայտագիրը ընդգրկեց դրօշակի արարողութիւն, վրաններու քննութիւն, նախաճաշ, մարզանք, արշաւ եւ դասախօսութիւններ:

Արշաւին ընթացքին, Ա. կարգի թեկնածուները ստանձնեցին խարոյկի պատրաստութեան աշխատանքը: Անոնք միասնաբար որոշեցին խարուկահանդէսին

ընթացքը եւ ըստ այնմ կատարեցին փորձեր: Ապա, բանակավայր վերադառնալով, անոնք ճաշեցին, հանգիստի կարճ դադար մը ունեցան, որմէ ետք հետեւեցան դասախօսութեան մը: Գիշերը, խարոյկին շուրջ բոլորուած, բոլորը երգեցին ու պարեցին ուրախ մթնոլորտի մէջ: Կէս գիշերին, մասնաճիւղին պատգեթպոլի խումբէն հինգ եղբայրներ «յարձակում մը» կատարեցին բանակավայրին վրայ, չարքաշ խաղի հաճելի փորձառութիւն մը ապրելով միասնաբար:





Բանակումին երկրորդ օրը սկսաւ սովորական յայտագիրով: Գայլիկ-արծուիկները զբաղեցան ձեռնարկին աշխատանքներու պատրաստութեամբ, իսկ արի-արենոյճները համախմբուեցան դասախօսութեան սրահը, ուր եղբ. Արթուր Մկրտչեան ներկայացուց Արցախի քառօրեայ պատերազմը: Այնուհետեւ, քոյրեր Նարօտ Քէչէպաշեան եւ Արզնի Արսլանեան նկարներով ներկայացուցին Արարատը նուաճելու իրենց փորձառութիւնը, ինչ որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց բանակողներուն մօտ:

Կէսօրէ ետք, ծնողները ներկայացան բանակավայր, ուր տեղի ունեցան դրօշակի եւ խոստման արարողութիւններ: Ա. կարգի հինգ թեկնածուներ՝ քոյրեր Կարին Կրպոյեան, Սանտրա Մունիր, Նաթալի Սրապեան, եղբայրներ Կարէն Թորոսեան եւ Աշոտ Քէօհնեւեան ստացան Ա. կարգ: Պահը հասաւ խարուկահանդէսի: Սկսուեցան շքերթը կը բացկտէին ուրախութեամբ: Անոնք սեփական ուժերով պատրաստած էին խարուկահանդէս մը եւ անհամբեր էին զայն իրենց ծնողներուն ներկայացնելու: Խարուկահանդէսը անցաւ մեծ յաջողութեամբ եւ ծնողներ բանակավայրէն մեկնեցան գոհունակ տրամադրութիւններով:

Վերջին օրը, Կիրակի, 2 Փետրուարին, բանակավայրը կամաց-կամաց վերագտաւ իր նախկին տեսքը: Վրանները եւ դրօշակի ձողերը վերցուեցան: Ամէն ինչ հաւաքուեցաւ: Մնացին միայն հաճելի եւ անմոռանալի յիշատակներ:



Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Սկսուողական Խորհուրդին, կազմակերպութեամբ Շրջանային խմբապետութեան, միջ-մասնաճիւղային խմբապետական դաստիարակչական սեմինար մը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի ձիւնի ապրիլին մէջ: Սեմինարը նպատակադրեց.-

- Կազմակերպչական աշխատանքներով եւ արդիական ձեւերով կիրարկել սկսուողական աշխատանքներն ու յայտագիրները:  
- Խմբապետներու համագործակցութեան ոգին բարելաւել:

- Կարգապահական միջոցներու օգտագործման կարեւորութիւնը շեշտել:

- Զօրացնել ծնողք-խմբապետ-անդամ եռակողմանի յարաբերութիւններու կապը:

Սեմինարը ընդգրկեց նաեւ սկսուողական, կազմակերպչական եւ դաստիարակչական կարգ մը նիւթեր:

Առաջին նիւթն էր՝ «Ժողովական կեանք եւ կազմակերպչական աշխատանք»:

Ներկայացուց եղբ. Յակոբ Չալաքեան: Քոյր Վարդուկ Ֆունդլեան ներկայացուց սկսուողական աշխատանքներու ընթացքին կիրարկուելիք կարգապահական կանոնները եւ գործելաոճը, ինչպէս նաեւ՝ կարգապահական հրահանգներու անթերի գործադրութեան կարեւորութիւնը:

Ապա, մասնաճիւղի եւ միաւորի խմբապետները, գլխաւորութեամբ եւ հսկողութեամբ Շրջանային ճիւղի խմբապետները՝ քոյր Ռուբինա Խայեթ-Եսայեանի, եղբայրներ Ժագ Պէրպէրեանի եւ Տաթև Ագամեանի, գործնական օրինակներով ներկայացուցին սկսուողական արարողութիւններու ձեւերը, որպէսզի մասնաճիւղերը նոյնանման եւ ճշգրիտ ձեւով կատարեն սկսուողական իրենց արարողութիւնները:

Կատարուեցան հետեւեալ արարողութիւնները՝ կարգապահական հրահանգներու կողքին:

- Դրօշակի արարողութիւն:
- Մեծ կանչ:
- Արի-արենոյճներու խոստման արարողութիւն:

ԵՂԲ ՎԱՉԷ ԾԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ



13 Փետրուար 2020-ին, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէն պարգևատրեց մարզական կեանքի վաստակաշատ մը անչնաւորութիւններ, որոնց կարգին Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի անդամ, Լիբանանի հեծելարշաւի ֆեդերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Ծափուրեանը, որ Ասիոյ եւ Ֆրանսախօս երկիրներու ֆեդերասիոններուն մօտ սրանչնած է պատասխանատու բազմաթիւ պաշտօններ՝ շրջանին մէջ բարձր պահելով Լիբանանի անունը:



## **Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՀՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐԸ**

- Երէջ-պարմանուհիներու երդման արարողութիւն:
- Երէջ- պարմանուհիներու ընդունման արարողութիւն:
- Փոխանցման արարողութիւն (մոկլի, գայլիկ-արծուիկ, արի-արենոյշ, երէջ-պարմանուհի):
- Միաստղ, երկաստղ, վեցեակապետ, փոխ վեցեակապետ, վարիչ վեցեակապետ կոչումներու տուչութիւն:
- Աստիճանատուչութիւն:

Խումբի մը անդամներուն կապերը զօրացնելու համար անհրաժեշտ են խմբային խաղերը: Խմբապետները խաղացին կարգ մը խմբային խաղեր, ապա ճաշէ ու դադարէ ետք, զրոյցի միջոցով ներկայացուեցան խմբապետ-խմբապետ, խմբապետ-ծնողք, խմբապետ-անդամ կապն ու յարաբերութիւնը: զրուցավարն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ քոյր Թային Օրտողլեան: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Անթիլիասի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերու պատասխանատուներէն իւրաքանչիւրը ներկայացուց բաժին մը:

Սեմինարին վերջին նիւթը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենաետ եղբ. Վաչէ Նաճարեան: Նիւթն էր՝ «Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ուղեգիծը»:

Սեմինարին աւարտին մասնակիցներուն փոխանցուեցան արժեւորման թղթիկներ, ապա իւրաքանչիւրը ստացաւ սեմինարի մասնակցութեան հաստատագիրը:

Սեմինարի փակման արարողութեան ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբա-

նանի Շրջանային Վարչութեան անդամներ, մասնաճիւղերէ Սկաուտական Խորհուրդներու եւ վարչութիւններու անդամներ:

Շրջանային Սկաուտական Խորհուրդին կողմէ խօսք առաւ քոյր Արտա Զէյթունեան, ապա եղբ. Վաչէ Նաճարեանի ձեռամբ սկաուտական բարձրագոյն «Արարատեան» կարգ ստացան եղբայրներ Տաթև Աղամեան, Մկօ Գէորգեան եւ քոյր Աննա Քէօմպէճեան:

## **ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի Ներկայացուցչական 48-րդ ժողովը գումարուեցաւ Կիրակի, 12 Յունուար 2020-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Հրայր Մարուխեան» ժողովասրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան դիւանին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, հիւրերու, խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու, ինչպէս նաեւ Լիբանանի 10 մասնաճիւղերէ 53 լիազօր ներկայացուցիչներու:


Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընթերցեց վեցամսեայ գործունէութեան տեղեկագիրը, ապա ժողովը քննարկեց միութեան սկաուտական, մարզական, կազմակերպական, դաստիարակչական եւ քարոզչական աշխատանքներու իրավիճակը, յատկապէս երկրին ներկայ դժուարին պայմաններուն մէջ, եւ մշակեց ծրագիրներ յօգուտ միութեան եւ անդամներուն:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութեան կազմ՝ բաղկացած հետեւեալներէն.- եղբ. Րաֆֆի Սոււջողլեան, եղբ. Հայկ Թապագեան, քոյր Սիլվա Սաղրեան, քոյր Արտա Զէյթունլեան, եղբ. Լեւոն Սուրաջանեան, եղբ. Հրայր Սէթեան, եղբ. Յակոբ Սարգիս Քէշիշեան, եղբ. Սեպուհ Թոփալեան, եղբ. Սեւակ Աբրահամեան, քոյր Սոնա Պօղոսեան, եղբ. Ուիլսոն Քէօշկերեան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱՎԱՆ  
48-ՐԴ ԺՈՂՈՎԻ ԴԻՒՆ**



# ՔՈՅՐ ՎԱՐՂԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ



21 Յունուար 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Վարդինե Օհանեան-Գեորգեան նշանակուեցաւ Լիքանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար:

Քոյր Վարդինե Օհանեան-Գեորգեան ծնած է 1 Յունուար 1984-ին եւ յաճախած է Ազգային եղիշէ Մանուկեան վարժարան: Երկրորդական ուսումը ստացած եւ վկայուած է Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճէն: Այնուհետեւ, ան աւարտած է Լիքանանեան համալսարանի ընկերային գիտութիւններու բաժանմունքը: Ունի մագիստրոսի աստիճան՝ ընկերային հոգեբանութեան մէջ, Լիքանանեան համալսարանէն: Ունի նաեւ «Ծրագիրներու կառավարման» վկայական՝ Հայկազեան համալսարանէն:

2017-էն մինչեւ նախարար նշանակումը, քոյր Վարդինե տնօրէնն էր «Ձուարթնոց» յատուկ դաստիարակութեան կեդրոնին: 2013-2017 ան եղած է նոյն կեդրոնին ընկերային ծառայողը:

2007-2008, իբրեւ ընկերային ծառայող, ան աշխատած է Լիքանանի Հայոց թեմի Ազգային Առաջնորդարանին մէջ: 2005-2008 եղած է «Թռչնոց բոյն» ընկերային ծառայողը: Ամուսնացած է եւ ունի երկու զաւակ:

Քոյր Վարդինե Օհանեան-Գեորգեան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի սկաւտական շարքերուն:

Նախարար նշանակման առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամներ՝ եղբայրներ Վաչէ Նաճարեան եւ Վիգէն Աւագեան այցելեցին քրոջ եւ միութեան շնորհաւորութիւնները փոխանցեցին անոր՝ մաղթելով բեղուն գործունէութիւն եւ արդիւնաբեր ծառայութիւն:



## ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

### ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

- Մասնաճիւղի խմբապետի պաշտօնը ստանձնեց եղբ. Ռուբէն Պապէեան:

- Միաւորի խմբապետի պաշտօն ստանձնեցին եղբայրներ Սաբօ Եագուպեան եւ Սիմոն Տէրտէրեան:

### ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

- Մասնաճիւղի խմբապետի պաշտօնը ստանձնեց քոյր Արեւիկ Փափազեան:

- Միաւորի խմբապետի պաշտօնը ստանձնեց քոյր Անի Սարեան:

### ԺՏՏՅՏՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

- Միաւորի խմբապետի պաշտօն ստանձնեցին քոյր Արազ Չերչեան եւ եղբ. Վիգէն Չանկուլեան:

### ԶԱՀԼԷԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

- Միաւորի խմբապետի պաշտօն

ստանձնեց քոյր Սարին Բալուլեան, փաղանգապետի աստիճան՝ եղբ. Խաժակ Բալուլեան:

### ՊԱՌՇՐԻԷԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

- Խմբապետի աստիճան ստացաւ քոյր Սանահին Թովմասեան:



**Հ**Մ.Ը.Մ.ի Լիքանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչին, Շրջանային Սկաւտական Խորհուրդին եւ Խմբապետական կազմին ներկայութեամբ, Չորեքշաբթի, 1 Յունիս 2020-ին, յատուկ արարողութեամբ մը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիքանանի մասնաճիւղերու խմբապետական պաշտօններու տուչութիւն:

Տուչութեան ներկայ եղան մասնաճիւղերու Սկաւտ. Խորհուրդներու եւ վարչութիւններու անդամներ: Այսպէս՝



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ, ԼԱԹԱՔԻՈՅ, ՔԵՍԱՊԻ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Թղթակիցներ  
ՀԱԼԷՊ, ԼԱԹԱՔԻԱ, ՔԵՍԱՊ,  
ԴԱՄԱՍԿՈՍ

**Հ**ՄԸՄԻ Հալէպի մասնաճիւղի անդամական 94-րդ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, 17 Յունուար 2020-ի երեկոյեան ժամը 7.00-ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ, ներկայութեամբ ՀՄԸՄԻ Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամներուն, մասնաճիւղի վարչութեան, Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ խմբապետութեան, մասնաճիւղի ըՄԿաուտ-Խորհուրդին, խմբապետին, աստիճանաւորական եւ խմբապետական կազմերուն, շեփորախումբի եւ մարզական խումբերու ներկայացուցիչներուն, Շրջանային Վարչութեան յանձնախումբերուն եւ ՀՄԸՄ-ականներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Ժողովին քննարկուեցաւ ընթացաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Ներկաները արծարծեցին մասնաճիւղը հետաքրքրող գանազան հարցեր եւ համապատասխան լուսաբանութիւններ ստացան վարչութեանէն: Ապա, միութեան վերելքին եւ յաջող ըն-



թացքին համար ներկայացուեցան բազմաթիւ առաջարկներ: Այնուհետեւ ժողովը ընտրեց ՀՄԸՄԻ Հալէպի մասնաճիւղի 2020-2021 տարեշրջանի վարչութեան նոր կազմը՝ հետեւեալ պատկերով.- Եղբ. Արամ Աւետիսեան, քոյր Անի Մինասեան, եղբայրներ Սերժ Պալապանեան, Յովիկ Սիւլահեան, Յարութ Խաչատուրեան, Տիգրան Պալապանեան, Կարօ Մասիսէճեան, Արեքսան Պալեան եւ Կարօ Ապահեան:

## ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Երկու շաբաթ ետք, 31 Յունուար 2020-ին, Լաթաքիոյ «Գանձասար» սրահին մէջ տեղի ունեցաւ տեղւոյն մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, ներկայութեամբ ՀՄԸՄԻ Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամներու, մասնաճիւղի վարչութեան եւ ՀՄԸՄ-ականներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը ընթերցեց քոյր Լորա Մանուկեան, իսկ նիւթական տեղեկագիրը՝ քոյր Արշօ Գազազեան: Ներկաները քննարկեցին մասնաճիւղին միամեայ գործունէութիւնը եւ ներկայացուցին առաջարկներ: Ապա, ընթացաւարտ վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ





եղբ. Յարութ Գարրիէլեան: Աւարտին, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւօ Տէրվիշեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ յաջողութիւն ու բարի երթ մաղթեց նորընտիր վարչութեան:

Այնուհետեւ ժողովը ընտրեց Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան նոր կազմը՝ հետեւեալ պատկերով: Եղբ. Սափօ Քէչէճեան, քոյրեր Մակի Մանճիկեան, Լորա Մանուկեան, եղբայրներ Յովիկ Անդօ Խոտանեան, Յակոբ Ճմմօ, Արշակ Տէկիրմէնճեան եւ Գէորգ Տէօքմէճեան:

**ՔԵՍԱՊԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

Օր մը ետք, Շաբաթ, 1 Փետրուար 2020-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի տարեկան ընդհանուր ժողովը, «Միմօն Վրացեան» կեդրոնին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան եղբայրներու, մասնաճիւղի վարչութեան, Սկաուտ-Խորհուրդին, խմբապետական կազմին եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Ժողովին սկիզբը ընթացաւարտ վարչութեան նիւթաբա-

րոյական տեղեկագիրին ընթերցումէն ետք, քննարկուեցան եւ արծարծուեցան զանազան հարցեր: Արժեւորուեցաւ նաեւ նախորդ շրջանի միամեայ գործունէութիւնը:

Ապա, նորընտիր վարչութեան աշխատանքի ուղղեգիծը ճշդելու համար ներկայացուեցան զանազան առաջարկներ: Այնուհետեւ ժողովը ընտրեց Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան նորընտիր կազմը՝ հետեւեալ պատկերով: Եղբ. Յակոբ Հանէշեան, քոյր Անի Զէյնպեան, եղբայրներ Շանթ Լնդեան, Մհեր Ղազարեան եւ Վաչէ Աղպաշեան:

**ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղը անդամական իր ընդհանուր ժողովը գումարեց ամիս մը ետք, Ուրբաթ, 6 Մարտ 2020-ին, «Ա. Ահարոնեան» կեդրոնի «Տիգրան Ստեփանեան» սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամներուն, մասնաճիւղի վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը ընթերցեց եղբ. Անդրանիկ Խաճարեան, իսկ նիւթական տեղեկագիրը՝ եղբ. Արա Խաճարեան: Ներկաները քննարկեցին մասնաճիւղի միամեայ գործունէութիւնը եւ ներկայացուցին առաջարկներ: Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ յաջողութիւն ու բարի երթ մաղթեց նորընտիր վարչութեան:

Այնուհետեւ ժողովը ընտրեց մասնաճիւղի վարչութեան նոր կազմը՝ հետեւեալ պատկերով: Եղբայրներ Միհրան Ղազարեան, Արա Խաճարեան, Վահան Գոգանեան, Հրայր Գարակէօզեան եւ Անդրանիկ Խաճարեան:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նկատի ունենալով միութեան անդամային տնտեսական իրավիճակը եւ հիմնուելով Հ.Մ.Ը.Մ.ի զաղափարաբանութեան եւ անասկարկ նուիրումի հասկացողութեան վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան որոշումով, այսուհետեւ մարզական խաղերը պիտի կիրարկուին անվրձար, Հ.Մ.Ը.Մ.ական եւ նուիրեալ մարզիկներու կողմէ:

Լիայոյս ենք, որ այս որոշումը իրան կը դառնայ յաւելեալ շեւով կառչած մնալու միութեան վեհ սկզբունքներուն:

21 Փեպրուար 2020

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԵՊԻ  
ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



## «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»Ը ՀԱՎԷՊԻ, ԳԱՄԻՇԼԻԻ ԵՒ ԲԵՍԱՊԻ ՄԷՁ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

**Կ**իրակի, 9 փետրվար 2020-ին, Հայկական մասնաճիւղի սկաուտները Հ.Մ.-Ը.Մ-ի պարտեզին մէջ միօրեայ գործունէութեամբ մը նշեցին «Հայ Սկաուտի Օր»ը, մասնակցութեամբ 135 քոյր-եղբայրներու: Օրուան յայտագիրը սկսաւ խմբային դրութեամբ եւ դրօշակի արարողութեամբ, ապա տեղի ունեցան նախաճաշ, մարզանք եւ ռալի:

Յայտագիրին յատկանշական բաժիններէն մէկն էր տողանցքը, ընկերակցութեամբ Հ.Մ.-Ը.Մ-ի շեփորախումբին: Տողանցքին ներկայ գտնուեցան Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հայկական մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներն ու Սկաուտ. Խորհուրդը: Տողանցքի ավարտին տեղի ունեցաւ աստիճանատուջութիւն եւ վկայականաց բաշխում, ձեռամբ մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեանի:

Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Ծերուն Գազվէճեան խօսք առնելով շնորհակալութիւնները՝ «Հայ Սկաուտի Օր»ուան առթիւ եւ նշեց, թէ Հ.Մ.-Ը.Մ-ի սկաուտները Վարդանանցի ոգիէն ներշնչուած՝ Վարդանանցի տօնը յայտարարած են «Հայ Սկաուտի Օր»:

Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային խմբապետ եղբ. Յովհաննէս Փամբալեան սկաուտներուն դասախօսեց «Հ.Մ.-Ը.Մ-ի



պատմութիւնը» նիւթը: Ծաշէն ետք կատարուեցան զարգացման մրցում, ձեռային աշխատանք եւ մտերմիկ խրախճանք:

### ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՁ

Շաբաթ մը ետք, 16 փետրուար 2020-ին, Հ.Մ.-Ը.Մ-ի Գամիշի մասնաճիւղը իր կարգին պաշտօնական հանդիսութեամբ մը նշեց «Սկաուտի Օր»ը, ներկայութեամբ շրջանի քահանայ հօր, պատկան մարմինի ներկայացուցիչին, Հայկական ժամանած Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեանին եւ միութեան ներկայացուցիչներուն:

Սկիզբը, հանդիսավարները ներկաները հրաւիրեցին մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը ննջեցեալ Հ.Մ.-Ը.Մ-ականներուն: Ապա հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները:

Խումբ մը սկաուտներ ներկայացուցին կենդանի պատկեր, որմէ ետք հանդիսութեան բացման խօսքը արտասանեց



Հ.Մ.Ը.Մ-ի Գամիչլիի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան: Ապա, սկսուած են ներկայացուցիչ հայկական պար, երգեցողութեամբ եղբ. Բաֆֆի Օհանեանի եւ խմբային ասմունք՝ «Փա՛ռք Հ.Մ.Ը.Մ-ին»: Շարունակելով յայտագիրը, խումբ մը արի-արեւոյճներ ներկայացուցին զինուորական պար եւ բուրգեր: Ապա, տեսերիզի միջոցով ցուցադրուեցաւ մասնաճիւղին միամեայ գործունէութիւնը: Սկսուած էր երգչախումբը ներկայացուց փունջ մը հայերէն եւ արաբերէն երգեր, դեկավարութեամբ քոյր Եւա Մանուկեան-Սեյրմեանի:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ վկայականաց բաշխում եւ աստիճանատուջութիւն՝ ձեռամբ Սուրբոյ Շրջանային Խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեանի: Եղբ. խմբապետը կատարեց խմբապետի աստիճանի տուջութիւն քոյր Եւա Մանուկեան-Սեյրմեանին եւ աւարտին փոխանցեց խմբապետութեան խօսքը:

Յայտագիրը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ քահանայ հօր սրտի խօսքով ու «Պահպանիչ»ով:

**ՔԵՍԱՊԻ ՄԷՋ**

Քեսապի մասնաճիւղը «Հայ Սկսուածի Օր»ը նշեց Կիրակի, 1 Մարտի երեկոյեան, զիւղին «Սարդարապատ» սրահին մէջ: Տօնակատարութիւնը կազմակերպեց մասնաճիւղին Սկսուած. Խորհուրդը:

Տօնակատարութեան բացումը կատարեց շեփորախումբը՝ հնչեցնելով Սուրբոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները:

Բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի միաւորի պատասխանատու քոյր Մարի Շէխուկեան-Լիզեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ, թէ ինչքան մեծ եղած է հայ սկսուածին դերը հայապահպանման գործին մէջ:

«Յովհաննէս Հինդլեան» խումբի քոյրերն ու եղբայրները ներկայացուցին թատրոն՝ «Chat-ի ընկեր»: Խումբ մը կայտառ եւ արի քոյրեր կատարեցին չափական մարզանք: Իսկ «Գրիգոր Յակոբեան» խումբը ներկաներուն հրամցուց հայկական պար՝ «Լորքէ»ն: «Տիգրան Խոյեան» եւ «Թաթուլ Կրպէեան» խումբերու քոյրերն ու եղբայրները ամենայն ճկունութեամբ ներկայացուցին բուրգ եւ թմայիլիկ: Ապա տեղի ունեցաւ խոստման արարողութիւն եւ վկայականաց բաշխում:

Տօնակատարութիւնը աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով՝ կատարողութեամբ շեփորախումբին:

# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՐՏԵՁԻՆ ՄԷՋ

## Թղթակից ՉԱԼԷՊ

Կիրակի, 16 Փետրուար 2020-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Հայկաի մասնաճիւղի սկսուածական գործունէութիւնը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկսուած. խորհուրդին, Հայկաի մասնաճիւղի վարչութեան անդամներուն եւ Սկսուած. Խորհուրդին: Հայկաի տեղական նորընտիր վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յովիկ Սիւլահեան խօսք անելով ողջունեց բոլոր սկսուածները, ապա ներկայացուց 2020 տարեշրջանի Սկսուած. Խորհուրդի նորանշանակ անդամները՝ եղբայրներ Աբիլ Խաչոյեան, Յովիկ Հապէչեան (մասնաճիւղի խմբապետ), Կարօ Տիչչէֆէնեան, Վարդան Լախոյեան, Արամ Զաղլասեան, Մանօ Մանուկեան, քոյրեր Նայիրի Ազարիկեան, Նայիրի Զաքոյեան եւ Փէկի Պալմանուկեան: Եղբ. Սիւլահեան յաջողութիւն մաղթեց անոնց, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց ընթացաւարտ Խորհուրդին՝ իր գնահատելի աշխատանքին համար:



Այս առիթով, ընթացաւարտ մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան մասնաճիւղին դրօշակը փոխանցեց մասնաճիւղի նորանշանակ խմբապետ եղբ. Յովիկ Հապէչեանին:


### Հ.Մ.Ը.Մ-Ի ՊԱՐՏԵՁԸ

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզ-մարզարանը կառուցուած է 1956-ին: Ան կը բաղկանայ ֆուլթայոյթ, թենիսի, վոլիպոյթի մէկական եւ պասքեթպոյթի երկու դաշտէ: Ունի նաեւ մարմնամշակութիւնի յատուկ սրահ եւ հանդերձարան: 2015-ին, Սուրբոյ պատերազմի ամէնէն բուռն օրերուն, պարտէզ-մարզարանը թիրախ դարձաւ հրթիռներու եւ կրեց ծանր վնասներ:

Պատերազմի աւարտէն ետք, պարտէզ-մարզարանը վերանորոգուեցաւ եւ վերստին գործել սկսաւ:



# ՀԱԼԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ-ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔ



## Թղթակից ՀԱԼԷՊ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի, կազմակերպությամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի վարչութեան, Կիրակի, 23 Փետրուար 2020-ի կէսօրէ առաջ ժամը 11.45-ին սկսաւ Հայկալի ազատագրութեան եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման առիթով՝ Սուրբոյ խորհրդարանին երախտագիտութեան

ժողովրդային երթը, մասնակցութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին, հայ կաթողիկէ համայնքի ներկայացուցիչին, Բերիոյ Թեմի ազգային իշխանութեան, ազգային մարմիններուն, ՍՕԽ-ի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Համազգայինի Շրջանային Վարչութիւններու եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներուն, անդամներուն, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին, արի-արեւոյշ, գայլիկ-արծուիկ միաւորներուն, ՍԵՄ-ի եւ Պատանեկան Միութեան անդամներուն, ինչպէս նաեւ՝ մեծ թիւով հայկապահայերու:

Երթը սկսաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ դիմացէն, ապա մասնակիցները կանգ առին «Արամ Մանուկեան Ժողովրդային Տան» դիմաց, ուր Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը շարունակեց հնչեցնել ազգային-հայրենասիրական երգեր: Երիտասարդներուն բարձրացուցած պաստառներուն վրայ արձանագրուած էին Սուրբոյ, բանակին եւ նախագահին զօրակցութեան խօսքեր, ինչպէս նաեւ՝ Հայկալի ազատագրութեան առիթով քաղաքը ձեռք-ձեռքի տալով վերականգնելու կոչեր:

Այս առիթով, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը երթին ներկայ լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն ուղղելով իր խօսքը անդրադարձաւ վերջին շրջանին արձանագրուած յաջմանակներուն: Առաջինը՝ Հայկալի ամբողջական ազատագրման, իսկ երկրորդը՝ Սուրբոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման քայլին:

Ապա, Առաջնորդը անդրադարձաւ վերջին օրերուն Հայկալի մէջ տեղի ունեցած տողանցքին եւ միջկրօնական հանդիսաւոր տօնախմբութեան, որոնց իր մասնակցութիւնը բերաւ ան:

«Մեզի համար Սուրբոյ նախագահը միասնականութեան խորհրդանիշ է: Իր ճիգով եւ սուրիական բանակին զօհո-





դուլթեամբ Հալէպը ազատագրուեցաւ», ըսաւ Առաջնորդը եւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի Սուրիոյ ամբողջ տարածքը ազատագրուի եւ երկիրը բոլորին մասնակցութեամբ վերականգնի եւ դառնայ աւելի հզօր, աւելի ուժեղ:

«Այս քայլարշաւը յաղթանակի քայլարշաւ է, ուրախութեան քայլարշաւ է եւ վերականգնումի երթին թափ տալու հաւաքական մեր կոչն է», եզրափակեց Առաջնորդը:

Երթը շարունակուեցաւ մինչեւ Ազիզիէ, Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզ:



## ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

### Թղթակից ԴԱՄԱՍԿՈՍ

Սուրիոյ յեղափոխութեան 57-ամեակին եւ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման զոյգ առիթներով, Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղին վարչութիւնը Կիրակի, 8 Մարտ 2020-ի առաւօտեան կազմակերպեց երախտագիտութեան տողանցք:

Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի արի-արեւոյշները տողանցքին բարձրացուցին շնորհակալութեան խօսքեր պարունակող պաստառ մը, որուն վրայ տեղադրուած էր Սուրիոյ նախագահին պատկերը: Անոնք Սուրիոյ դրօշը հպարտօրէն ծածանելով տողանցեցին մինչեւ խորհրդարանի շէնքին դիմաց: Այնտեղ ներկայ էին Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպաղ եւ երեսփոխաններ, որոնց կարգին՝ երեսփոխան դոկտ. Նորա Արիսեան:



հաւաքին ներկայ էին Դամասկոսի սկստակաւան շարժումի կեդրոնական վարչութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ դամասկահայերու հոծ բազմութիւն մը:

Շեփորախումբի ելոյթէն ետք, հինգերորդ վաշտի խմբապետ եղբ. Միհրան Ղազարեան Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղին սկստակաւան փողկապը յանձնեց խորհրդարանի նախագահին, ապա խորհրդարանի երեսփոխան Համուտա Սապպաղ խորհրդարանի դահլիճին մէջ ընդունեց Հ.Մ.Ը.Մ-ի տարազաւոր քոյրերն ու եղբայրները եւ անոնց ընկերակցող պատասխանատուները: Ընդունելութեան ներկայ էին երեսփոխան դոկտ. Նորա Արիսեան եւ «Ահարոնեան» կեդրոնի ներկայացուցիչ Արմէն Ուրֆալեան:

Այս առիթով, Համուտա Սապպաղ ջերմօրէն ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղին նախաձեռնութիւնը: Ան բարձր գնահատեց հայ ժողովուրդին հաւատարմութիւնը սուրիական հայրենիքին նկատմամբ:

Հինգերորդ վաշտի խմբապետ եղբ. Միհրան Ղազարեան իր կարգին շնորհակարտեց խորհրդարանի նախագահ՝ 8 Մարտի յեղափոխութեան տօնին առիթով եւ երախտագիտութիւն յայտնեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման խորհրդարանի որոշումին համար, շնորհակալութիւն յայտնելով խորհրդարանի բոլոր անդամներուն եւ Սուրիոյ նախագահ տղթ. Պաշար ալ Ասատին:

Իր կարգին, «Ահարոնեան» կեդրոնի ներկայացուցիչ Արմէն Ուրֆալեան երախտագիտութեան խօսք ուղղեց խորհրդարանի նախագահին եւ նախագահ տղթ. Պաշար ալ Ասատին:



Հինգերորդ վաշտի շեփորախումբը նուազեց Սուրիոյ քայլերգը եւ փունջ մը ազգային-հայրենասիրական երգեր:

Երախտագիտութեան



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՄԱՅԻՍ 28-Ի ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ՀԱԼԷՊԻ, ԳԱՄԻՇԼԻԻ ԵՒ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԷՋ

**Ո**ւրբաթ, 29 Մայիս 2020-ի յետմիջօրէի ժամը 6-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեանէն ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան եւ եղբ. Արսո Փայասեան իրենց մասնակցութիւնը բերին Հայաստանի Ա. Հանրապետութեան կերտիչներու յիշատակին մատուցուած հոգեհանգստեան արարողութեան, որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի: Հոգեհանգիստին յաջորդեց եկեղեցւոյ ներքնասրահին մէջ կազմակերպուած տօնակատարութիւնը՝ Հայ Երիտասարդաց Միութեան կողմէ: Զոյգ հանդիսութիւններուն ներկայ



զտնուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ Հալէպի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները:

**ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ**  
Կիրակի, 31 Մայիս 2020-ի առաւօտուն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեանէն ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան եւ եղբ. Եղիա Քիլիճեան իրենց մասնակցութիւնը բերին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Պատարագին, որ տեղի ունեցաւ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Պատարագին ընթացքին կատարուեցաւ Հանրապետական մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն դրօշի օրհնութիւն, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի





մասնաճիւղի սկաուտներուն: Պատարագէն ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Մայիսեան հերոսամարտերու նահատակներու հոգիներուն համար:

**ԳԱՄԻՇԼԻԻ Մէջ**

Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակին եւ Մայիսեան փառահեղ յաղթանակներուն առիթով, Կիրակի, 31 Մայիս 2020-ին, Գամիշլիի Ս. Յակոբ

եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Պատարագ, նախագահութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը իրենց մասնակցութիւնը բերին Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութեան, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներն ու շեփորախումբը տողանցեցին ներկաներուն հետ, ուղղ-

ուելով դէպի Ազգային Առաջնորդարան, որուն շրջափակին մէջ, նահատակներու յուշարձանին դիմաց, տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում, նուիրուած՝ Մայիսեան նահատակներու յիշատակին: Արարողութիւնը աւարտին հասաւ մասնաճիւղին շեփորախումբի ազգասիրական եւ յեղափոխական շարք մը նուագներով:

**ԼԱԹԱՔԻՈՅ Մէջ**

Հայաստանի Հանրապետութեան 102-ամեակին եւ Մայիսեան յաղթանակներուն առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղի սկաուտական միաւորէն կարգ մը քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Պատարագին, Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութեան եւ այնուհետեւ՝ Մայիսեան հերոսամարտերու նահատակներու հոգիներուն համար եկեղեցւոյ շրջափակին մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:



# Հ.Մ.Ը.Մ. ՀԱԼԷՊ ԿԸ ՎԵՐՍԿՍԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՐ ՀԱՒԱՔՆԵՐՈՒՄ

**Կ**իրակի, 7 Յունիս 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի սկաուտները վերադարձան Կիրակի օրերու իրենց ընթացիկ գործունէութեան, որ դադրած էր Մարտ ամիսէն ի վեր, Քորոնա ժահրին պատճառով:

Գործունէութիւնը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզին մէջ, ներկայու-



թեամբ 143 անդամներու: Գործունէութեան աւարտին, մասնաճիւղի խմբապետ եղբ. Յովիկ Հապէշեան քաջաբերական նուէրներով զնահատեց հինգ քոյր-եղբայրներ, որոնք մասնակցած էին Սկաուտ-Խորհուրդին կողմէ կազմակերպուած զարգացման մրցումին եւ տուած էին անսխալ պատասխաններ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԵՍԹԵՐՈՍԻ ՄԱՄՆԱՃԻԴԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ...

## ԱՐԻԿ ՊԱՍՍԱՃԵԱՆ ՎԵՍԹԵՐՈՍ

**Հ**.Մ.Ը.Մ.ի վեսթերոսի մասնաճիւղի վերականգնումի անդամական ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 22 Փետրուար 2020-ի կէսօրէ ետք ժամը 4-ին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Թափրայի, Սթոքհոլմի մասնաճիւղի ատենապետ եղբ. Յովսէփ Համամճեանի, շրջանի կոմիտէի անդամ Սմբատ Գրիգորեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ական 35 քոյր-եղբայրներու:

Ներկաներուն բարի գալուստի խօսք արտասանեց քոյր Միրնա Սարգիսեան: Ան ներկայացուց անդամական ժողովին նախապատրաստական աշխատանքները եւ ներկաները հրաւիրեց ընտրելու ժողովին դիւանը: Ատենապետ ընտրուեցաւ եղբ. Աբիկ Պասմաճեան, ատենադպիր՝ եղբ. Աշոտ Լեւոնեան: Ընթերցուեցաւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին լիազօրագիրը, որմէ ետք քաջալերական խօսքերով հանդէս եկան եղբ. Ֆէտի Թափրա, Սմբատ Գրիգորեան եւ եղբ. Յովսէփ Համամճեան:

Յաջորդեց ժողովի աշխատանքային յանձնախումբերուն ընտրութիւնը. երեք յանձնախումբեր՝ բանաձեւի, նախահաշիւի եւ քուէախոյզ:

Ժողովը ընթացաւ միութենական առողջ մթնոլորտի մէջ: Աւարտին, ընտրուեցաւ հինգ հոգինոց վարչութիւն մը, որուն մաս կազմեցին եղբ. Գաբրիէլ Պաթթուբ, քոյր Ազնիւ Գու-



յումճեան, եղբայրներ Յակոբ Գազանճեան, Յակոբ Չերչեան եւ Համբարձում Հազարեան:

Ժողովի ատենապետ եղբ. Աբիկ Պասմաճեան այս առիթով յիշեց Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան փայլուն էջերը եւ յոյս յայտնեց, որ վերականգնող մասնաճիւղը իր նպաստը կը բերէ հայ կեանքի մարզական, սկստական եւ ազգային վերելքին:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Թափրա շնորհակտրեց մասնաճիւղին նորընտիր վարչութիւնը, բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի ազգային նպատակներուն ծառայելու քոյրերուն եւ եղբայրներուն պատրաստակամութիւնը, նաեւ՝ հայերէն լեզուի գործածութեան հանդէպ ցուցաբերուած բծախնդրութիւնը:

Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշի պաշտօնական յանձնում, որմէ ետք՝ երեկոյեան ժամը 6.45-ին, ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## ... ԵՒ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ՎԵՍԹԵՐՈՍ

**Շ**աբաթ, 27 Յունիս 2020-ը Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի վեսթերոսի Մեկուսի շրջանին համար յատկանշական օր մը եղաւ, որովհետեւ այդ օր շրջանը ունեցաւ միութենական խոստումով սկստական իր առաջին սերունդը:





Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի Թափրայի, Հ.Յ.Դ. Հիւսիսեան շրջանի ատենապետ Սիմոն Տէր Սահակեանի, Նորայր Քհնյ. Կանճուճեանի, Վեսթերոսի եկեղեցական խորհուրդի ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ-ի Սթոքհոլմի եւ Սոտերթելիոյ Մեկուսի վարչութիւններու, ծնողներու եւ հիւրերու ներկայութեամբ տեղի ունեցաւ սկստական խոստման արարողութիւն եւ վկայագիրներու բաշխում:

Երեկոն ընթացք առաւ Շուէտի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգերով: Ծածանեցան երեքին դրօշները: Վարչութեան խօսքը փոխանցեց շրջանի ատենապետ եղբ. Գաբրիէլ Պաթթուք: Ան յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ը Վեսթերոսի մէջ վերականգնելու անհրաժեշտութիւնը, որպէսզի հայ երեխաներուն առիթը ընծայուի խօսելու հայերէն, ունենան հայ ընկերներ եւ մեծնան ինքնավստահ՝ կատարելով սկստական եւ մարզական աշխատանքներ:

Իր խօսքին մէջ, եղբայրը ամփոփ գեկոյց մը տուաւ նորընտիր վարչութեան քառամսեայ աշխատանքներուն եւ յառաջիկայի ծրագիրներուն մասին, նշելով որ մասնաճիւղին հիմնական նպատակը եղած է ու կը մնայ պատրաստել սկստական պատասխանատու կազմ, կեդրոնանալ երախաներու սկստական եւ դաստիարակչական աշխատանքներուն վրայ եւ գալիք օրերուն շրջանին մէջ ունենալ մարզական գործունէութիւն:



Եղբ. Պաթթուք իր խօսքին ավարտին շնորհակարարեց եւ յաջողութիւն մաղթեց խոստում տուող սկստականներուն՝ անոնց մաղթելով հայրենասիրութիւն, հաւատք եւ ազգային միաբանութիւն, ուղղեցոյց ունենալով Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը, որ տարիներ շարունակ հայ երիտասարդութիւնը համախմբած է հայապահպանման սկզբունքներու եւ գաղափարներու շուրջ:

Վարչութեան խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Սոտերթելիոյ Միաւորի խմբապետուհի քոյր Նորա Վէքիլեան ստանձնեց օրուան հերթապահութիւնը եւ իր կարգին հրահարեց Հ.Մ.Ը.Մ-ի Սոտերթելիոյ Մեկուսի շրջանի խմբապետուհի քոյր Սօսէ Երէցեանը եւ խոստում տուող 4 արի-արենոյճները՝ կատարելու խոստման արարողութիւն:

Քահանայ հօր օրհնութենէն ետք, խոստում տուող սկստականները խոստացան ծառայել ազգին ու հայրենիքին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդ:



Խոստման արարողութեան յաջորդեց վկայագիրներու բաշխում: Այս առիթով խօսք առաւ Շուէտի սկստական կազմակերպութեան արեւմտեան մարզի ընդհանուր փոխ խմբապետ Սթաֆֆան Փերսոն:

Խոստման արարողութեան ավարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Ֆէտի Թափրա: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Շուէտի սկստական կազմակերպութեան արեւմտեան մարզի ընդհանուր փոխ խմբապետ Սթաֆֆան Փերսոնին, որ ծանօթացման առաջին իսկ հանդիպումին անմիջապէս ընդունաւ Հ.Մ.Ը.Մ-ի Վեսթերոսի սկստական մասնաճիւղի հրահարին եւ իր ներկայութեամբ նորագիր սկստականներուն փոխանցեց մարզին պէճը:

Եղբայր Թափրա անդրադարձաւ նաեւ Ա.Պէ.է.Ֆ-ի ներկայացուցիչի ներկայութեան, տրուած ըլլալով որ ան տեսաբար նիւթական նեցուկ կը կանգնի շրջանի դաստիարակչական ծրագիրներուն: Եղբայրը նշեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը պատրաստ է ամէն տեսակի ծրագիրներ մշակելու զանազան միջավայրերու մէջ՝ այնքան ատեն որ այլ միութիւնները կը բացակային հոնկէ:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ»ով, որմէ ետք խոստում տուող սկստականները ընդունեցին շնորհակարարութիւններ եւ անմոռանալի երեկոն ավարտեցաւ ծնողներու կողմէ պատրաստուած հիւրասիրութիւններով եւ գեղեցիկ նկարներով:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ Ի ՊԱՏԻՒՄ ԱՖԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

### Թղթակից ԿԼԵՆՏԵՅԼ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2020-ին, ինչպէս ամէն տեղ, նաեւ Արեւմտեան Մ. Նահանգներու թեմի եկեղեցիներուն մէջ նշուեցաւ Քրիստոսի տաճար ընծայման՝ Տեառնընդառաջի նախատօնակը, երեկոյեան ժամերգութեամբ, Անդաստանի եւ մանուկներու Մ. խորան ընծայման արարողութիւններով եւ խարոյկի բոցավառումով:

Տարիներու աւանդութեան համաձայն, Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան նախագահեց Կլենտէյի Մ. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան եւ ուղղեց իր պատգամը:

Եկեղեցական դասի անդամներ մասնակցեցան արարողութեան: Ներկայ էին Ազգային Վարչութեան ատենադպրուհի Էլիզապէթ Պոյաճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, խմբապետներ, սկաուտներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Նոյն օրը, տարիներու աւանդութեամբ, արի-արենոյնք մասնակցեցան Տեառնընդառաջի հոգեպարար արարողութեան եւ հաղորդուեցան օրուան խորհուրդով:

Արարողութեան աւարտին, Առաջնորդը ուղղեց իր պատգամը: Իր պատ-

գամին մէջ ան գնահատեց սկաուտները եւ յորդորեց ծնողները՝ հնազանդելու Աստուծոյ պատուիրաններուն, օրէնքներուն եւ հաւատարմութեամբ դաստիարակելու իրենց զաւակները:

Հուսկ, Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեան Քրիստոսի լոյսը խորհրդանշող մոմը խորանէն բերաւ եւ յանձնեց Առաջնորդ հօր, որ իր կարգին զայն բաշխեց հաւատացեալներուն: Ապա, կատարուեցաւ մանուկներու տաճար ընծայումը, որմէ ետք հոգեւոր հայրերը եւ հաւատացեալները թափօրով առաջնորդուեցան եկեղեցւոյ շրջափակը, ուր Առաջնորդին ձեռամբ եւ Մ. խորանէն բերուած մոմով բոցավառեցաւ խարոյկը:

Ժողովրդային եւ հայրենասիրական երգերով տեղի ունեցաւ Տեառնընդառաջի ժողովրդային հանդէսը, որ իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ», «Կիլիկիա» եւ «Մեր հայրենիք» քայլերգներուն խմբերգումով:





**ԸՆԹՐԻՔԸ**

Այնուհետև, «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի սկսուածներուն ի պատիւ աւանդական ընթրիք:

Յանուն առաջնորդին եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընտանիքին՝ ողջոյնի խօսք արտասանեց Արտակ Քհնյ. Տէմիրճեան, իսկ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Բաֆֆի Վարժապետեան: Ապա, խմբապետներ քոյր Շարլին Կիլգէլեան եւ եղբ. Շահան Աթմաճեան իրենց սրտի խօսքերուն մէջ շնորհակալութիւն յայտնեցին Առաջնորդին, որ աւելի քան երկու տասնամեակէ ի վեր հաստատած է սկսուածական այս հանդիպումը եւ աւանդական ընթրիքը, որուն անձամբ ներկայ կը գտնուի ան:

Առաջնորդը իր եզրափակիչ խօսքին մէջ գնահատեց սկսուածները եւ զանոնք յորդորեց պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ ծառայելու ազգին, եկեղեցիին եւ հայրենիքին: Ապա, ան յուշանուէրներ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ականներուն:

Աւարտին, հաւաքաբար երգուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջնահատակ» քայլերգը:



## ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ «Ս. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ» ՀՔԱՆՀԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՄ

**Թղթակից ԹՈՐՈՆԹՕ**

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեանի, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան հետ համախորհուրդ, 2019-ին հաստատեց «Ս. Ղեւոնդ Երէջ» կրօնական շքանշանը, իբրև իսթան հայեցի դաստիարակութեան եւ քրիստոնէական կազմաւորման:

Այս առիթով Առաջնորդարանը պատրաստեց եւ հրատարակեց գրքոյկ մը, որ ընդգրկեց քրիստոնէական, կրօնա-եկեղեցական, աստուածաշնչային, պատմական եւ ազգային նիւթեր, որոնց հիմամբ ան կազմակերպեց դասընթացքներ:

Այսպէս, «Ս. Ղեւոնդ Երէջ» կրօնական շքանշանին առաջին դասընթացքը

տեղի ունեցաւ Շաբաթ, 27 Ապրիլ 2019-ին, Մոնթրէալի եւ Լաւալի սկսուածներուն համար, իսկ երկրորդը՝ Կիրակի, 16 Յունիս 2019-ին, Թորոնթոյի եւ Գէմպրիճի սկսուածներուն համար: Դասընթացքին մասնակցեցան շուրջ 100 սկսուածներ:

Դասընթացքը վարեց եւ դասախօսական նիւթերը հմուտ կերպով ներկայացուց Տաթև Աւագ Քհնյ. Միքայէլեան:

Իբրև եզրափակում յիշեալ դասընթացքին, Կիրակի, 2 Փետրուար 2020-ին, Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեան Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ







մէջ հանդիսապետեց Ս. Պատարագին, որուն ընթացքին ան օրհնեց թեկնածուները եւ «Ս. Ղեւոնդ Երէց» շքանշանը շնորհեց անոնց:

Այս առիթով իր արտասանած պատգամին մէջ, Առաջնորդը առաջին հերթին գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքն ու շքանշանի արժանացած ըս-

կառուները, ընդգծելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը այն միութիւնն է, որ «Բարձրացիր-բարձրացուր» եւ «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ» կարգախօսներուն կողքին, իր սկառուտական շարքերուն կը սորվեցնէ կարգապահութիւն, հնազանդութիւն եւ մանաւանդ հաւատարմութիւն Աստուծոյ, հայրենիքին ու ազգին:

Ան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը, որ պատրաստակամութիւն յայտնեց քաջալերելու իր սկառուտները մասնակցելու այս դասընթացքին եւ արժանանալու «Ս. Ղեւոնդ Երէց» կրօնական շքանշանին, ապա աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի անխափան ու անվրտանդ պահէ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն ու հայակերտումի գործը եւ իր Ս. Աջը հովանի պահէ այս միութեան վրայ: «Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը միշտ բարձր մնայ մեր հայրենիքին եւ արտերկրի օճախներուն վերեւ ու մեր քայլերը առաջնորդուին դէպի մեր հայրենական ու ազգային տենչերու իրականացումը», եզրափակեց Բարգէն Արք.:

Շաբաթ մը ետք, 9 Փետրուարին, նմանօրինակ հանդիսաւորութեամբ մը, այս անգամ Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագէն ետք, Առաջնորդ Բարգէն Արք. Չարեան «Ս. Ղեւոնդ Երէց» շքանշան շնորհեց չրջանի 10 սկառուտներու, որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին դասընթացքին: Առաջնորդը օրհնեց թեկնածուները՝ յորդորելով կարգապահութիւն, հնազանդութիւն եւ մանաւանդ հաւատարմութիւն Աստուծոյ, հայրենիքին եւ ազգին:

Նշենք, որ 9 Փետրուարին Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ, իսկ 16 Փետրուարին Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կրօնական դասընթացքին մասնակից սկառուտներուն շնորհուեցաւ «Ս. Ղեւոնդ Երէց» շքանշանը:



# ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԿԱՄ ԲՈՒՈՐԻՆ ԱՔԵԼԼԱՆ

Գեորգ Պետիկեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ



**Մ**ահախօսական կամ դամբանական գրող, պատրաստող եւ կարգացող մը չեմ եւ չեմ ալ ուզեր ըլլալ: Հաստատապէս ծանր է եւ յուզիչ: Սակայն այնպէս կ'երեւի, թէ «Հարկ՝ լուծանել զօրէնս» հայկական առածը ինծի համար ալ գրուած ըլլար, որովհետեւ յաճախ ե՛լ ստիպուած, ե՛լ կամաւոր կը շեղիմ որոշումէս: Որովհետեւ բոլորս ալ լաւատեղեակ ենք, թէ ճակատագրի բերումով մէկիկ-մէկիկ մեզմէ կը բաժնուին հարազատներ, բարեկամներ, կրթական մշակ-ընկեր-դրացի ու նաեւ սերունդի մը մարդիկը, որոնք իրենց գործը աւարտելով կամ կիսաւարտ, «կը բաժնուին» այս աշխարհէն, իրենց ետին ձգելով բաց մը: Ուստի, ճիշդ այդ «բացը» մատնանշելու եւ գայն յայտնաբերելու համար, կեանքի կը կոչեմ բառերս ու իբրեւ յարգանքի վերջին տուրք՝ միտքիս եւ յուշերուս հոսքը կը տեղադրեմ սեւով ձերմակ թուղթիս տողերուն վրայ, երախտապարտ զգացումով:

Հապա՞ ա՛յս անգամ: Միտքս պարզեմ:  
Ամիսներ առաջ, Միացեալ Նահանգներու Թենըսի նահանգին մէջ, բոլորէս անշուշտ հեռացաւ Լիբանանի մեր սիրելի Աքելլան՝ եղբ. Յակոբ Կարապետեան անունով տարէց խարբերդցին, մեծ կարօտի մը զգացողութիւնը ժառանգ ձգած իր հարազատներուն եւ շրջապատին: Մէկ խօսքով՝ օրինակելի ծառայութեամբ, հաւատքով եւ վարակիչ ապրումով հայ մը, տիպար, ե՛լ համեստ, ե՛լ գիտակից կեանքով ապրած միութենական:

Զինք կը ճանչնայի իբրեւ բազմաճիւղ տոհմի մը վերջին նահապետը, որ շուտով այս օրերուն պիտի դառնար մէկ դարու մարդ: Ան որ ապրեցաւ Եղեռնի ու նաեւ յետ-Եղեռնի տարագրուած հայրենասիրական մթնոլորտին մէջ, կրելով բոլոր օրերու բազմաշերտ եւ բազմադոյն բեռը:

Աքելլայի իր մակդիր-կոչումէն անդին, գինք ճանչցած եմ իբրեւ երէց եղբայր մը, որուն սիրտը միշտ բաբախած է միութեան համար: Միութիւն ըսի, պէտք է հաստատէի, որ այդ մէկը Հ.Մ.Ը.Մ.ն է, որուն իմաստուն սկզբունքին յենելով, ան շարունակեց իր կեանքը՝ հաւատարիմ գործին եւ հայկական աւանդութիւններուն:

Եղբ. Յակոբ Կարապետեան ամուսնացած էր Հայէպի Ազգ. Քառէն Եփփէ Ճեմարանի իմ շատ սիրելի ու յարգելի ուսուցչուհի Երան Զաղացպանեանին հետ: Անոնք ունեցան երկու մանչ զաւակ՝ Նարեկ եւ Շանթ, որոնց տուին հայեցի կրթութեամբ պատշաճ դաստիարակութիւն ու նաեւ՝ ազգային եւ մարդկային իմաստութեան սկզբունքներ: Իսկ ինք շարունակեց իր կեանքը՝ դառնալով օրինակելի միութենական, պատիւ բերելով իր ընտանիքին եւ պատկանած միութեան:

Եղբ. Յակոբին համար Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքի հրաշքներէն մէկն էր: Իր իւրաքանչիւր գայլիկին, սկառտին ու մարդիկին ներշնչած էր եղբայրական սքանչելի ոգի եւ բոլորին սորվեցուցած էր ըլլալ մի՛շտ պատրաստ հայ ազգին ընծայելու լաւագոյնը: Իւրաքանչիւր կակուղ թաթիկ, մըջնիկ, գայլիկ, սկառտ, արենոյշ կամ վարիչ պատասխանատու, որ անցաւ իր շարքերէն, կրնայ անվերապահօրէն այս բոլորը հաստատել, որովհետեւ ինք կը հաւատար եւ կը դաստիարակէր այն համոզումով, որ Հ.Մ.Ը.Մ.ը սովորական միջավայր մը չէր, ո՛չ ալ մարդերու համախմբում մըն էր, այլ՝ դպրոց մը, օճախ մը, դարբնոց մը մարդակերտումի եւ հայակերտումի:

Ան բոլորին ներարկած էր ազգային բարձր ոգի եւ խոր գիտակցութիւն: Միշտ եւ ամէն հանդիպողի երգած էր սկառտական կամ գայլիկական երգեր: Բոլորին յիշեցուցած սկառտական կանչերը եւ, իբրեւ հաւատաւոր Աքելլա, միշտ ձախ ձեռքով բարեւած էր, միաժամանակ իր քաղցր փախուր խառնելով իր մաղթանքներուն:

Կենսագրութիւնը մարդուս դիմանկարն է՝ ըսած են մեր մեծերը, անոր ապրած կեանքն ու անցած ճանապարհը իր բոլոր գոյներով, երեւէջներով, հնարաւորութիւններով, ուրախութիւններով, տխրութիւններով եւ զանազան վերիվայրումներով: Եւ իր տարիքի մարդիկ ապրած են յիշողութեամբ: Յուշեր ունենալ կը նշանակէ ունենալ անցեալ, իսկ անցեալը մասնիկ մըն է մարդու մը կեանքէն: Այս կը նշանակէ, թէ այդ մարդը ունեցած է ապրուած կեանք մը:

Ու ի՛նչ բախտաւորութիւն է, երբ օր մը կը հանդիպիս եւ կը բարեկամանաս նման հայու մը:

Անոնք որոնք գինք չեն տեսած, անկասկած, որ իրեն հանդիպած վայրկեանին պիտի նշմարէին, որ իր նկարագրի մե-

ծուլթեան կողքին ան ունէր խաղաղ նայուածք մը, որ մշտաժպիտ իր դէմքին վրայ պահած, իր հետ կը պտըտցնէր ամէն տեղ:

Բոլորին նման ես ալ գինք միշտ պիտի յիշեմ՝ թեթեւ ժպիտ մը շալկած դէմքով, տակաւին երկու փոսերու մէջ հանդարտ եւ անձայն լողացող երկու աչքերով, մեղմ ու համոզիչ ձայնով: Ունէր վեհ սիրտ մը , որ կը բաբախէր Հ.Մ.Ը.Մ.ի համար, որուն կեանքին իր շունչն ու քրտինքը բերաւ խառնելու: Ինքնուրոյն եւ եզակի դեմագիրծ: Իր մօտ միշտ կարօտն ու խանդավառութիւնը կեանք կը ներարկէին: Ան այս ձեւով էր, որ մուտք գործած էր բոլորիս սիրտերուն ու հոգիներուն մէջ, պարզ ու յստակ, թարմ ու առողջ, նոր ու վստահութիւն ներշնչող հայաշխարհով:

Իր ամբողջ կեանքին ընթացքին «Աքելլայական», եթէ ներելի է նման բացատրութիւն, իր գեղեցիկ ոգին պտըտցուց իր հետ: Խաղաղասէր, աստուածավախ, մարդասէր, բարի եւ հիւրասէր էր: Նոյնիսկ օտարը սիրելու եւ ընդունելու ունակութեամբ հաւատք եւ վճռակա՛նութիւն փոխանցեց շուրջիններուն:

Կար ժամանակ, երբ մարդիկ աւելի տոկուն էին իրենց հաւատքին մէջ, աւելի խոնարհ՝ իրենց ծառայութիւններուն եւ ուղղամիտ՝ իրենց կեցուածքներուն մէջ, օրինակ եւ ներշնչումի աղբիւր դառնալով ամէնուն:

Եւ ահա՛ մեր բոլորին Աքելլայն:

Պիտի օրհնուի անունը: Պիտի մնան իր խօսքերն ու յիշատակը: Ան լաւ գիտէր, որ մարդոց կեանքին մէջ ո՛չ հանգամանքը, ո՛չ փառքը, ո՛չ մակդիրը եւ ո՛չ ալ դրամը անմահութիւնը կ'ապահովեն: Անոր համար ալ ան եղաւ միշտ լուսարձակներէ հեռու եւ այդ ձեւով ալ գործեց: Պարզապէս ինքզինք իր ջանքերով կերտած հայ մըն էր, խոնարհ եւ հայրենասիրական ոգիով:

Ինծի համար, անկախ իր յառաջացած տարիքէն, բացառիկ անձնաւորութիւն մը, որ մնաց յարգուած ու ճանչցուած մինչեւ իր մահը: Ու բոլորը սիրեցին գինք իր հանդարտաբարոյ,



համեստ եւ դիպուկ ակնարկութիւններուն համար: Ոեւէ մէկուն հասցէին ժխտական կեցուածք չէր ունեցած: Իր սեւեռուն հայեացքին տակ առած էր պարզ, գուարթախոհ լեզուն եւ մանաւա՛նդ Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու եւ մնալու հպարտանքը, որ ժառանգ ձգած էր բոլորին:

Ինք հաստատապէս կը պատկանի օրհնուած այն փաղանգին, որ նոր սերունդի հոգիներուն մէջ հայկականութեան աւիրը ներարկեց համբերութեամբ եւ հոգածութեամբ: Ստացաւ պատուանուններ, բազմաթիւ գնահատականներ, շքանշաններ եւ պահեց իր համեստութիւնը: Մէկ խօսքով, անկեղծ եւ գիտակցական կեանքով ապրող միութենական մը, որ նիւթականով չէր հետաքրքրուած, այլ՝ զոհաբերութեան ոգիով, խոնարհ, ժպտախոհ ու տքնաջան լուռ գործով: Եզակի ապրումներով ու հաւատքով կը պատմէր ամէն յուշ եւ կ'երգէր ամէն երգ կամ կանչ: Իր նմանները մեզի կը բերեն այն թելադրանքն ու բաղձանքը, որ միութեան ծառայելու անսակարկ վաստակը բոլորիս համար դառնայ ներշնչում, իսկ հաւատքով ու նուիրումով աշխատանքը՝ առաքելութիւն:

Սրտի եւ յարգանքի այս խօսքերս փակելու համար, երախտապարտ զգացումներով նաեւ աւելցնեմ, որ այս քանի մը պարբերութիւններու մէջ խտացած մտածումներս, իբրեւ ծաղկեփունջ կը բերեմ իր հեռաւոր հողակոյտին՝ յիշելով իր ժպիտը, իր ձայնը եւ միութենականի հպարտանքը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



## «ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Եղբ. Գրիգորիս Պողարեան  
(Պէյրուօ) 300 \$

# ՄԵՐ ԱՔԵԼԼԱՆ՝ ԵՂՔ. ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ


Ժիրայր Սարգիսեան  
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

**Հ**.Մ.Ը.Մ-ի գայլիկական շարժումին իր անջնջելի վաստակը ունեցած մեր անզուգական Աքելլային՝ եղբ. Յակոբ Կարապետեանին երկարամեայ կեանքը ցոլացումը եղաւ մարդկային ազնուագոյն առաքինութիւններու եւ նուիրումի:

Մեր Աքելլան բնածին արժանիքներով օժտուած դաստիարակ մըն էր, մանուկներու եւ պատանիներու հոգեբանութիւնը լաւապէս ըմբռնած: Զանոնք միշտ հետաքրքիր պահելու բնագդական կարողութեամբ:

Աքելլան հոգատար մեր մեծ եղբայրն էր, լաւապէս ծանօթ՝ միջազգային սկառուտական շարժումի բարենըպաստ առաքելութեան եւ ազդեցութեան՝ նորահաս սերունդներու Ֆիզիքական եւ բարոյական կազմաւորման աշխատանքին վրայ:

Իր երիտասարդ տարի-



քին համախմբելով իմ եւ եղբորս նման բազմաթիւ տղաք, Հ.Մ.Ը.Մ-ի գայլիկական շարժումին շնորհիւ ան նոր ինքնութիւն տուաւ մեզի: Յանկարծ զգացինք գրաւչութիւնը մեր պատկանած միութեան, թէ մենք ալ եղբայրական կապերով մեծ ընտանիքի մը մէկ մասնիկն ենք: Ունինք մեր գիտելիքները, մեր իւրայատուկ ականդութիւնները, դաւանանքն ու նշանաբանը, որոնք կը կազմաւորեն մեզ եւ կ'առաջնորդեն դէպի ապագայ:

Օժտուած ըլլալով երաժշտական տաղանդով, մեր Աքելլան ստեղծած էր գայլիկական երգերու շարք մը, գոր մեծ սիրով եւ սրտով կ'երգէինք հաւաքոյթներու, արշաւներու եւ բանակումներու ընթացքին:

Ինք սերտած ըլլալով նախնական դարմանումի գործնական սկզբունքները, փոքր արկածներու ընթացքին կը դարմանէր արկածեալները::

Մեր ուսումնական տարեշրջանի աւարտին, Աքելլան պէտք է տեղեակ ըլլար իւրաքանչիւրիս ուսումնական վիճակէն: Ամառնային արձակուրդներուն ունէր իր թելադրանքները՝ մեր ժամանակները օգտակար նպատակներու ծառայեցնելու: Ի պահանջեալ հարկին ան



չափահաս գայլիկներէն ոմանց ամառ-  
նային աշխատանք կ'ապահովէր քա-  
ղաքին ծանօթ հայ առեւտրականնե-  
րուն մօտ:

Մեր Աքելլան ջերմ հաւատացեալ  
մըն էր ազգային արժէքներու եւ  
աւանդութիւններու: Մեզի համար հե-  
տաքրքրական էին լսել իր դաստիա-  
րակիչ պատգամները, որոնք մեզի կը  
մղէին չարքաշ կեանքի, հնարամտու-  
թեան, ամէն օր նոր բարիք մը գործե-  
լու եւ մեր լաւագոյնը ներկայացնելու  
Աստուծոյ, ազգին եւ հայրենիքին:

Տարիներ ետք, մենք բարեբախ-



տութիւնը ունեցանք Աքելլային եւ ըն-  
տանիքին մտերմութիւնը վայելելու  
Սան Ֆրանսիսքոյի գաղութին մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի Աքելլաներու նահապե-  
տը՝ մեր «Ծեր Գայլը» իր հարիւրամ-  
եայ կեանքի նախօրէին մահանա-  
լով՝ այժմ կը հանգչի Մ. Նահանգներու  
Թենըսի նահանգի ձէքսըն քաղաքին  
մէջ:

Յիշատակդ անթառամ մնայ, բո-  
լորիս սիրելի՛ Աքելլա:

## ԱՔԵԼԼԱՅԻՍ

Իմ յարգելի Աքելլա,  
Իմ սիրելի Աքելլա,  
Այն ինչ որ ըսեմ հիմա,  
Երախտիքս թող ըլլայ:

Կեանքի Ուսուցիչիս,

Սիրելի Աքելլա,  
Դուն եղար կեանքիս,  
Ուսուցիչս՝ համբերութեան,  
Առաջնորդս՝ անկեղծութեան,  
Սրտիս խորը ցանկերի,  
Հունար մարդկութեան,  
Ու հաւատարմութեամբ մինչեւ հիմա,  
Քեզմէ ժառանգած,  
Իբրեւ մեծ երախտաւոր,  
Քեզի կը հեղեմիս:  
Ա իս որքան կ'ուզէի,  
Միշտ ուսում առնել,  
Էջերով քու մասին գրել,  
Շապ աւելի երկար գրել,  
Ու վերջը,  
Բոլոր մարտիրներովս,  
Երկնքի ճակարհին,  
Այդ կապոյտ անհունին,  
Անունդ արչանագրել:  
Իմ սիրելի Աքելլա,  
Դուն մեր վոհմասկի  
Մեծ առաջնորդն էիր հասարայ,  
Շապ բաներ սորված եմ քեզմէ,  
Ու մենք կարգապահ վեցեակներով,  
Քաղաքավար մեր կեցուածքով,

Շունչիդ փակ բազմացանք,  
Եւ յառաջացանք հպարտութեամբ,  
Չարմացնելով շրջապայտն ամբողջ:

Դուն եղար նոր սերունդներուն,  
Մեծ առաջնորդը պայտուական,  
Ուստի փօնական այս օրերուն,  
Միայն ու միայն  
Քեզի համար յայտակ,  
Թող աշխարհի զանգակներն բոլոր,  
Ղօղանջեն երկար,  
Արչագանգելով անվերջ մէջն մեր  
Սրտերուն ու հոգիներուն:  
Ամէն օր եւ ամէն ժամ,  
Սրտանց կ'աղօթեմ քեզի համար,  
Որ կեանքդ ըլլայ առողջ ու երկար,  
Թող նոր արշալոյսեր սրտէդ ծագին,  
Եւ թող սրտիդ զարկերը բոլոր,  
Իբրեւ փարոս հսկայական,  
Լուսատրեան մեր բոլորին,  
Կեանքերը բարի,  
Անհուն սիրովդ եղբայրական:  
Իմ սիրելի Աքելլա,  
Իմ յարգելի Աքելլա,  
Այս բոլորը կը գրեմ,  
Որպէսզի մնանք հեռու փորձանքներէ,  
Ու քեզ յիշենք միշտ ու յաւիտեան:  
Վարչքդ կապար միշտ ըլլայ,  
Դուն, մեր սիրելի Աքելլան:  
«Աքելլա մեր լուսագոյնը»:

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ

# ԵՂԲ. ԶԱՔԱՐ ԶՈՐՊԱԾԵԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԻՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱԲՈՐԸ

Սգակիր եղբայր մը  
ՊՈՒՐԾ ԳՍՈՒՏ

**5** Փետրուար 2020-ին, Լոս Անճելըսի մէջ իր մահականացուն կնքեց հաւատաւոր միութենական, Հ.Մ.Ը.Մ.ական Ֆուլթայոյի մեծ երախտաւոր՝ եղբ. Զաքար Զորպաճեան: Եղբայր մը, որուն անունը շուրջ քառորդ դար կապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին եւ անոր Ֆուլթայոյի մարզաձեւին: Եղբ. Զաքար եղաւ անխոնջ նուիրեալ մը երիտասարդ Ֆուլթայոյիսաներու պատրաստութեան գործին: Մինչեւ Մ. Նահանգներ հաստատուիլը, ան համբերատարութեամբ եւ ժրջանութեամբ զբաղեցաւ մասնաճիւղին երկրորդական թէ՛ ներկայացուցչական խումբերու աշխատանքներով եւ ախոյեանական տիտղոսներու նուաճումներով:

Եղբ. Զաքար Զորպաճեան մահացաւ 92 տարեկանին, երեք քառորդ դարու կեանք մը ապրելով Հ.Մ.Ը.Մ.ին հետ, Հ.Մ.Ը.Մ.ին համար: Մեծ եղաւ իր ուրախութիւնը իրեն այնքան սիրելի միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն: Ուրախացաւ եւ գօտեպնդեց նորերը, որպէսզի ընթանան իր ճամբէն՝ միութենական նուիրումի եւ ազգային ծառայութեան ճամբէն: Իրեն համար Ֆուլթայոյը եղաւ միջոց՝ նորահաս սերունդներուն հայեցի դաստիարակութիւն ջամբելու, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ մեծ դպրոց, որմէ շատ բան սոր-



վեցաւ եւ որուն շատ բան տուաւ ան՝ գիտակցական իր կեանքին ամբողջ ընթացքին:

Եղբ. Զաքար Զորպաճեան կը ծնի 1928-ին, Պուրճ Համուտ, Լիբանան: Հ.Մ.Ը.Մ.ին ան կ'անդամակցի 1945-ին, իբրեւ երէց սկաուտ: Երկու տարի իր ծննդավայր Թրատ թաղամասի ըսկաուտ խմբապետի պաշտօնը վարելէ ետք, 1951-ին ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան անդամ եւ 25 տարի (1951-1966, 1969-1972, 1978-1979, 1983-1984) մաս կը կազմէ մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն, իբրեւ Ֆուլթայոյի յանձնախումբի ներկայացուցիչ, փոխ ատենապետ եւ երկու շրջան՝ ատենապետ

(1978-1979, 1983-1984), կարեւոր ներդրում ունենալով մասնաճիւղին յաջողութիւններուն մէջ: Այս միջոցին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի Ֆուլթայոյի ներկայացուցչական խումբը չորս անգամ կը շահի Մեթնի ախոյեանութեան բաժակը, ութ անգամ՝ Լեռնալիբանանի առաջնութիւնը եւ միջ-մասնաճիւղային մրցաշարքներու կը խլէ բազմաթիւ բաժակներ: 1963-ին խումբը մինչեւ իսկ կը բարձրանայ Լիբանանի Ֆուլթայոյի Ա. դասակարգ:

Եղբ. Զաքար Զորպաճեան 17 տարի մաս կը կազմէ Ֆուլթայոյի Լեռնալիբանանի ֆետերասիոնին՝ արժանանալով իր արաբ գործակիցներու վստահութեան եւ անվերապահ յարգանքին:

1960-1970-ականներուն, Լեռնալիբանանի նահանգապետին կողմէ ան կը նշանակուի նահանգի երկրորդական վարժարաններու Ֆուլթայոյի մրցաշարքի կազմակերպիչ եւ ընդհանուր պատասխանատու, որուն իբրեւ արդիւնք՝ ան կ'արժանանայ Լիբանանի օրուան նախագահ Սլէյման Ֆրենժիէի շքանշանին: 1967-1984, Լիբանանի ներքին գործոց նախարարութեան կողմէ ան կը նշանակուի Պուրճ Համուտի քաղաքապետարանի Ֆուլթայոյի դաշտի յանձնախումբի անդամ, հսկելու նորաշէն եւ արդիական դաշտի հոգածութեան ծրագիրներուն եւ պիւտճէին:

Ֆուլթայոյին անկախ, եղբ. Զորպաճեան կը գործէ նաեւ աթլետիզմի մարզին մէջ: 1955-ին, առաջին անգամ ըլլալով ան կը կազմակերպէ Պէյրութ-Պուրճ Համուտ վազքի մրցաշարքը, իսկ 10 տարի շարունակ կը կազմակերպէ Պուրճ Համուտի վազքի մրցաշարքը: Ի պաշտօնէ, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի եւ



Պուրճ Համուտի մասնաճիւղերու պատուիրակութիւններուն հետ կը ճամբորդէ գանազան երկիրներ՝ Եգիպտոս, Քաթար, Յորդանան, Սուրիա: Յորդանան այցելութեան ընթացքին կը ծանօթանայ Հիւսէյն թագաւորին եւ կ'արժանանայ անոր թագաւորական շքանշանին:

Միութենական երկարամեայ իր գործունէութեան համար, եղբ. Չորպանեան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ կը պարգեւատրուի միութեան «Ծառա-յութեան» շքանշանով:

1984-ին, ան մեծ դեր կ'ունենայ Պէյրութէն Լոս Անճելըս այցելող եւ Քալիֆորնիա ապրող ֆուլթայոյի վեթերաններու միջեւ յիշատակելի մրցումներու կազմակերպման, որոնք նախաքայլը կը հանդիսանան հետագային Լոս Անճելըսի մէջ

կազմուելիք ֆուլթայոյի վեթերաններու խումբին:

Եղբ. Չորպանեան 2003-ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը պարգեւատրուի միութեան «Արտակարգ» շքանշանով, իսկ 2009-ին՝ Նաւասարդեան 34-րդ մարզախաղերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ կը հռչակուի տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»:

Իր մահով կ'անհետանայ վերջին ներկայացուցիչներէն մէկը Հ.Մ.Ը.Մ.ի ոսկեայ սերունդին, որ դաշտերու վրայ յաղթանակներու հպարտութիւն, իսկ դաշտերէ դուրս ինքնանուրումի գիտակցութիւն տուաւ իր ժողովուրդին, «Բարձրացո՛ւր՝ բարձրացիր» նշանաբանին ամբողջական հաւատարմութեամբ:



## ԵՂԲ. ԿԱՐՕ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ

Եղբայր մը  
ՊԵՅՐՈՒԹ

**Տ**Մայիս 2020-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը կորսնցրուց իր շրջանի հաւատաւոր անդամներէն, 2002-ի

«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Կարօ Գազանճեանը՝ «Ըստից»:

Եղբ. Կարօ Գազանճեան ծնած է Հայկազ: Նախնական ուսումը կը ստանայ Ժեզուիթներու, ապա՝ Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ: Փոքր տարիքին կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Հայկազի մասնաճիւղին իբրեւ սկսող, սակայն յատուկ սէր ունենալով մարզանքի հանդէպ, միութենական իր կեանքը կը շարունակէ իբրեւ մարզիկ, նախընտրելով թեթեւ ակումբ (վազք) ու ֆուլթայոյ:

1948-ին, եղբ. Կարօ ընտանիքին հետ կը փոխադրուի Պէյրութ, Լիբանան, ուր ուսումը կը շարունակէ Ազգ. Մ. Նշան վարժարանին մէջ, իսկ մարզական կեանքը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի «Մայր Հայաստան» ֆուլթայոյի երկրորդական խումբին, ապա՝ Ա. խումբին մէջ:

Այնուհետեւ, պասքեթպոլի մարզաձեւ ուղղուելով, եղբ. Կարօ կ'արձանագրէ մեծ յաջողութիւններ եւ կը հրաւիրուի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի պասքեթպոլի Ա. խումբ, որուն խմբապետը կ'ըլլայ երկար տարիներ: Քանի մը տարուան փայլուն խաղարկութենէ հետք, ան կը հրաւիրուի տեղական, միջ-արաբական եւ այլ երկիրներու մրցումներուն եւ կը ձգէ մեծ տպաւորութիւն:

Պասքեթպոլին առընթեր, եղբ. Կարօ յաջողութիւններ

կ'արձանագրէ վազքի մէջ, որուն համար 1957-ին ան կը հրաւիրուի Լիբանանի ազգային խումբ, ուր կը մարզուի նշանաւոր մարզիչ Իվան Փիսիաքեսի շունչին տակ: Վերջինը նկատելով եղբոր մարզական բարձր կարողութիւնները, զայն կ'անուանէ «Լիբանանի Զաթոփէք»ը, որ այդ օրերուն վազքի աշխարհի ախոյեանն էր:

1972-ին, եղբ. Կարօ Լիբանանի կրթութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ կը վկայուի իբրեւ պասքեթպոլի իրաւարար, իսկ 1982-ին կ'ըլլայ միակ հայն ու Հ.Մ.Ը.Մ.ականը, որ կ'արժանանայ միջազգային իրաւարարի տիտղոսին:

Հակառակ իրաւաբանութեան մէջ մասնագիտացած ըլլալուն, եղբ. Կարօ կը նախընտրէ մարզական աշխարհը գատել իբրեւ կեանքի ասպարէզ: 1961-1989, իբրեւ մարզանքի ուսուցիչ, ան կը ծառայէ Համազգայինի Նշան Փալանճեան ձեմարանին, Պէյրութի Հայ Աւետարանական Քոլէճին, Ազգ. Զաթալպաշեան վարժարանին եւ Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճին:

Երեք տարի ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան անդամ: 1983-ին կ'ամուսնանայ Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան Քոլէճի իր պաշտօնակիցներէն Մարթոթաթիանի հետ եւ կը բախտաւորուի երկու զաւակով:

1989-ին, եղբ. Կարօ ընտանիքին հետ վերջնականօրէն կը հաստատուի Մ. Նահանգներ եւ երկար տարիներ, իբրեւ մարզանքի ուսուցիչ, կը պաշտօնավարէ Ազգ. Սրբոց Նահատակաց Ֆերահեան վարժարանին մէջ:

Առ ի գնահատանք իր բեղուն գործունէութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը 2002-ին իրեն կը շնորհէ տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը:

# ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ՀԱԾԻՆԱԶՁԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



**Յարուք Չեթիճեան  
ՊԵՅՐՈՒԹ**

**Տ**երեւաթափը այս անգամ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքէն խլեց եղբ. Սարգիս Հաճինազարեանը, որ լիբանանահայ կեանքի քանի մը բնագաւառներու վերջին ներկայացուցիչներէն էր: Ան եղած է հեծերարչակի մարզիկ եւ երկրորդ սերունդի սկաուտ խմբապետ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի երէց փաղանդի (1966-ին): Ասպարէզով այր մարդոց հազուատի համբաւաւոր վաճառականներէն մէկն էր, Պէյրութի երբեմնի կեդրոնական շուկաներէն «Սուք Սըրսոք»ի եւ «Սուք Ալ Էրմէն»ի մէջ (հայկական շուկայ):

Պէյրութ քաղաքին կեդրոնը, իրեւ դարերու պատմութիւն ունեցող վաճառականական հին քաղաք, դիմագիծը կորսնցող Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք որդեգրուած վերաշինութեան անխոհեմ ու հակամշակութային ծրագիրով: Նախապէս ամբողջ ժողովուրդին պատկանող շուկան վերածուեցաւ կերպարանափոխուած «մեծահարուստներու» շուկայի, զբօսավայրի եւ բնակավայրի, ու շատերուն նման՝ եղբ. Սարգիսին խանութը եւս ոչնչացաւ: Այսօր դժուար է նոյնիսկ գտնել անոր տեղը: Եղբ. Սարգիսին հետ նաեւ կը կորսուի այդ իւրայատուկ շուկայի աւանդութեան եւ պատմութեան վերջին ներկայացուցիչներէն մէկը:

Ձուարճախօս եղբ. Սարգիսը հազար ու մէկ կատակներով համեմուած պատմութիւններ ունէր այդ շուկայի օրերէն: Հետագային, երբ Պուրճ Համուտի մէջ հաստատեց իր վաճառատունը, իր հին շուկայի տեղացի յաճախորդներէն ոմանք

գտան զինք, եւ ես ահանատես եղայ անոնցմէ մէկուն մեծաքանակ գնումին, իրեն տուած յաճախակի այցելութիւններէս մէկուն ընթացքին:

Միշտ կատակասէր, իր բարեւին անպայման կատակ մը կամ դրուագ մը կ'ընկերանար, ըլլայ միութենական անցեալէն կամ շուկայէն: Միութենական աշխատանքներու ընթացքին գործը բարդացնողները եւ մանրուքներով զբաղողները չէր հանդուրժեր: Իր բազմամեայ փորձառութեան ապաւինելով, յարմարագոյն լուծումը կ'առաջարկէր՝ կարճի կապելով օրակարգը: Շատախօսները չէր սիրեր, թէեւ ինքն ալ ըսելիք շատ կ'ունենար, սակայն ընդհանրապէս՝ զուարճալի:

Սկաուտական «Միշտ պատրաստ» նշանաբանը իւրացուցած՝ եղբ. Սարգիս տարիներու դադարէ ետք, ժամանակ մը սիրով մաս կազմեց իրմէ բաւական կրտսեր անդամներով Շրջանային Սկաուտ-Խորհուրդին՝ ստանձնելով նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբի անդամներու տարազներու ծանր պատասխանատուութիւնը, որ կ'ենթադրէր ժողովի օրէն գատ, շաբաթը քանի մը անգամ, առանց գանգատի, ներկայ գտնուիլ կեդրոն՝ «Յակոբ Տէր Մեղրոնեան» թատերասրահի առանց վերելակի շէնքին եօթներորդ յարկը եւ ընկերանալ շեփորախումբի ելոյթներուն, հօր մը նման հոգալով տղոց կարիքները:

Վարձքդ կատար, եղբայր Սարգիս:



# ԵՂԲ. ԿԱՐՕ ՏԷՄԻՐԾԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Վիգէն  
Գրիգորեան  
ՅԱԼԷՊ**

**Վ**երջերս ցաւով իմացանք մահւան լուրը Հ.Մ.Ը.Մ-ի

հայկալի ֆութպոլի մարզական կեանքի ծանօթ դէմքերէն եղբ. Կարօ Տէմիրճեանի՝ «Փարլախ Կարո»յի: Մահը պատահած է Յունուար ամսուն, Մոնթեպելլոյի մէջ, Մ. Նահանգներ:

Անձնապէս եղբ. Կարոյին ծանօթացած եմ 1980-ական թուականներուն, երբ ան ստանձնած էր Հայկալի ֆութպոլի ներկայացուցչական խումբին պատասխանատուի պաշտօնը: Այդ ժամանակ խումբը նահանջած էր Բ. Դասակարգ եւ մեծ սերնդափոխութիւն կատարուած էր խումբին մէջ: Եղբ. Կարօ



րօն իր խառնուածքով բաւական տիրական ներկայութիւն էր շրջապատին մէջ, դժուարութիւնները յաղթահարելու տոկոսնութեամբ օժտուած անձնաւորութիւն մը, որ... կը հալածէր գործը, կը լուծէր մարզիկներու նոյնիսկ անձնական, դպրոցական եւ գործի հետ կապուած խնդիրները:

Իր նախանձախնդիր աշխատանքը շատ անգամ կը նեղացընէր շրջապատի մարդիկը: Ան երբեք չէր ազդուեր ու չէր հակադարձեր պոռոտախօսներուն, որոնք նախանձով կը հետեւէին իրեն: Լուռ ու մունջ, առանց տրտնջալու, եղբ. Կարօ թուած էր իր գործի շարունակականութեան եւ յաջողութեան:

Եղբ. Կարօ երբեք չէր քաջալերեր մարդոց հասցէին արտայայտուողները, ընդհակառակն՝ ան կ'ուզէր որ մարդիկ աժան գրպարտութիւններով չտարուին, այլ՝ կողմ ըլլան հաւաքական աշխատանքին: Գործի մարդ էր ան եւ ոչ՝ խօսքի:

Ան ներկայութիւն էր Ֆոլթպոլի յանձնախումբի բոլոր աշխատանքներուն, փոքր ու մեծ խումբերու գործունէութեան: Եղբ. Կարօ իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէր հանգանակութեան գործին: Գործատեղիին շրջափակին մէջ

յաճախ կը հաւաքէր յանձնախումբի կրտսեր եղբայրները: Խնայողասիրութիւնը սկստական շարքերէն ժառանգած ըլլալով, ան պարտականութիւն կու տար կրտսեր եղբայրներուն պատրաստել մարզիկներու ճամբորդութեան հրամցը: Ելլիք կերակուրը: Խնայելու եւ աշխատանքի սէրը կ'արթնցընէր եղբայրներու մէջ:

Կարելի չէր չտպաւորուիլ եղբ. Կարօյի առաքինի Հ.Մ.-Ը.Մ.ականի տիպարով:

Իրեն գործակից եղբայրներու վկայութեամբ, մարդիկ նախանձի իբրեւ արդիւնք՝ կ'ուզէին չուքի մէջ ձգել եւ նսեմացընել եղբ. Կարօյին եզակի աշխատանքը, բայց իրականութիւնը կը մնար իրականութիւն:

Եղբ. Կարօ աշխատասիրութեան եւ ծառայասիրութեան օրինակ դարձաւ բոլոր այն տղոց, որոնք ճանչցան ու գործունեցան իրեն հետ ու ան վայելեց անոնց յարգանքը, իբրեւ նուիրեալ երէց եղբայր:

Յիշատակդ անթառամ պիտի մնայ մեր սրտերուն մէջ, իրապէ՛ս աննման եղբ. Կարօ Տէմիրճեան:

Հողը թեթեւ գայ շիրիմիդ:

# ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ՝ ԵՂԲ. ՊԵՐՃ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ

## Մարլէն Տաքսեան ԱՅԹԵՔ

**Մ**իլուք, հայութիւն, հայկական կառոյցներ գոյութիւն պիտի չունենային առանց Պերճ Գրիգորեանի նման անձերու գոհաբերութեան, նուիրուածութեան:

Չենք կրնար Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատմութիւնը մեր ապագայ սերունդին սորվեցնել, առանց անդրադառնալու եղբ. Պերճ Գրիգորեանին:

Եղբ. Պերճ Գրիգորեան ծնած էր 1928-ին, Կրետէ կղզիի Իրաքլիոյ քաղաքը, ուր ծնողքը 1922-ին Փոքր Ասիոյ Զմիւռնիայէն հասած է գաղթական:

1929-ին ընտանեօք կը փոխադրուին Փիրէա, Գոքինիոյ հայաշատ թաղամասը: Կը յաճախէ Հ.Կ.խաչի Զաւարեան վարժարանը, ուրկէ կ'ըլլայ շրջանաւարտ:

Մանուկ տարիքէն կը միանայ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին: Համաշխարհային պատերազմի ընթացքին պարտադրուած դադարէն ետք, 1945 թուականին, եղբ. Կարպիս Տէր Մեսրոպեանին հետ կը համախմբեն Գոքինիոյ թաղամասի երիտասարդներն ու փոքրերը եւ կը վերակազմեն Հ.Մ.Ը.Մ.ի սկստութիւնը: 1946-1947 եւ 1949-ին Գոքինիոյ սկստական շարքերու խմբապետի, Առաջնորդի եւ մեծ թիւով վարիչներու արտագաղթը Յունաստանէն դէպի Հաստան, Արժանիին եւ այլուր, ժամանակաւոր արգելք կը



Եղբ. Պերճ Գրիգորեան Բեֆալոնիոյ մէջ, 1953-ի ահաւոր երկրաշարժէն ետք, փլատակներու մէջ կը հսկէ Հ.Մ.Ը.Մ.ի սկստութիւնը փրկութեան գործին:

Հանդիսանայ աստիճանաւորական ցանցի կազմութեան: Այստեղեւորէ, մնացողները մեծ հաւատքով կը վերակազմեն սկստական շարքերը եւ խմբապետութիւնը կը ստանձնէ եղբ. Պերճ Գրիգորեան:

Օգոստոս 1953-ին, երբ Քեֆալոնիա կղզիի երկրաշարժին

ցաւալի լուրը կը տարածուի, եղբ. Գրիգորեան խումբ մը սկաուտներու հետ կը շտապէ կղզի, կատարելու սկաուտական պարտականութիւնը, այսինքն՝ հասնիլ օգնութեան:

Հայ սկաուտներու փրկարար խումբը անմիջապէս գործի կ'անցնի: Փլատակներու տակէն կը յաջողին փրկել տեղւոյն հիւանդանոցի վիրաբուժական գործիքները, ինչպէս նաեւ՝ հիւանդանոցին գանձը:

Նոյն ժամանակ, եղբ. Պերճ Գրիգորեան, իր կեանքը վտանգելով, փրատակներու տակէն կ'ազատէ ծերունի գոյգ մը եւ փոքրիկ մը:

Իր այս արիութեան համար եղբայրը կ'արժանանայ Յունաստանի զինեալ ուժերու «Պատուոյ» շքանշանին:

Եղբ. Պերճ սկաուտական իր գործունէութիւնը կը շարունակէ մինչեւ 1970 եւ անկէ ետք կը դադրի սկաուտական ընթացիկ աշխատանքներէ, սակայն միշտ նեցուկ կը կանգնի Հ.Մ.Ը.Մ.ին:

1980-ական թուականներուն, երբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը եղբոր կարիքը կ'ունենայ, ան առանց վարանումի թեւերը սոթթելով կ'անցնի աշխատանքի, պատրաստելու համար նոր սերունդը:

1986-ին, եղբ. Պերճին առաջնորդութեամբ սկաուտական պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական երրորդ բանակումին, Անգլիա:

Եղբ. Պերճ Գրիգորեան միշտ եղաւ տիպար եւ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական, իր երկարամեայ գործունէութեամբ օժանդակեց միութեան եւ օգտակար հանդիսացաւ անոր ամ-

րապնդման, զարգացման եւ վերելքին: Միշտ նպատակ ունենալով կերտել եւ դաստիարակել ապագայ սերունդը, հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը արժեւորելով եղբոր նուիրական ոգին, զայն կը պարգեւատրէ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով, իսկ 2003-ի Փետրուարին, Շրջանային Վարչութեան առաջարկով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, եղբ. Պերճ Գրիգորեան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին:

Միրելի՛ եղբայր Պերճ, յիշատակդ անմառ պիտի մնայ: Հողը թեթեւ ըլլայ վրագ:

**ԳՈՅԺ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան նախկին անդամ եւ «Արժանեաց» շքանշանակիր՝

**ԵՂԲ. ՕՆՆԻԿ ՇԱՆԿԱՅԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 26 Յունուար 2019-ին, Աթէնքի մէջ, Յունաստան:



PinkKimberley.com.au



*Diamonds beyond rare*

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.




## ԵՂՔ. ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒՐՈԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

18-19 Յունուար 2020-ին, Քիեի մեջ տեղի ունեցավ Համաշխարհային Սկաուտական Շարժումի Եւրոասիական տարածաշրջանի արտահերթ ժողովը, ուր Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ Եղբ. Բագրատ Եսայեան ընտրուեցաւ տարածաշրջանի կոմիտէի նախագահ: Իր ընտրութեամբ, ան ի պաշտօնէ մաս կազմեց Համաշխարհային Սկաուտական Շարժումի Կոմիտէին:



Յայտնենք, որ Օգոստոս 2014-ին, Եղբ. Բագրատ Եսայեան Համաշխարհային Սկաուտական Շարժումի 40-րդ ընդհանուր ժողովին, Սլովենիոյ մէջ, երեք տարուան համար ընտրուած էր սկաուտական համաշխարհային բարձրագոյն հեղինակութիւնը նկատուող կոմիտէի անդամ: Եղբ. Եսայեան նաեւ երկու շրջան՝ 2011-2015 եւ 2015-2019 ընտրուած է Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:



## Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ՄԸ ԿԸ ՍՏԵՂԾԷ ՄՈՐՍԻ ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ

Կ'ուզէ՞ք մորս սորվիլ:  
Եթէ այո, կրնաք ներբեռնել բըջիջային հեռաձայններու յատուկ նոր ծրագիր մը, որ պատրաստուած է Հ.Ս.Ը.Ս.ական Եղբ. Սերուժ Խանճիհանեանի կողմէ: Եղբայրը անդամ է Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Պուրճ Համուտի մասնաճիւղի «Վիզէն Չաքարեան» երեցական փաղանգին:

Եղբոր պատրաստած ծրագիրին կարելի է ծանօթանալ հետեւեալ յղումով.-

<https://play.google.com/store/apps/details?id=com.seroujkh.mor.seacademy>

## ԵՒՐՈԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան եւ Եւրոասիական տարածաշրջանի սկաուտական գրասենեակի միացեալ կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ երկօրեայ սեմինար մը՝ «Երիտասարդական ծրագիր» խորագիրով:

Սեմինարը կատարուեցաւ Հ.Ս.-Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի կեդրոնին մէջ, ներկայութեամբ համաշխարհային սկաուտութեան չորս դասընթացավարներու:

Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.էն սեմինարին մասնակցեցան 36 վարչականներ եւ աստիճանաւոր սկաուտներ:

Սեմինարին զեկուցումները տեղւոյն վրայ թարգմանեցին քոյրեր Լիլիթ Չաքարեան եւ Նարէ Խլղաթեան:



## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՌՅԱՆՑ ԽԱՉՔԱՌԸ

Ո՞վ չի գիտեր, որ Հ.Ս.Ը.Ս.ական սկաուտը ստեղծագործ է:

Առցանց գործունէութեան օրերուն, Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի ժընտյտէի մասնաճիւղի «Սօւէ Մայրիկ» փաղանգին պարմանուիները, իրենց խմբապետուի քոյր Կասիա Էճիտեանին գլխավորութեամբ, կազմեցին սկաուտական ամենամեծ խաչքառը:

Այս մարտահրաւերին ընթացքին պարմանուիները վերապրեցան սկաուտական քաղցր յիշատակներ եւ հաճելի մթնոլորտ, ինչպէս նաեւ՝ զարգացուցին սկաուտական իրենց բառամթերը:

Իւրայատուկ այս խաչքառին ծանօթանալու համար այցելել մասնաճիւղին դիմատետրի էջին հետեւեալ հասցէն.-

<https://www.facebook.com/275515385962543/posts/1464193793761357/>

